շեղութեամբ առ 400 հազարամէդր, և կամ 0<sup>o</sup>.000225 շեղութեամբ առ 1 մէդր: Արդ Բայ գետն Դուրինէն յԱռրիական Կ'իջնէ կրկին շեղութեամբ քան զԱռրիականի շեղութիւնն՝ որ կը սկսի Վենետուկէն մինչեւ Բելակոզա. և Լոմպարտիոյ գաւառն շեղած է Ալպեանց ստորոտէն մինչև ցԲյ 0<sup>o</sup>.002733 առ 1 մէդր, ուստի Առրիական ծովուն յատակն աւելի հարթայատակ է քան զԱռմպարտիոյ գաշտավայրը: Ատանդեան ծովուն յատակն ալիր ընդարձակութեան նայելով կրնայ հարթայատակ կամ միաձև լսուիլ, վասն զի չափազանց խորութիւն և բարձրութիւն չունի, և քիչ տեղ կը բարձրանայ ջրին երեսէն վեր, ինչպէս ՚ի կղզիս Ատորեան, Գանսորեան, Մատերա և յԻսլանտա, վասն զի կղզիք ալ ովկիանոսի լերտանց գլուխք կամ բարձրաւանդակք են. (Ձև 20):



Ձև 20. Ատորեան կղզն:


47. Փոսիորականորյիւն. — Փոսիորականութիւն ըսելով կը հասկցուի այն լոյսն՝ որ գիշեր ժամանակ ծովու ջրի մէջ կը տեսնուի՝ երբ նաև մը անցնի և կամ ալիք ժայռի մը զարնուի և կամ թիակով մլուին: Երբեմն այնպէս սաստիկ է այս լոյսն, որ երբ նաև մը ալիքներ ձեղքերով կ'ընթանայ, կարծես թէ կարմիր և կապոյտ բոցերու մէջ յատաջ կը խազայ. Երբեմն ցանցաւ կը տեսնուի այս լոյսն, և երբեմն խումբ կը ժողովուին կրակէ դաշտ մը ձեւացընելով. այս երևոյթս մասնաւու

րապէս Հաստրակածին տակ և Հնդկաստանի ծովուն մէջ զգալի է և տեսական, բայց կը հանդիպի նաև Շուետի ծոցին, Արաբիոյ ծովուն և Վենետիկյ ջրանցից մէջ, և այն:

Հին ատենէ՝ ՚ի վեր այս երևոյթս ծանօթ էր, այլ միայն նոր գարուս մէջ կրցան բացատրել: Երկենալիքի, Քուրի և Կէ-մարտի հետազոտութեամբ՝ ապացուցին բնադէտք՝ որ այս ե-րևութիս պատճառք ծովային ջրոց մէջ լողացող անթիւ մանր կենդանիք են, որոնք ամենանորը և տարածական հե-ղուկ մը կ'արտադրեն և լողալով ծամածուռ կերպով կայծո-սիկ կենդանւոյ պէս լոյս կ'արձակեն. ինչպէս Հնդկաստանի ծովուն մէջ Փինկմնն նաւապետն ճանապարհորդելով տեսեր և անցեր է 40 հազարամէդր լայնութեամբ փոսփորական լու-սով ծածկուած տեղէ, որ զիշեր ատեն ձեան գաշտի նմանու-թիւն ունի եղեր: Այս կենդանւեաց երկայնութիւնն 15 հարի-րորդամէջը է, թափանցիկ և մածոցիկ նիսթով պատած: Բայց երբեմն փոսփորականութիւնն ծովային ջրոց մէջ եղած գործարանաւոր նիսթերէն ալ յառաջ կու գայ, լուսացայտ խիժայնութեան նման, որ ապականութեան մօտ եղած ձկանց մաշկերէն գուրս կը թորի: Պէզըրէլ և Պրեշէ դիտած են այս-պիսի փոսփորականութեան գեղեցիկ երևոյթներ Պրենդայի ջրանցից մէջ Վենետիկյ մօտ:

48. Ծովային ջրոց գունաւորութիւնն. — Ծովուն ջրոց գոյնն՝ գէթ արտաքսապէս՝ շատ փոփոխական է. ըստ այլ և այլ գի-տողաւթեանց՝ ովկիանոսի ջրոց գոյնն սովորաբար մութ կա-պոյտ է. երբ օդն հանդարտ ըլլայ և ծովուն երեսը խաղալ ջուրն բաց կապօյտ գոյն կ'առնու. իսկ եթէ ամպամած ըլլայ օդն՝ այն ատեն ծովին մութ կանաչ գոյն կը ստանայ: Տեղա-կան հանդամանքն ևս երբեմն պատճառք են ծովուն ջրոց գու-նաւորման, ինչպէս երբ ծովուն յատակի ստավերն կամ սպի-տակ՝ կամ գեղին և կամ կարմիր ըլլան. երբեմն մէջի գրտ-նուած կենդանիներէն ևս կը գունաւորի ծովուն ջուրն, ինչպէս կը տեսնուի Պարոն Դերսասէի քննութիւններէն, զոր հա-զորդեց Գաղղիոյ գիտութեանց Ճեմարանին յամին 1854, գեկ-տեմբեր ամսոյն մէջ: Այս գունաւորութիւն յառաջ կու գայ կար-միր ծովուն և Ճարոնի ծովուն մէջ, ծովային սամենափարը մա-մուռներէ:

49. Մակրերացոյքիւն և տեղատուրիւն. — Ամէն օր կը տեսնենք որ ծովուն ջուրն կ'աճի կը բարձրանայ մինչև վեց ժամ, և այնչափ կ'ուսուի ու կը շատնայ՝ որ ծովեզերը կը ծածկէ, և գետոց բերաններուն մէջ մտնելով անոնցմէ եկած ջրեր կ'ար-դելու ու դէպ 'ի յետս կը մրէ, մեծամեծ վեսա պատճառելով. այս աճումն կ'ըսուի մակրերացոյքիւն: Վեց ժամ մակրնթաւ-ցութիւն ըլլալէն ետև՝ ծովուն ջուրն քառորդի մը չափ կը հանդարտի, ետքը կը սկսի ցածնալ դէպ 'ի յետս քաշուելով. այն ատեն գետերն ալ կը սկսին իրենց առաջին սրճնթացու-թեամբ ծովը թափիլ: Վեց ժամ ալ այս ցածնալն կը տեէ, և այս կ'ըսուի տեղատուրիւն: Այս երևոյթս ամէն տեղ ալ



Ձև 21. Կոթող և Աղեղ 'ի ծովափն հորմանտիոյ:

կը պատահի, բայց խորունկ ծովերուն վրայ այնչափ գգալի ըլլ-ար. իսկ ծանծաղ տեղուանք այնպէս զգալի է՝ որ ծովուն յատակն ալ կը բացուի, և ահաւոր տեսարան մը կ'ընծայուի տեսողաց: Զոր օրինակ եթէ այս տեղատութեան և մակրն թացութեան ժամանակ գտնուելու ըլլանք՝ ի Պալուներ Գաղ-ղիոյ կամ 'ի Ֆոլքէտոն Անդզիոյ, կամ Վենետիկյ ծոցը, կամ 'ի Հոլանտա և 'ի Նեապոլիս, կը տեսնենք ծովեզերը ցամքած, և նաւակներ, նաւեր և շոգենաւք՝ ցեսիփ վրայ յեցած, և իսկոյն կը հարցընենք՝ թէ ո՞ր է ծովին. և երկու երեք մզոններով հե-ռու կը ցացընեն մեզի. և իրաւցընէ քիչ մը ժամանակ ան-ցնելէն վերջը ահազին շառաշմաբ կը սկսի յառաջ գալ ծովին, և իր այլքներով կը գողացընէ երկիրս և շիշակայ շէնքերը, ինչպէս կը տեսնուի 'ի Ձևան 18, 19:

Արդ այս շարժումն օրը երկու անգամ կը հանդիպի, այս ինքն 12 ժամ և 50 վայրկեան կը քչէ, բայց միշտ մի և նոյն ժամանակ չի պատահիր, այլ յիսնական վայրկեան ետ կը մը նայ: Ավկլընթացութիւնն և տեղատութիւնն ամէն անգամ նոյն սասատկութեամբ շըլլար. երբոր լուսինն արեւուն հետ զուգընթաց է՝ այս երևոյթու շատ մեծ կ'ըլլայ. իսկ լուսնի քառորդներուն ատենը՝ պղտիկ է: Ամենչն մեծ մակլնթացութիւնք ու տեղատութիւնք՝ գիշերահաւասարից, նոր լուսնին ու լուսմն լուսնին ատենները կ'ըլլան: Այրեցեալ գոտույն տակը տաելի մեծ կ'ըլլան այս երեղիթքս, և որչսի որ դէպ 'ի թեւոս երթանք՝ կը նուազին: Ավկլնթացութիւնն և տեղատութիւնն մեծամեծ ալիքներ ձևացընելով մեծամեծ փոփոխութիւններ կը բերեն ծովեցերեայ տեղեաց, և մասնաւորապէս ժայռից և գուրս ցըցուած հրուանդանաց, երբեմն անջատելով, երբեմն կամարներ ձևացընելով և երբեմն բուն ցամսքէն խկաբանելով, (Ձև 20, 21):

50. Ծովային հոսանք. — Բաց 'ի պարբերական շարժմանէն որ է մակլնթացութիւնն և տեղատութիւնն, ծովին ունի նաև ուրիշ շարժումն ալ, որով այլ և այլ հոսանք կը ձևանան ծովուն խորը, և գետոց նման կ'ընթանան երբեմն ամենախորը, երբեմն ծովուն երեսը, ոմանք Ասուուցեալ ծովէն դէպ 'ի Հասարակած կը զիմեն, և ոմանք ալ հակառակ գիրքով: Երեւելի բնագէտք և նաւասկետք Դիւրերուէյ, Քուրք, Պողէն, Շումագուդ, հաւաստեցին անտարակոյս կերպով՝ որ այս հոսանքներն յառաջ կու գան մակլնթացութենէ, տեղատութենէ, հողմոց ազդեցութենէ, երկրիս թաւալմանէ և զիմաստորապէս անհաւասար տարութենէ:

51. Այլ և այլ հոսանք. — Ատլանդեան ովկիանոսի հաստատուն հոսանաց ամենէն կարեւորն է այն հոսանքն՝ որ Հընդկաստանի ծովէն ելեւով Բարեյուսոյ հրուանդանը կը շշափէ և կ'երթայ Ավրիկէի եզերքն՝ մինչեւ 'ի Հասարակած, ապա անցնելով Ատլանդեան ովկիանոսէն և հանելով Սուրբ Ռոքուն հրուանդանը՝ կը շարունակէ Մէքսիկոյի և հիւսիսային Ամերիկայի Միահանգանգաց ծովեղերքին երկայնութեամբ՝ մինչև Կոր երկիր, և ասկից կ'ուղղուի արևելեան կողմն՝ դէպ 'ի հին երկիրը: Այս հոսանքի ջրոց մէկ մասն կը դառնայ հա-


րաւային կողմն Ավերիկէի ծովափանց երկայնութեամբ, միանալու համար դէպ 'ի Հասարակած՝ Բարեյուսոյ հրուանդանէն եկած հոսանքի հետ, և ապա դէպ 'ի Ամերիկա գառնալու համար. Ջրոց միւս մասն կը հանի Եւրոպից արևեմտեան ծովափոնքը, ուր երբեմն ամերիկեան հունտեր կը բերէ: Այս հոսանքի ջրոց Սերմութիւնն, զոր Հումպուլլ կը կոչէ գաղլ ջրոց ծովացեալ գետ, մեծապէս կ'օդնէ կիմայից քաղցրութեան, զոր կը վայելեն Եւրոպից ծովային երկիրներն:

Խաղաղական Ավկիանոսին մէջ կայ ահագին հոսանք մը, որ կ'ինչէ հակարջային բևեռէն դէպ 'ի Հասարակածն 160 աստիճան ունեցող միջօրէականին տակ՝ Բարիզու արևեմտեան կողմը, կը խոսորի քիչ մը դեռ արևեադարձ այծեղիլիր շասած և կ'երթայ կը շշափէ Փիլիփ ափոնքը, և կը շարունակէ մինչեւ Բերու և Կալաբրակոս կզզիքը. հոս կը խոսորի դէպ 'ի արևեմտեան կողմն և կ'երթայ Հասարակածէն մինչև Արփոյ ափոնքը: Այս թեւեռային հոսանքնէն յառաջ եկած արդինքն Ամերիկայի արևեմտեան ափանցը վրայ՝ բոլորովին հակառակ են Մէքսիկոյի ծոցէն եկած հոսանաց արդիւնքներէն, զորս կը պատճառեն յԵւրոպա: Այս հոսանաց բարեխառնութիւնն թերուի ծովափանց վրայ Յոնուազ է քան զծովու ջուրն, ուսկից որ կ'անցնի. և Կալաբրակոս կզզեաց մէջ Ֆիցրոյ նաւապետն տեսաւ որ կզզեաց մէկ կողմն, զոր թեւեռային հոսանքն կը շշափէ, ծովուն Սերմութիւնն 15° և կէս եր. մինչդեռ միւս կողմն ուր թեւեռային հոսանքն շիշօշափեր՝ ծովուն տաքութիւնն եր 26 աստիճան:

Կայ Երրորդ հոսանք մ'ալ որ կ'ինչէ Կրէննանտիոյ ափոնքներէն Ամերիկայի ափանց երկայնութեամբ, հետք մէկ տեղ ասուցյներու ահազին կտորուանք տանելով մինչև 'ի Նոր Երկիր և երբեմն աւելի հարսաւային կողմն:

Ուրիշ հոսանք մը Ատլանդեան ովկիանոսէն կը մտնէ Միջերկրական ծովը, որ Ավրիկէի հիւսիսային ափոնքէն անցնելով կը գառնայ ապա 'ի հիւսիս ընդ մէջ Կիպրոսի և Քարամանիոյ:

Ուրիշ աւելի արագ հոսանք մը կը մտնէ Աև ծովէն 'ի Միջերկրական ծով Տարտանելի Նեղուցէն, և շարունակելով իր Ընթացքը Եւրոպից հարաւային ափոնքներէն կը մտնէ



Ձեռապէսուրովին:

Արբիական ծովը, ուր շօշափելով Տալմացիա՝ Խատրիա մինչև Թրիեստ, ապա կը շեղի դէպ 'ի Վենետիկ և կը շօշափէ Խոալիսյ ծովափունքը մինչև Բուլիա, և կը գառնայ գարձեալ 'ի Միջերկրական ծով։ Միով բանիւ ուրիշ հոսանք մ'ալ Հիւսային ծովին Պալդիկ ծովը կը մտնէ։

32. Արագուրիւն ծովային հոսանաց իւրաքանչիւրն հաստատուն արագութիւնն մ'ունի, այլ սակայն երեւմն հակառակ կամ նպաստառ հոգմերէն կը փոփոխին։ Մեքսիկոյի ծոյին հոսանաց միջին երագութիւնն ըստ Հումպութի՛ է 10 հազարամէզդր՝ 24 ժամուց մէջ. Արբիկէի Հիւսային ծովափունքը շօշափալ հոսանաց երագութիւնն է 16 հազարամէզդր՝ 24 ժամուց մէջ. Արբիականի ծովիցերքը շօշափողն երագութիւնն է 6-6 հազարամէզդր է ժամու մէջ, Պալդիկ ծովուն հոսանքն աւելի արագ է համեմատութեամբ, վասն դի ժամուան մէջ 3-6 հազարամէզդր է։

33. Յորդուրիւն չուրց, յեղափոխուրիւնք. — Մարդուս հին ժամանակներէն սկսեալ մինչև հիմայ՝ շատ անգամ ծովու և գետոց ջրերն անկողինին փոխեր են այլ և այլ կերպով. այս երեսյթո՞յ յառաջ կու գայ երկրիս հաստատուն մասին բարձրանալէն և տեղ տեղ շարժելէն, որուն պատճառու ետքը պիտի բացատրենք։ Ամէն ջրոց յորդութեան և յեղափոխութեան ժամանակի ծավալ թօպացած է ջրէն դուրս ցըցուած երկիրներ՝ լի ժժմակներով, պարիսպներով, խեցեմորթներով, և ուրիշ կենդանեաց ու բուսոց մնացորդներով, զորս գետերն կը տանէին ջրոց մէջ այն ժամանակ, երբ վերսիշեալ երկիրներն կը նստէին կամ կը ձեւանային։ Այս ծովային մնացորդք ամէն տեղ կը գտնուին և ամէն բարձրութեանց վրայ, զոր օրինակ Խոալիսյը վրայ 'ի Սուրերկա, յԱստիճանա 'ի Պորդոնէդէ. յԱսիս 6000 մէզդր բարձրութեամբ կը հանդիսինք ստէպ այլ և այլ քարացած նշանաց. այսակէս նաև Ալպեանց վրայ 2000 մէզդր բարձրութեամբ, Պիրենեանց վրայ 3000 մէզդր բարձրութեամբ, և 'ի Հայկական պարս լերանց գրեթէ 4000 մէզդր բարձրութեամբ, և յԵրասխեան դաշտ կը գտնուին բրածոյ խեցեմորթք, որոց նման կամ արդ և 'ի ծովափունս Կասպից ծովուն. կը գտնուին նաև քարացեալ ստորէք 'ի Տաւրուսան լերինս, և մասնաւորապէս Կուկակացի ցմակացը։


54. Ծովուն երեսին անկիռիփոխորիւն . — Այսպիսի գործառանաւոր մարմնոց մնացորդք գտնուելով այլ և այլ բարձր տեղեր, հին բնագէտք հետեւուցին թէ ջրոց քանակին շատ տեւի էր ժամանակաւ քան թէ հիմայ, և թէ ծովուն մակերեւոյթն այն բարձր տեղուանքը կը համեսէր, և կամաց կամաց երկայն դարերու մէջ ցածցեր է: Սակայն ամէն եղած քննութիւնք և փորձք՝ զոր Ուրասալայի համալսարանն ընել տուեր է յամին 1731ին մասնաւորապէօն և այլ բնագէտք կը ցուցընեն գէթ մինչև պատմական դարը, թէ ծովուն երեսն անփոփոխ մնացած է: Եւ յիրաւի Միջերկրական նաւահանգստից տեղազրութիւնն զոր թողուցած է մեզի Պաւասանիս, բաղդատելով արդի տեղազրութեանց հետ՝ ամենաճիշտ կը գոտնենք, որով կը հաւաստի թէ գէթ քրիստոնէութեան առաջին դարուն ուր որ կը համեսէր ծովուն երեսն, այժմ ևս նոյն տեղն է: Բաց ՚ի աստի մարդկային ամենահին շնուածք որք կառուցուած են յեղերս ծովուց, վկայք են անժխտելիք՝ թէ ծովուն մակհաւասարութիւնն փոխուած չէ, ինչպէս կը տեսնուի ՚ի Պոմարէսպօլիս Միջերկրական ծոլուն մէջ Կիլիկիայ կողմերը, յորում գետ կանգուն են քսանէն աւելի Պոմարէսպի կառուցած տաճարին հրաշալի սիւներն, որոնք թաղուած են լեռնաց կողերէն վար իջած հողոց մէջ (Ձև 22): Կմանապէս ծովափնեայ աւանք և նաւահանգիստ յամենահին ժամանակաց հետէ մեծաւ մասամբ մի և նոյն տեղը կը գտնուին, ուր որ շիներ էին Եղիպտացիք, Ետրուրացիք, Կարբեդոնացիք, Հռոմայեցիք և Յոյնք, ինչպէս Տարենտոն (Ձև 23):



Ձև 23. Տարենտոն:

Սակայն ուրիշ կողմանէ ալ իրաւ է որ տեսնուած են այլ և այլ տեղեր ծովուն երեսին փոփոխութիւնը և ցածնալը,

զոր օրինակ ՚ի Կրէօնլանտիա, չորս դարէ ՚ի վեր երկիրն կը ցածնայ 200 մլն երկայնութեամբ . նոյնպէս ՚ի Փիլի, ՚ի Բորդուգալ, ՚ի նեղուցն Մեսինայի և յԱղթամար՝ յորում Գագկայ թագաւորին ապարանքն և երեւելի չէնքեր ջրի տակ գացած են, և կզզին ևս կամաց կամաց պիտի անհետանայ. նմանապէս Զուիցերիոյ երկիրն կը ցածնայ 1 ոսք 100 տարուան մէջ, և ՚ի Բացցուոլի՛ Սերապիս տաճարին հրաշալի սիւներն 4 մէջը ցածցեր են ծովուն երեսէն: Ասանց հակառակ ՚ի Բերու՛ երկիրն կը բարձրանայ, նոյնպէս Ուստասատանի կողմերը՝ Պալդիկ ծովին քիչ բարձրանալու վրայ է, այնպէս որ եօթներորդ և ութերորդ դարու տաեններն վկողանտիա անունով քաղաք մը կար, որ ծովին բաւական բարձր էր, յետոյ կամաց կամաց ծովը բարձրանալով բոլոր այն քաղաքը ջրոց տակ ծածկեր է, այսպէս կը հանդիսավինու Նէտպօլայ շրջակայթը (Ձև 24): Արդ ե-



Ձև 24. Նէտպօլա:

թէ այս փոփոխութիւններս ջրոց պակսելէն և կամ աճելէն ըլլային, այն ատեն այս երեւոյթք ամէն ծովուերեսին վրա պէտք էին երենալ, վասն զի ըստ լուաբանութեան օրինաց չի կրնար չեղուկ մը մէկ կէտի վրայ բարձրացած կամ ցածցած կենալ միշտ: Արդ վերցիշեալ տեղերն մասնական ըլլալուն համար, յացտնի է որ ծովան երեսին փոփոխութենէն չէ, այլ տեղական զանազան պարագաներէ և փոփոխութիւններէ, և ՚ի մասնաւորի շարունակ երկրաշարժերէ, զոր յետոյ պիտի տեսնենք:

## ԳԼՈՒԽ Դ

*Վ Զրոց մեքենական զօրուրիւն:*

55. Զուրն ոչ միայն զերկիրս կը լիշտապատէ, այլ և 'ի խորս լերանց և դաշտաց կը թափանցէ, և այլ և այլ ճամբաներով դուրս կ'ելլէ: Այս թոյլ մարմինս զետոց մէջ կ'ընթանայ իբրև հեղուկ, 'ի լերինս կը տարածաւի իբրև սառոյց, և յավկանսոս կը ժողովի իբրև յինդարձակ ընդունարանս, ուսից ամէն տեղ կը բաշխուի 'ի ներմութենէ և 'ի հողմոց: Այս երեք պայմաննիս մէջ ջուրն անդադար կ'աշխատի և կը ճգնի իւր անհաւատաւալի զօրութեամբն կերպարաննափոխ ընել երկրիս մասկերացիթը. մէկ կողմէն կը ջանայ քանդել կործանել զլերինս, զբլուրս, զժայուս՝ և 'ի ծով տանել, տես Ձև 20. և միւս կողմէն նորանոր ժայռեր, բլուրներ և յամաքներ ջինել: Եւ ամէջ չի դիտեր զրոց մեքենական քանդիչ զօրութեան ահաւոր արդասիքն. բաւական է առ այս դիտել, թողլով՝ 'ի բաց քաղաքաց և արտօրէից հասուցած մեծամեծ աւերմունքն, ծորոց, բլրոց, լերանց մէջ լացուած ակօսներն և մեծամեծ ճեղքերը. որոնք շատ անգամ իբրև անդուց մէջ կ'ընկղմեն ուսումնաւուք ճանապարհորդու և կամ ահաւոր բարձրութիւնէն կը դաշտիվիթէն 'ի ստորոտս լերանց: Վասնդի ջուրն թափանցելով կրախառն լերանց ժայռից ճեղքերու մէջ, իւր տարերօն կը թթուուկացընէ և կը փփորէ նոյն իսկ ամենակարծր ժայռերն, ինչպէս պաղալդ, պորփիւր, սիենիտ, արաստոյ վէմ և կրանիտ. ապա ցուրտն վրայ համեմելով կը սառի, և ճեղքերն կ'ընդարձակին ու իրարմէ մեծամեծ զանգուածներով կը հեռանան ու կը բախնուին. այս վիճակիս մէջ բաւական է կամ հողմ կամ անձրև կամ ձեանց հալումն՝ այն զանգուածները առնելու թաւաւելու լերանց կողերէն 'ի մեծամեծ վիսա մերձակայ դիւղից և դաշտաց. ինչպէս յամին 1806ին հանդիպեցաւ 'ի Ռոզպէրկ Զուլցերիոց մէջ յետ սաստիկ անձրևային աւուրց, յորոց լերան կաւն լուծուելով յանկարծ փրթաւ 50 միլիոն խոյրոց լերան կաւն լուծուելով յանկարծ փրթաւ 50 միլիոն մէջ բանարդ մէդր զանգուած մը, և գահավիժելով ձորոյն մէջ

ձեւացուց զանազան բլուրներ՝ 60 մէդր բարձրութեամբ, և ծածկեց քանի մը զիւղեր տղմավ և խճափարերով. ասոր նման պարագայի մէջ կործանեցաւ յամին 1618ին Վաղելինայի Բէօր քաղաքն և Սալցպուրկի մաս մը 1669ին:


56. Մերենական արտադրիչ զօրուրիւն չըոյ. — Ճայուից այս կտորներն որիշ փփրած քարանց հետ մէկտեղ՝ անձրեւային, սառերու և ձեւանց ջրոց հասանքէ և հեղեղատներէ մը զուելով մինչև գետոց բերաններն՝ կ'երթան կը թափին 'ի հեռաւոր և 'ի մեծամեծ ծովս: Ճամբայ ընելու ժամանակ՝ այս ժայռից կտորներն զարնուելով իրարու և հեղեղատին կամ գետոց կողերուն՝ անկիւնաւոր ձեւերնին կը կորմնցընեն և կլոր ձեւ կը ստանան, և կ'ըսուին խճափար, որքաղաքաց ճամբաներու շինութեանց կը գործածուին: Այս խճափարերն ընթացից մէջ գարձեալ իրարու զարնուելով աւելի կը մանրուին և կ'ըլլամն խիճ. այս խիճերն ջրոյն զօրութենէն դեռ աւելի փոքրկանալով՝ կ'ըլլամն Արագ, և ապա կաշ կամ Տիխու: Երբ այս խընափարերն, խիճերն, աւազն և կաւն կը թողովին կը մնան հեղեղատից և գետոց սնկողնոց մէջ, և ոյժերնուն նուազելուն պատճառաւ անը յառաջ չեն կրնար տանիլ, ուր որ կը դիզուին այն վերոյիշեալ մարմիններն հոն յամաքներ կը ձեւացընեն անկանոն ձեւով, այլ և այլ մեծութեամբ և բարձրութեամբ. ինչպէս կը տեսնուին Եփիատոյ, Թերեքի, Ռոմի, Հուգանոսի, և Տիբերիսի ծորոց մէջ, և այս յամաքներն կ'ըսուին Հեղեղանողը (Ձև 23): Բայց ինչ են այդ վերոյիշեալ գետերն, բաղդատելով Գանգեսին, Պրահամակուղրայի, Միսիսիբեայ, Ամազոնի, և Բլազայի գետոց հետ, որոնք իրենց պղասոր և աւազախառն ջրերը մինչև 200, 400 հազարամէջը հեռու 'ի մի ժողովուին՝ Այս գետոց ձեւացուցած հեղեղահողը եթէ 'ի մի ժողովուին՝ մեծամեծ լեռներ կը ձեւանան. միայն Գանգեսի տարուան մը մէջ բերած աւազով և խճափարով լիռու մը կը ձեւանայ՝ 300 մէջը բարձրութեամբ, 1000 հազարամէջը տարածութեամբ: Բայց ոչ բլուրը և ոչ լերինք կը ձեւանան, վասն զի ջուրն շարունակ շարժման մէջ է, և կը տանի ցած տեղեր կը լեցընէ, և կամ մինչև գետոց՝ լեւերու և նոյն իսկ ծովուն բերանը կը տանի, և հոն կը ձեւացընէ խառ խառ ջրանիստ յամաքներ եւ ուանկիւնի ձեւով և կամ նման յոյն Տեղա Ճ տառին, և այս

պատճառաւ Տեղա կը կոչուին։ Այս ցամաքներէն շատերն մեծ ընդարձակութիւն առած են, ինչպէս Կեղոսի, Միխիսի-բեյ, և մասնաւորապէս Գանգեօինն։ և սովորաբար գետոց լիութեան ժամանակ միշտ կ'աճին, որով թէ ձևով թէ տարածութեամբ կը փոխուին շարունակ։ Կեղոսի Տեղան ըստ ու մանց՝ Հերոդոտոսի ժամանակէն մինչև հիմայ աճած է կէս փարասխ։ Գանգեսի Տեղային ընդարձակութիւնն է 480 հազարամէզը քառակուսի։


57. Բուսական փայտակոյտք. — Այն գետերն՝ որք իրենց ընթացից ժամանակ անտառներէ կ'ամսնին, բաց ՚ի տեղուոյն քարերէն՝ կը քաշեն կը տանին ամէն տեսակ ծառոց արմատներ, ճիւղեր և կոճղեր, և կը թաղեն փայտակոյտ եղած իրենց ջրանիստ ցամաքներուն մէջ և կամ մինչեւ ՚ի ծով կը տանին։ Միխիսիբին՝ որ թերեւս երկրիս առևնէն երկայն գետն է, և Եւրոպից գետերէն աւելի մեծ օժանդակ գետեր ունին Օհիո և Միսուրի, վերոյիշեալ երկայթը իրաւոցնէ զորմանափ կերպով կը ներկայացընէ. ոչ միայն իր գետեղերաց վրայ կը ձեւացընէ բուսական փայտակոյտներ, այլ և մինչեւ ՚ի ծով կը տանի նոյնպիսի մնացորդները, որ չափազանց չէ ըսել՝ ըստ ու մանց՝ թէ լեցունութեան ատեն ժամանակ մը մէջ հաղարաւոր խորանորդ մէզը փայտակոյտք կը տանի։

58. Գետոց անդափիութիւն, յներոց և ձախամախուսներոց աներևուրանալն. — Գետերէն բերուած աւաղներով, խիճերով և խնաքարերով շինուած ցամաքներն՝ արգելք կ'ըլլան իրենց ընթացից, որով գետերն կը ստիպուին տեղէ տեղ փոխուիլ և զանազան ճիւղերու բաժնուիլ. ծանօթ են թոյ գետին այլ և այլ բերաններն, որոնցմով յԱգրիական ծով կը թափուի, և կը համապատասխաննեն նոյնշափ ճիւղերու։ Մի և նոյն պատճառաւ՝ ժամանակաւ կը լեցուին ցած տեղուանքը, որոց մէջ կ'ընթանան կը վազեն գետերն, և այս կերպով լճերն և ձախաճախուտ տեղուանք՝ կ'ըլլան բեղմնաւոր դաշտեր։ Պիմոնյ և Մահիա գետերէն ՚ի Լակօ-Մահիօրէ եկած նիւթերն, ինչպէս նաև Աստա գետէն գոմոյի լինը եկածներն մեծ ընդարձակութիւն ու տարածութիւն կու տան Մակատինոյ. Լուսականոյ, Փոլիքոյ, և այլն, դաշտավայրաց։ Ասոնց նման արդարունոյ, Փոլիքոյ, և այլն, դաշտավայրաց։ Ասոնց նման արդիւնք կը տեսնուի ձիներայի լճին վրայ՝ Հոռոմասու գետոցն

Յանձնութեան պահուածութեան ու պատրաստութեան մասին



պատճառաւ, 800 տարուան մէջ այս լճին արևելեան ծայրն այն շափ բարձրացած է՝ որ Բորդ-Վալէս գիւղն՝ որ հին ժամանակ լճին եղերքն էր, հիմայ երեք հազար մէտր հեռու է: Բոյ գետն



բով մի և նոյն երեսոյթները կը պատճառէ: Հռովմայեցոց ժամանակ Բարմայի, Բիաչենցայի և Շիրեմոնայի մօտ լիներ կային և զանազան մեծ ճախճախուաներ, որոնք աներեւու-

թիւն կը հետ հաղորդակցութիւն չունի, սակայն որշափ Աւ-  
պեան լեռներէն հեռանայ՝ անցած տեղւոյն յատակին ծռու-  
թիւնն կը նուազի, և իրեն ձեւացուցած ջրանիստ ցամաքնե-


թացած են, վասն զի Բոյ գետէն եկած նիւթերով լեցուեցան  
արդ և եղան արգասաւոր մշակելի դաշտեր. ընդհակառակն  
գետոյն ջրերն մերձաւոր դաշտերու մէջ փոխադրուեցան և

փորելով՝ նորանոր գետեր ձևացուցին. ասոնք այ այնչափ բարձրացան՝ որ քանի մը տեղ, ինչպէս ֆէրրարայի մօտ, գետոյն մակերևոյթն հին ատենուան շինած առւներէն բարձր է:

59. Բուշական հող. — Ջրոյ և մթնոլորտի տարերաց զօրութենէն յառաջ եկած գետնին երեսին վրայի կակուղ հողոյ խան, որով երկրիս ամէն տեղ ծածկուած է՝ կը կոչուի բուշական հող, վասն զի անոր մէջ յառաջ կոս գայ բռուսարերութիւնն: Այս հողոյ կազմութիւնն՝ ընդհանրապէս աւաղ՝ կառ և կրային նիւթեր են, որոնք խառնուելով բռուսական և կենածական մնացորդաց հետ արգասաւոր հող՝ կը գառնան:

60. Ջրոյ փոխադրական ոյժն: — Յայտնի կը տեսնուի մինչև հիմնյ ըսածներնէ՛ թէ ջրոյ մեքենական զօրութեան պատճառաւ մինչդեռ մէկ կողմանէ կը քայլային ժայռք, և ուրիշ կողմանէ երկրիս ցած տեղուանք աներեւոյթ՝ կ'ըլլան, մէծաւ մասամբ ջրոյ փոխադրական ոյժէն է: Այդ ջրոյ փոխադրական ոյժն՝ միշտ համեմատական է ջրոյ ընթացից արագութեան, որով ըստ քննութեանց Տիւպուայի՝ եթէ ջրոյ արագութիւնն ըլլայ առ մի րոպէ,  $0 \cdot 18$  հարիւրորդամէզգր արագութեամբ կրնայ շարժել զլաւը, առ մի րոպէ,  $0 \cdot 18$  հարիւրորդամէզգր արագութեամբ կրնայ իրեն հետ մէկանց տանել ամենաբարակ աւազը. առ մի րոպէ,  $0 \cdot 20$  հարիւրորդամէզգր արագութեամբ կրնայ փոխազբել որ և իցէ հաստ աւազներ, և  $0 \cdot 30$  հարիւրորդամէզգր կրնայ տանիլ մանր խիճեր. իսկ  $0 \cdot 60$  հարիւրորդամէզգր կրնայ գլորտըկել կլոր խճաբարեր՝  $0 \cdot 08$  հարիւրորդամէզգր խոշորութեամբ, վերջապէս 1 մէզգր արագութեամբ առ մի րոպէ՝ չուրս կրնայ փոխազբել հաւկըթի շափ անկիւնաւոր քարեր: Այդ այն գետերն՝ որ միշտ հեղեղատի արագութիւնն աւնին իրենց ընթացից մէջ, ինչպէս վարոյ, դեռ աւելի մեծամեծ քարեր կրնան տանիլ մինչև ծովը. ուստի գետոց լեցունութեան ժամանակ՝ այն գետերն որ սովորական ընթացից ատեն մանր տիզմ կը տանին, կրնան տանել մեծամեծ խըճաբարեր, որով կրնանք գաղափար մը ունենալ թէ ինչ տարբերութիւն կոյ այլ և այլ գետոց լիութեան մէջ: Խակ հեղեղատացանց և սահանաց փոխադրական ոյժն շատ փոփոխական է, և կը կախուի իրենց անկիման բարձութենէն, ուստի և անհաւատալի զօրութիւն ունին և կրնան փոխադրել ոչ միայն խճա-

քարեր, այլ և մեծամեծ լերանց կտորներ, զոր օրինակ Կիւդնոսի, Նիսակարայի ջրվէժն ու Ռայս գետ, տես Օւ 11, 13, 27:




Զւ 27. Ռայս գետ կ Զուկուրերի:

61. Չեւացունն զորժարանաւոր դիրտերու. — Ջրերէն ձեւացած ամէն գիրտ, կը բոլանդակեն գործարանաւոր մարմնոց

մացորդք, ոմն պակաս և ոմն աւելի. օրինակի համար հողածովին կը պարունակէ բազմաթիւ ճալաճային խեցիք (Ձև 28), ճային Որովայնուունք, Տափածիր ժժմակը (Ձև 29), Բաղկո-



Ձև 28. Ճախճախեցի:



Ձև 29. Տափածիր ժժմակ:


տունք, Մարգարտարերք և Անտառմն խեցեմորթք, որոց մացորդքն անցյ ջրոյ յատակը մնալով ծածկուած են գետոց և լճերու տղմով և սիկով, և այս գործողութիւնն շատ անգամ կրկնու ելով կը ձեւանայ խառ մը մարդի կամ կամի: Այս խառին վրայ եթէ աւելցընենք ուրիշ ժժմակաց և մեծամեծ կենդանեաց ոսկրոտիք և մնացորդք կ'ունենանք ջրանիստ զանազան խաւեր, որոց վրայ վերջէն պիտի խօսինք: Բաց ՚ի վերջոյինեալ կենդանիներէն՝ որոնք քիչ շատ աչքի տակ կ'իյնան, կան նաև այնպիսի մանր ջրաճճիք, զորս հազիւ մանրացոյց գործեք կը նանանք տեսնել, և տառնք իրենց անթիւ բազմութեամբ մեծամեծ զիրտեր կը կազմեն. ինչպէս Երհէնպէրկ կը նշանակէ կ'ունեպուրկ գաւառին մէջ ջրաճճեաց մնացորդք, որոց թանձրութիւնն 14 մէզրէն աւելի է. և ահա այսպիսի մանր կենդանեաց մնացորդովիք կը ձեւանայ Նեղոս գետոյն բերած սիկը, որով և բերրի կ'ընէ այն դաշտերը՝ յորս կը զիզուին: Քան մնացյ ջրոյ զիրտք շատ աւելի ընդարձակ են ծովային ջրոց զիրտերն, յորս բազմաթիւ են ծովային խեցիք, Կակլամորթք, Շուշանաճնք, Ամսնեղիներք (Ձև 30), Նաւախեցիք (Ձև 31). Մոմաքարեր, և այլն. այսպիսի զիրտք շատ տեղ կը գտնուին. զոր օրինակ՝ ՚ի վշլակայս Բարիդու, ՚ի Նորմաննախա, յԱրդուա, ՚ի Պորկոներ, ՚ի Գերմանիա, ՚ի Բրուսիա, յԱնդիա, և այլն:

62. Բուստր. — Բուստրքի ըստին այն փաքր և երբեմն ընդարձակ պարեխք և կղզիք, զորս կը ձեւացընեն Պոլիպոդք և

Կաւաբայսք, գլխաւորապէս Խաղաղական և Հնդկաց ծովերու մէջ, որոնք ծովային ներքին ժայռից վրայ հաստատուած՝ կ'առանուն և կը սեփականնեն ծովու ջրի մէջ լուծուած կրային աղերը, և ասպա իրենց արտադրած կղզանկը ովլբնակութիւննին կը յինեն. ասոնց վրայ ուրիշ Պոլիպոդք և Կաւաբայսք իրենց համար բնակարաններ կառուցանելին յետոյ՝ տեղի կու տան իրենց յաշորդաց, և այսպէս կարգ ըստ կարգէ կը յինեն և կը մեռնին, որով իրարու վրայ զիզուած զիրտերն՝ կը բարձրանան մինչև ծովուն մակհաւասար և երբեմն քանի մը մէզր ալ՚ի վեր, յորում ալ չեն կրնար բազմանալ՝ ծովային ջրոյ պաշկասութեան պատճառաւ: Պոլիպոզքը ըստ կարծեաց Կէմարտի՝ 10 կամ 12 մէզր խորութեամբ կը կենան և կը բազմանան ծովուն մէջ, և միայն քանի մը տեսակի՝ ըստ այլոց զիմոզութեանց՝ մինչև 40 կամ 50 մէզր խորութեամբ կրնան ապրիլ: Այս մանր և զարմանալի կենդանիք՝ շատ անգամ իրենց արտադրած նիւթերով կը զիշապատեն զբազմաթիւ կղզիս, և են



Ձև 50. Ամսնեղիներ:



Ձև 51. Կաւաբայսք:


իրացընէ մի մի թումբեր, որոց յատակն կամ ՚ի ստորոտն՝ ծովու անդունդք են: Այս թումբերն երբեմն բոլորակ մը կը ձեւացընեն ջրոց մէջ, և շատ անգամ խումբ խումբ ցանուցիք են ընդարձակածաւալ ովկիսանուներու մէջ, որոնք վսանգպաից են և առիթք անթիւ նաւարեկութեանց և կորուտեան: Երբեմն ալ այս բուստրոց թումբերն ջրոց երեսը եղելով կլորածն ահագին ովկիսանուն մէջ սիրուն լիճ մը կը ձեւացընեն, յորում կամաց կամաց ովկիսանունի կապուա կապուա և այլ անթիւ

ծովային մնացորդք ժողովուելով, հետզհետէ վրան կը դիզուին և մշակելի հող կը գառնայ. ինչպէս կը տեսնուին 'ի խաղաղական ովկիանուն այս կերպով ձեւացած կղզիներ, որ պատուական կերպով կը բռւացընեն:

Այս թումբերը և պարեխները ձեւացընող Պովիադովք՝ են 'ի մասնաւորի Աստեղաբուստք (Ձև 32), Մէանդրաբուստք, Շահողբամաբուստք, Ալնաբուստք, Մարդարտամարք (Ձև 33),



Ձև 32. Աստեղաբուստ:



Ձև 33. Մարդարտամարք:

և այլն: Կատ տեղ ցամաքային կողմերը՝ 200, 300 մէջը բարձրաթեամբ բուստոց գիրաեր կը գտնուին. զոր օրինակ՝ 'ի Դիմոր, 'ի Նոր Հողանատ, 'ի Սանտուիչ, 'ի Մարիանեան կղզիս, և այլն. ասոնց պատճառ ուրիշբան չի կրնար ըլլալ, բայց եթէ ծովու հրաբրիային ժայթքումն, ուսկից ատենօք բարձրացած են, և կամ լաւ ևս ծովային ժայռից կամաց կամաց ամբարձումն:

## Գ. Լ. ՈՒ Խ Ե


### Պառնարանք:

63. Պառնարանք. — Երկրաբանք և աշխարհագէտք Առնարան ըսելով կ'իմանան այն ահազին սառուցից զանգուածները՝ որ կը գտնուին լերանց գօտեաց խոր ու ընդարձակ ձորոց մէջ և մանաւանդ բռենի մօտ երկիրները: Այս տեսակ սառնարանք բազմաթիւ են, այնպէս որ միայն Ալպեան լերանց մէջ գրեթէ վեց հարիսրի չափ սառնարանք կը հաշուին, յորս կաց մէկ մը՝ որ իր բնդարձակութեան համար ծով սառուցից կը կողուի, 1200 մէջը երկայնութեամբ: Բաց 'ի ասոնց մէ աւելի նշանաւորք են Հիմալայեայ լերանց սառնարանքն, որոց մէջ 103 մէջքէն սկսեալ՝ մինչև 5800 մէջը երկայնութիւն ունեցող կայ:

Հիմալայեայ, Կոմիսասային լերանց, Ալպեանց և Պիրենեանց մէջ գտնուած սառնարանաց ընդարձակութիւնն ու մեծութիւնն համեմատական է գօտեաց ու ձորոց բարձրութեան, ինչպէս Զերվինոյ և Լզպրուզ լերանց սառնարանքն, որոց երկրորդին բարձրութիւնն է 5646 մէջը (Ձև 25, 26). բայց աւելի երկելի են հիւսիսային կողմերն եղած սառնարանք՝ իրենց բարձրութեամբ ու ընդարձակութեամբ: իսկ խոնաւ կիւմայից տակ քիչ սառնարանք կը գտնուին: Ականտինալիոյ մէջ, թէպէտ ամէն կողմերը բարձր չեն, բայց ընդհանրապէս շատ սառնարանք կան, որոնք կ'իշնեն մինչև սառիին Կորուկիոյ կողմերը: Լուսալին՝ որ 61երրորդ լայնութեան սատիճանին տակ կը գտնուի, 9000 մէջը երկայնութիւն ու 800 մէջը լայնութիւն ունի, և ծալու երեսէն 586 մէջը բարձր է: Խալանտիոյ հիւսիսային կողմանց սառնարաններն զրիթէ Սառուցեալ ովկիանոսի կը հաւասարին: Արխայկերի ծորերն ամէնքն ալ սառնարաններով լի են, որոնք ոչ միայն 'ի ծովեզերս կ'իշնեն, այլ և ալեաց վրայ խաղալով 1800 մէջը երկայնութեամբ ահազին մարտկոցներ կը ձևացընեն: Կըլֆ-Սորբմի չերմ ջուրերն կուգան կը հալեցընեն այս սառուցյիւրանց խարիսխները. և այն պատճառաւ մեծահատոր կտղներ գրթելով անոնցմէ՝ ծովը

կ'իջնեն, և ծովուն ընթացքն ալ յառաջմղելով զիրենք՝ մեծամեծ նաև արգելք և խորտակման պատճառ կ'ըլլան Ալուանդականին մէջ. (Ձև 34):

64. Ծագութիւն Սառնարանաց. — Սառնարանաց ծագութիւն է, որ տարուէ տարի բարձր տեղուանքը գալով ու չկարենալով հայիլ ամառ ատեն, կը դիտուի միշտ հետոցնետէ ծուրոց մէջ, լերանց ամենաբարձր գագաթանց վրայ և 'ի բեկոս, և այս կերպով սառուցեալ ջրոյ ծովեր և լեռներ կը ձեւացնէ:



Ձև 54. Ծովային սառնարանք Մէլվիս կղզոյն մօտ:


65. Բաժանութիւն Սառնարանաց. — Երկրաբանք երեք գոտեաց կը բաժնեն զառնարանս. ամենէն բարձր գոտին՝ որ ձեւան դաշտ կ'ըսուի միշտ սպիտակ է, անյար և ալեր նմանու-

թիւն ունի. միջին գոտին, որ կ'ըսուի ձիւնալպատ դաշտ, կը ձեւանայ ժողովուած և հատիկ հատիկ եղած ձիւնէ, որ կ'որջուի իրեն գորշ գոյնէն. ամենէն ստորին գոտին կ'ըսուի դաշտ սառոյցի, որ կը ձեւանայ միայար թափանցիկ և գեղեցիկ կապոյտ գոյնով սառոյցէ, և այն տեղերը կը գրաւէ՝ յորս ամբողջ ձմերուան մէջ եկած ձիւնն՝ ամառը կը հայի. սառոյցի դաշտին կը մատակարարեն երկու վերին գոտիք:

66. Շարժութիւն Սառնարանք տիեզերաց բոլոր էակաց պէս կը հապատակին կանոնաւոր շարժմանց և օրինաց բնութեան. բայց այս շարժմանց երագութիւնն՝ աւելի կամ նուազ է՝ ըստ համեմատութեան ձորոց աւելի կամ նուազ զառ. 'ի վայր ըլլալուն, ահազին զանգուածոց ճնշման և սառնարանաց խորութեան: Այս շարժման զվախաւոր պատճառն՝ ջրոյ տարածականութեան ոյժն է, որ թափանցելով կը սառի հազարաւոր փոքր ճեղքերու մէջ, ուսկից ամէն կողմը կ'անցնի. և այս տարածականութեան ոյժն չկարենալով ազգել լեռանց ընդդիմութեան պատճառաւ, կը ստիպէ այն կողմն իշնել՝ ուր որ ծանրութիւնն կը քաշէ: Ուր որ հակոմն և արագութիւնն մեծ է՝ սառնարանն չի կրնար ըստ բաւականի ծովի և իշնել, որով կը խորտակի և ճեղքեր կը բայցուին. այն ատեն զարհուրելի ճայներ կը լսուին այն ահաւոր լուսութեանց մէջ, և այն ճեղքերէն կը տեսնուին սառնարանին ներքին գործունէութիւնն, ջրոց երակք, զանսղան անցք և առուակներ, որոնք կ'երթան կը ժողովուին ընդ մէջ սառնարանի և ցամաք երկրի, և ապա անթիւ յորդ աղբիւներ ձեանալով կ'երթան կը միանան սառնարանի մեծ գետին հետ, որ կը բղիք սառնարանի դռնէն, ինչպէս կը տեսնուի ջուիցերից լեռանց և Ալպեանց վրայ: Այս ճեղքերն՝ սառնարանին կամաց կամաց հալելով՝ կը մեծնան և կ'ըլլան անդունդներ, որոց վրայ նոր ձիւն գալով՝ կը ծածկեն զանոնք վեր 'ի վերոյ. ուստի ամենավասակար է սառնարանաց վրայ ճանապարհորդելն, և շատ մեծ զգուշութիւն պէտք է՝ որ աղէտակի գահավիժմունք չպատահին. ինչպէս հանդիպած է Փարոն Համելին և իւր ընկերացը, յամին 1820 օգոստոս ամսոյն 20ին, Սպիտակ լեռան սառնարանաց վրայ ելեկու ժամանակ (Ձև 39):

67. Եղբ Սոսիրի 'ի Սպիտակ լեռան. — Սոսիրէն առաջ

շատերը փորձեցին ելնել Եւրոպիոյ բարձրագոյն լեռան վրայ, սակայն ոչ ոք կրցաւ յաջողիլ: Սոսիւ՞ յամին 1787 օգոստոս 1ին՝ տասն և ութ առաջնորդներով և ծառայով մը ամենայն




Ձև 55. Ելք Սոսիւրին՝ ՚ի Սպիտակ լեռան:

յաջողութեամբ առաջին անգամ ելաւ ՚ի Սպիտակ լեռան: Յետ ամենայն ինչ պատրաստելց ճամբայ ելան Շամոնիքսէն և հասան յԱնցս Սանդղոց (Ձև 49), և իրիկուան մօտ կանկ


առին ՚ի Մեծն Մուլէ ըսուած լեռան վրայ, յորում խրձիթ մը շինելով գիշերը հոն անցուցին: Երկրորդ օրը սկսան սառնարաններէն անցնիլ շատ գժուարութեամբ, յորս ամենեկին ոչ կենդանի՞ ոչ բայց և ոչ իսկ ժայռ մը կը տեսնէին, այլ միշտ ձիւն կամ սառն, որուն վրայ այնպէս քաջութեամբ կը քալէին, որ ինքնին Սոսիւր կը զարմանար մասնաւորապէս իր առաջնորդաց վրայ: Յետ մէկ քանի գժուարին և վտանգաւոր սառնարաններէ անցնելու, ուրիշ պինդ ու կարծր սառնարանի մը հանդիպեցան (Ձև 35), որուն վրայ ուրախացած և ապահով իրենց յաջողութեան վրայ, երկար ժամանակ քալելէն վերջը՝ հասան ձեռնց գաշտը, և ասկից հասան շուտով ՚ի գագաթն: Հոս Սոսիւր ուստամնական անթիւ դիտողութիւններ և փորձեր ըրաւ, թէ՛ օդաչափ, թէ՛ Արմաշափ և թէ՛ խոնաւաշափ գործեօք, և քանի մը ժամէն վերջը նոյն ճամբով ետ գարձան անլուտնդ:

68. Սառնարանաց աղղեցուրիւն ժայռից կողերուն և ձնրոց յատակին վրայ. — Թէ ցամաքային և թէ ծովալյին սառնարանք ամենամեծ ազգեցութիւն ունին այն ժայռոց և ծորոց վրայ, որոց կը հանդիպին իրենց գանդառ՝ այլ շարունակ շարժմամբ: Եւ իրաւցնէ, այն ահազին ծովային սառուցի զանգուածք՝ որոնք երբեմն 90 մետրէն աւելի են՝ յրէն դուրս մնացած մասամբք, և ծովու մէջի ընկղմած մասն՝ ինն անգամ աւելի մեծ է քան յրէն գալս եղած մասը, այնպէս ուժով ծովու ալիքներէն ՚ի հողմոց և ՚ի հսուանաց կը մղուին ու կը զարնուին ծովու ժայռուրու վրայ՝ որ ոչ միայն կը քայլացին, կը տորներ կը փրցընեն, այլ և կը մաշցընեն, կը յզկէն, կը գծէն կը կլորցընեն և ակօսներ կը բանան զանազան դիրքով և ուղղութեամբ, ըստ որում յայ կամ յայն կողմն մղուին կամ քշուին: Այս ամէն երեսոյթներն շատ աւելի զգայի կերպով կը տեսնուին մեծամեծ և բարձր լեռանց և ծորոց վրայ, ինչպէս կը վեցնտ լեռան վրայ (Ձև 36), ուսկից սառնարանքն անցնելով իրենց ահազին ճնշմամբ և մէջը խառնուած խճաքարերով, գաւարով, պրոֆիլի անկիւնաւոր կտորներով և գեռ ուրիշ կարծր քարեր, մեծամեծ և խոր նշաններ կը թողոն զուգահեռական գիծերով, կը յդկեն ժայռից մակերևոյթը, տեղ տեղ կը կլորցընեն, և երբեմն ալ կը փրցընեն զանազան ժայռով կտորուանքը և հետերնին առած վար կ'իննեն:



ՁԿ 56. Խլվէնտ լեառն:

69. Ձևագումն կարկառաց. — Սառնարանի շարժմանէն ձորոց կողերէն կը փրթին մեծամեծ ժայռից կտրուանք, որոնք միանալով լերանց գագաթէն փրթածներոն հետ կը խառնուին սառոցի հետ, և ապա սառնարանի շարժմանէն մաս մը բոլորովին փիսրելով և զանգուելով սառոցի հետ շաղախի խաւ մը կը ձևանայ, և կը ժողովուի ընդ մէջ անցած երկրին և սառնարանին ստորոտը: Բայց այն կարծր ժայռից մեծ մասը և մեծամեծ զանգուածները՝ սառնարանն իր մակերևութին վրայ կ'առնու, և յետ հալելու՝ իր ստորոտը կը թօղու,



ՁԿ 57. Կարկառք Օպերհառ Սառնարանի:

Ճեացընելով բլրակներ զանագան ձևով և դիրքով, որք կը կոշուին կարկառ, շեղչակոյտք (ՁԿ 37): Այսպիսի շեղչակուտից գեղեցիկ օրինակներ կը տեսնուին Ալպեանց վրայ, 'ի Սկանտինաւեանլերինս, 'ի Զուիցերի, ինչպէս 'ի սառնարանս կրին տէլմալտայ, (ՁԿ 38). որոց մէջ կը գտնուին յանդուզն և թշուառ ճանապարհորդաց և առաջնորդաց դիակներ՝ բոլորովին մուրմադարձած, ինչպէս վերջին ատեններս գտնուեցան Սաւոյից ձորոց մէջ մեծին Նաբուշոնի զինուորներէն ոմանք, որոնք Ալպեանց լեռներէն անցնելու ատեն ճեղքերու մէջ ինկեր էին:

70. Հաղոցն Ասոնարանաց. — Թէ ձորոց մէջ եղած և թէ լերանց վրայի սառնարանք միշտ 'ի ստորոտոս կը հային, և բնականաբար ըստ օդոյ բարեխառնութեան՝ կը փոխուի նաև հալման աստիճանն: Այսափիզ հաստատելով զանազան ցիցեր սառնարանի մը վրայ, կրցաւ չափել թէ հալմամբ որչափ վար կ'ինչը սառնարանին մակհաւասարութիւնն մէկ տարուան մէջ, և տեսաւ որ տարեկան հալումն 3 1/2 մէդր էր Յառ սառնարանին մէջ տեղը. օգոստոս ամսոյն մէջ միայն մէկ մէդր հալմր էր, իսկ ձմեռը՝ ամենեին չէր հալած:

Սառնարանաց հալմանէն եկած ջուրն կը ժողովուի նախ սառերուն տակ, ապա կը բղի՛ ձեւացրնելով առուակներ կամ հեղեղատներ: Առուակաց կամ հեղեղատաց ջրոյն գոյնն՝ պարզ մաքրու չէ, այլ պղտոր. կաթնագոյն է՝ կրանիսու ժայռերէն անցածն, ինչպէս Ալպեանց սառնարանէն բղխած Ռոնի և Արուայի լիեռն. կանաչագոյն է՝ օձաքարերէն անցած ջուրն, սև է թերթաքարերէն անցածն. և այս ջրերն հետերնին կը տանին միշտ տիզմ և զանազան մեծութեամբ խճաքարեր: Երբ սառնարանաց հալմանէն յառաջ եկած ջուրն չի կրնար բղխիլ տեղէ մը և վազել, սառնարանի աւազանին վրայ կը սկսի փորել, և լիճ մը կը ձեւացընէ: Այսպիսի լիճերէն մեծագոյնն է Մէրիպի, որուն երկայնութիւնն է 1 1/2 հազարամէդր, լայնութիւնն 350 մէդր, և խորութիւնն 7-8 մէդր: Այսպիսի լիճ մը կայ նաև Ա. Բեռնարդոսի հիւրանոցին առջև:

71. Հին Սառնարանք. — Շարբանդիէ, Այսափիզ, Վընէ, և այլք, մասնաւոր հետազօտութիւններ ընելով արդի սառնարանաց և անոնց երեսութից վրայ՝ աւելի լսա կերպով լուսաբանեցին հին սառնարանաց պատմութիւնը: Այս բնագէտք հանդիպելով մեծամեծ խառ խառ եղած երկիրներու, կազմուած՝ մեծաւոր լերանց կազմութիւնը ունեցող խճաքարերէ, տեսնելով ժայռից երկայն և որածայր մասերն յդկուած, շերտաւոր և փորուած, հանդիպելով զանազան մեծութեամբ և ձեռով բրոց, յորս կը տեսնուին շերտաւոր և գծուած խճաքարեր ու դիղուած միանգամայն ձորոց բերանը, տեսնելով դարձեալ ահագին զանգուածներ փոխազրուած՝ ոչ միայն հետաւոր տեղեր և դաշտաց մէջ ցրուած, այլ և մեծամեծ բարձրութեանց վրայ, զոր օրինակ Ալպեան լեռներէն փոխադրուած Ժիւրա

լերան գագաթան վրայ, միով բանիւ՝ տեսնելով որ այս ամէն տեղերը դորկ են արդ բոլորովին սառնարաններէ, և անոնց արգասիք և երեսոյթք յայտնի կը տեսնուին, հետևուցեցին թէ այլ և այլ երկրաբանական ցշանաց մէջ, ցշան մ'ալ եղած պիտի ըլլայ՝ յորում երկրիս մեծագոյն մասն սառնարաններով ծածկուած ըլլայ:

72. Սառնապատ դար. — Սառնապատ դարն կը համապատասխանէ մեծամեծ կենդաննեաց, ինչպէս Ստուաժանի, Ահազնագագագանց ցեղին նշման և նոր գարուս մէջ երեւցած կենդաննեաց ժամանակին: Հաւանական է որ մի և նոյն պատճառն՝ որով հին սառնարանք ահաւոր ընդարձակութիւն




Ձկ. 58. Սառնապանք Կրինատէլլաբասայ:

ստացած են, նշած ըլլայ նաև վերոյիշեալ կենդաննեաց ցեղը: Սառնապատ գարուն մթնոլորտի բարեխառութիւնն շատ ստորին եղած պիտի ըլլայ՝ արդի մթնոլորտի բարեխառունութիւննէն, և այս տարբերութիւնս կրնայ բացատրովկլ ըստ Բուասոնի վարդապետութեան, այսինքն՝ երկիրս մոլորակային դրութեան հետ մէկսեղ միջոցի մէջ շրնելու ժամանակ՝ անցած ըլլայ սատիկ պաղգոտիք մը սառնապատ գարու մէջ, ինչպէս նաև ուրիշ գարու մէջ ալ ըստ բաւականի տաք գոտիք մը գարձեալ անցած ըլլայ:

73. Հայաստանի Սառնարանք. — Հայաստան համեմատութեամբ իր բազմաթիւ և բարձրաբերձ լերանց, գետոց, առաստ աղբերաց և մասնաւանդ քամի մը լեռնային լիճերով՝ չունի այնշափ սառնարաններ, և եղածներն ևս շատ փոքր են բաղ-


Դատելով Ալպեան, Սկանտինաւեան և նոյն իսկ Կովկասեան լեռանց սառնարանաց հետ: Մամնաւորապէս կը յիշուի՝ ի ճանապարհորդաց Այրարատայ սառնարանն, որուն վերջին սահ-

կողմերուն լերանց վրայ: Կիլիկիոյ երրորդ գահաւանդ լերանց վրայ, որոց ստորոտքն լիեն ձիւնակոյտք, 3,242 մէդր բարձրութեամբ կան սառնարանք. ինչպէս նաև ՚ի Պուղ-Գայա-



մանն է 4,320 մէդր. հաւանականօրէն կը կարծուի՝ թէ զանազան սառնարանք ըլլան նաև վանայ ծովուն հարաւային կողմն՝ ջուլամերկի քով, Հաքքեարի քիւրտերուն բնակած

ըսուած լերան վրայ: Բայց տարակոյս չկայ՝ որ երբեմն Հայաստանի մէջ ալ շատ տարածուած եղած են սառնարանք և ստորին սահմանաց մէջ իջած, ինչպէս յայտնի կը տեսնուի Մեծն



Մասիսի ժայռից վրայ, որուն մակերևոյթն այնպէս ողորկուած է և այնպիսի փայլունութիւն ունի՝ որ արևուն ճառագայթ ներն վրան զարնելով, սաւոյցի կերպարանք կ'առնուն և զլոյց կը ցոլացընեն. այս երևոյթս միայն բարձրերը չի տեսնուիր, այլ և ցած տեղուանք, ինչպէս Ս. Յակոբայ հեղեղատին քովերը, յորում կան լերանց մեծահատոր կտրոներ, (Զւ 40): Սառնարանաց այս երևոյթք կը տեսնուին նաև, 'ի Հայ-Ճաւրսեան լերանց վրայ, Ահմանկան և Պուղ-Ճաղին վրայ:

## ԳԼՈՒԽ Զ


### ԵՐԿԻՐ

74. Բնդիմանուր կազմուրիւն երկրիս. — Երկիրս մոլորակ մ'է, որ արևուն բոլորտիքը կը թաւալի, գծելով թերատաձև բոլորակ մը, 'ի մէջ Արուսեկին և Հրատի. որով յերկու դաս կը բաժնէ զմոլորակս, այսինքն՝ 'ի ներքին մողորակս, ինչպէս Փայլածու և Արուսեակ, որոնք արևուն շատ աւելի մօտ են քան զերկիրս. և յարուաքին մողորակն որոնք շատ հեռու են քան զինքն, ինչպէս Հրատ, Լուսնթագ, Երկակ, Աւրանոս, Պիսիդոն և Աստեղատիսք կամ Դիտակային մողորակք, որոնք վերջին տարիներուս մէջ գտնուեցան յայլ և յայլ աստղաբաշխց՝ ընդ մէջ Հրատին և Լուսնթագին:

Երկիրս գնդաձև զանգուած մ'է, ուռած դէպ 'ի Հասարակածն և 'ի Բնենոս տափկած: Հասարակածային տրամագիծն է 12,754,863 մէդր, իսկ ըևեռային տրամագիծն է 12,712,251 մէդր. իր շրջապատն 40 միլիոն մէդր է, և մակերևոյթն գրեթէ 5,000,000,000 հազարամէդր, (Զւ 41):

Երկիրս արևեն ունեցած հեռաւորութիւնն է, 120,000,000 հազարամէդր. իր տարեկան թաւալումն կը կատարէ 363 աւորց, 48 վայրկենից և 51 րոպէից մէջ՝ յարեկելից յարեմուտս. ինքնիր վրայ կը դառնայ՝ գրեթէ 24 ժամուց մէջ՝ յարեկելից յարեմուտս, որ կ'ըսուի օրական բացառութեան: Այս շարժումը յառաջ քան զկոպեանիկոս, Քէփիէր և Գալիլէոս՝ արեւուն կ'ընծայէն, համարելով երկիրս ինչպէս նաև միւս մողորակները, անշարժ և տիեզերաց կեդրոնն:

Երկիրսունի արբանեակ մը՝ զլուսին, որուն հեռաւորութիւնն երկրէս՝ 38,000 հազարամեջդէ, 50 անգամ փոքր քանզինքն, և իր թաւալումն երկրիս վրայ 28 աւուրց մէջ կը կատարուի: — Երկրագունդս՝ որուն կեղրոնն հրացեալ և կալուղվիճակի մէջ կը գտնուի՛ ըստ պլուտոնական դրութեան, շտ-



Զւ. 41. Երկրագունդ:

չապատեալ է հաստատուն կեղրէ մը, որուն  $\frac{2}{3}$  մասն ջրով ծածկուած է. խակ այն ամբողջ զանգուածն ալ շրջապատեալ է՝ ի մթնոլորտէ, որ բոլորպին յօդոյ և՝ ի գոլորշեաց կը կազմուի:

75. Երկրիս ձեւն և կղզիացումն միջոցի մէջ. — Եթէ դիտելու ըլլանք ծովուն վրայ թէ ինչ կերպով կը տեսնուին և կ'աներեւութանան առարկայք, ինչպէս նաւեր, աշտարակներ

և որիչ չէնքեր, անստարակիցս պիտի ըստնք՝ թէ երկրագնտիս ջրային զանգուածն կորընթարդ է: Զայս կը հաւասարեն Մակելյանի հանսապարհորդութիւնն և երեք դարուց անթիւ ուրիշ ժողովին և ցամաքային ուղեւորութիւնք, և կը ցուցընեն գէթ յարեւելից յարեւմուտս՝ թէ երկիրս բոլորպին կղզիացեալ է միշնոցի մէջ: Եւ եթէ ահաւոր սասասմանիք բևեռացին կողմանց՝ կ'արգելուն հիւսիսէն հարաւ երկրիս չորս կողմն հանսապարհորդեաւ, ասկայն որչափ դէպ' ի հիւսիս կամ դէպ' ի հարաւ յառաջնենք՝ կը տեսնուի ընդհանուր կորընթարդութիւնն մը, և եթէ այս ևս ըլլայց բաւական են երկրիս կորընթարդութիւնը ցուցընելու՝ շարունակ նորանոր սաստեղաց երեւումն երկու բևեռաց հորիզոննին վրայ, և լուսնոյ խաւարման ժամանակ՝ երկրէս ընդունած կիրա ստուերն: Երկրիս ձեւն դրեթէ թերատագիծէ, և իր մակերեւութիւն մեծամեծ եւեկչնն այսինքն վիճք, բլուրք և լերինք՝ ամեննեին փոփոխութիւնն մը չեն տար. վասն զի երկրիս բարձրաբերձ լերինքն երկրագնտիս ընդարձակութեան համեմատ ոչ ինչ են, և աւելի քիչ զգալի են՝ քան նարընջի կեղեին անհարթութիւննիքն:

76. Ծանրուրիշն երկրի. — Երկրիս՝ միջոցին մէջ կղզիացեալ ըլլալէն՝ յառաջ կու գայ ամէն մարմնոց իր կեդրոնը դիմելու հակամիտութիւնը. որ և կցէ մարմին չի կրնար երկրէս ենել և անսահման միջոցին մէջ իշնալ. և եթէ երբեմն դիպուածով երկրիս մակերեւութէն դուրս նետուին, իսկոյն կը դառնան դարձեալ երկրիս վրայ, բայց մեծ արագութեամբ: Այդ մարմնոց այս ձկուումն կ'սոսուի ծանրուրիշն կամ երկրային ձկուուրիշն. որուն օրինաց վրայ բնաբանութիւնն կը խօսի: Այս ծանրութիւնն կը նուազի աստիճանաբար բևեռէն դէպ' ի հասարակած, վասն զի երկրիս շասաւիղներն անհաւասար են, և որչափ կեղրունէն հեռանանք՝ այնչափ աւելի քիչ կը կշռեն մարմիններն. և դարձեալ, վասն զի կեդրոնախոյս դօրութիւնն ի բևեռու զրեթէ ոչ ինչ է, իսկ ի հասարակածն իր մեծագոյն աստիճաննեն կը հասնի: Ծանրութեան այս աստիճանաբար նուազումն յայտնի կը տեսնուի հօձանակին փոփոխութիւններէն, զոր պէտք է կարձեցընել զանազան զուգահեռականաց վրայ բևեռէն դէպ' ի հասարակածն՝ մի և նոյն հօձումն ունենալու համար:


77. Երկրիս միջին խոռորդիւնն. — Ըստ օրինաց Կեւտոնի, (այսինքն՝ ձգողութիւնն ուղղի համեմատութիւն ունի մարմնոց զանգուածոյն և խոտոր համեմատութիւն ունի հեռաւորութեան քառակուացյն), բնագէտք ուղեցին երկրիս միջին խըտութիւնն իմանալ: Որոշելով ծանօթ մարմնոց զանգուածոց ձգողական զօրութիւնը, ինչպէս հաւասար մեծութեամբ կապարեայ, պղընձեայ, լսնուկիէ, զինգէ և փղոսկրեայ գունդերու, և բաղդատելով այս ձգողական ոյժն մեր երկրագնտիս ունեցած ոյժին հետ, որուն զանգուածն ծանօթէ, կրցան հետեցընել երկրիս միջին խոռորդիւնը, որ է զինգու կէս անգամ աւելի՝ քան զստութիւն ջրոյ, Քէվլնստիշգտաւ 5·48, Ուայլ 5·45. և գեռ աւելի ըստ նոր քննութեանց՝ 5·58, և ըստ Պայլի 5·67:

Այս թիւերս՝ երկրիս մակերեսոյթը կազմող զանգուածոց նիւթոց խտութեան թիւերէն աւելի են. վասն զի կրային հողն, քուարցն, արաստոյ վէժն, օճաքարն, գայլախաղ, սիենիտ, և այլն, 3 հազարազբամի շեն հասնիր իրենց խտութեամբ. ուստի երկրիս խորերը ոչ միայն մեծամեծ խոռոշներ չկան, ոչ ջրով լեցուն և ոչ պարապ՝ ըստ կարծեաց ոմանց, այլ մանաւանդ աւելի իխտ մարմիններ պէտք են ըլլալ ներսը, որոց շեն հաւասարիր երկրիս վրայի ժայռերն: Քանակէն և երկրիս խտութենէն՝ կրնանք իմանալ անոր կիսը, որ է 6,259,534 հազար միլիոն անգամ հազար միլիոն հազարազբամ, և կամ 58,750,000,000,000,000 տակառաշապի:

78. Երկրիս մակերևորին վիճակն. — Երկրիս մակերեւոյթն կրնայ երկուքի բաժնուիլ, այսինքն՝ ցամաքային և ջրային, մէկ մասն ցամաք երեք մասն չուր է:

Ցամաք երկիրն մեծապէս տարածուած է գէպ ՚ի հիւսիսային բևեռու, որ մինչև հասարակածը կը հասնի, իսկ հարաւային բևեռային երկրին ընդարձակութիւնն՝ Աւստրալիան է: Երկրագնտիս ուրիշ ցամաքներն՝ համեմատութեամբ փոքրադայն են, որոնք կղզիներ կը ձևացընեն՝ տեղ տեղ միացեալ և տեղ տեղ անջատեալ յիրերաց: Երկրիս ըջաբերութիւնն շատ անկանոն է, և եղերֆն շատ ճեղքեր ունի. ուստի գէպ ՚ի ծով երկնցած ցամաքներն կ'ըսուին թերակղզիք, հրուանդանք (Ձև 42), պարանցը, և այլն. իսկ ծովուն երկրիս մէջ ներս մտած մասերն ալ կ'ըսուին ծովածոցը, զոգը, խորչը ծովու,

(Ձև 43), միջերկրեայք, և այլն: Ցամաք երկրիս բարձրութիւնը ալ շատ անկանոն են, տեղ տեղ հազիւ ջրին մակհաւասար են, ինչպէս ծովու միջի ժայռերն՝ որ Պարեխը կ'ըսուին, տեղ տեղ ծովուն երեսէն քիչ մը բարձր են, և մեծ ընդարձակութեամբ



Ձև 42. Գլուխի բարձրութեամբ:

և մղոններով կը տարածուին, և կ'ըսուին դաշտավայրը, տեղ տեղ հարիւրաւոր և հազարաւոր մէջը կը բարձրանան ծովուն երեսէն, որոնք երբեմն տափարակ գաշտերուն հետ ունին կոռնածե գաշտեր և կը ձևացընեն բլուրք և լերինք այլ ձեռով և տեղ տեղ ալ ձորերով բաժնուած:

79. Դաշտավայրք . — Յամաք երկիրներ և կղզիք՝ այլ և այլ բարձրութեամբ դաշտավայրներ ունին, սկսեալ գրեթէ ծովու երեսէն մինչև ամենաբարձր լեռներ . այս պատճառաւս երկու տեսակ դաշտավայրք կան՝ Ստորին և Բարձր : Եւրոպիոյ ամենէն ընդարձակ ծանօթ ստորին դաշտավայրք Փերիսիցի անապատք են, որուն մակերևութին ընդարձակութիւնն է 1,800 մղոն քառակուսի, Ովկիանոսի մակհաւասար նոյն իսկ տեղ տեղ ալ ցած է, վասն զի Աժտերփսան և Կասպից ծովուն եզերքը՝ Սև ծովուն մակհաւասարէն ստորին են : Այս դաշտավայրէն աւելի ստորին դաշտավայրք յԱմերիկա կը գտնուին, օրինակի համար այն դաշտավայրք՝ յորում Ամազոնի և Բլադայի շատ ճիւղերն կը հոսին . կան նաև Վեսթֆալիայի




Ձև 45. Սոց ձեմեւայի:

մէջ և 'ի Պիրենեանո՛ ընդհատեալ 'ի ճախճախուտէ և մեծամեծ ծառերէ, յորս գեղացիք կ'անցնին փայտոտալիք (Ձև 43) :

Եւրոպիոյ մէջ զարմանալի բարձր դաշտավայրք չկան, միայն 'ի Խոռուագստան, 'ի Գառնիոլա, 'ի Լիմոն և 'ի Սպանիա ևս կը գտնուին բաւական մեծութեամբ, բայց Եւրոպայէն դուրս շատ մեծ բարձրութեամբ դաշտավայրք կը գտնուին, օրինակի համար Ամերիկայի մէջ Մեքսիկոյի բարձրավայրք, որ 150 մղոն երկայնութեան վրայ՝ 50 մղոն լայնութիւն ունի և ծովուն երեսէն 2,000 մէդր բարձր է, Գուիթոյին 3,000 մէդր է, Ամիոյ կեդրոնի մէջ դեռ աւելի բարձրերն կան, օրինակի համար Հայաստանի ընդարձակածաւալ Անծ Դաշտ և Անապատ Հայոց ըստածն, որուն ընդարձակութիւնն է 10,000 մղոն քառակուսի. և Թիւպէդի դաշտավայրն որուն բարձրութիւնն է 3,600 մէդր :


80. Բյուրք և լերինք . — Երկրիս երեսին վրայ դուրս եւ յած մասունքն՝ որոնք միշտ փոփոխութեան մէջ են, կը կազմ մեն բլուրներ և լեռներ . ըլլոց և լերանց զանազանութիւնն շատ դժուարին է, և ըստ կամս է շատ անգամ . ըստ այսմ՝ ըլլուրք կը կոչուին այն մասերն՝ որոց բարձրութիւնն շատ մեծ չէ, կը են քիչ մը, սիրուն բուսաբերութեամբ զարդարուած՝ մերձաւոր դաշտավայրաց նման, որոց հետ կամաց կամաց կը



Ձև 44. Տափաստան 'ի Պիրենեանս :


խառնուին կը միանան, և ընդհանրապէս ջրանիստ հողերէ ձևացած են : Լերինք կ'ըսուին այն մասերն՝ որոնք շատ բարձր են և ժայռոտ, ահաւոր տեսքով, տեղ տեղ բիւրեղայած ժայռերէ ձևացած, և տեղ տեղ վայրենի կանաչութեամբ զարդարուած : Բոյ գետայն աջ կողմը սուոյդ բլուրներ կան, ինչպէս Աստիճանայի, և Դորդոնայի . գեղեցիկ բլուրներ կան նաև 'ի Հայաստան զօր օրինակ 'ի Թորթում, յորում ամէն տեսակ պտուղ կը հասնի, (Ձև 47) : Իսկ լերինք են՝ Այրարատայ, Կորդուաց, Վանայ լերինք, Ալպեանք, Ուրագք, Ապենինեանք, և այլն :

81. Բարձրագոյն լերինք . — Ամենաբարձր լեռներն հազ  
զիւ 8840 մէջը են, Ետնա 3227 մէջը է, Որովան 4640  
մէջը, Սպիտակ լեռն Երավիոյ ամենէն բարձրագոյնն՝ 4815  
մէջը է, Մասիս 5260 մէջը, Վանայ լերանց մէջ Սիսիան-Տաղ  
4223 մէջը: Հարաւային Ամերիկա աւելի բարձր լեռներ կան,  
Բերուի մէջ Փիմբորադոյ 6530 մէջը է, Սորադայի Նեվադա  
ամենէն բարձր գագաթն Անտեայց 7696 մէջը: Բայց ասոնց  
մէ աւելի բարձր, յԱսիա կը գտնուին Հիմալայեայ գագաթ-  
ներէն մին կը հասնի 8840 մէջը բարձրութեան . բայց այս բար-  
ձրութիւնք բաղդատմամբ մեր երկրազնդիս շառաւիզին այն-  
շափ փոքր են՝ որ հազիւ կրնանք նմանցընել նարընչին փրայի  
անհարթութեանց . յԱփրիկէ ևս կան բարձրաբերձ լերինք,  
ինչպէս Վողհոյ 5060 մէջը, Քիլիմանջարոյ 6100 մէջը, շատ  
սիրուն են նաև Հոմալորիս լերինք յԱփրիկէ (Ձև 46):



Ձև 45. Դաշտավայրք Գողենցայի յիտալիա:

82. Լերանց շղրայք . — Լեռներն ոչ եթէ անջատեալ, այլ  
բազմութեամբ իրարու քով են և աստիճանաբար բարձրացած՝  
յաջ և յահեակ կը տարածուին, և որշափ մօտենան դաշտա-  
վայրաց՝ այնշափ աւելի կը ցածնան և կը խառնուին մեղմ  
կերպով դաշտերու հետ: Լերանց այլ և այլ խումբերն կ'ը-  
սուին շղթայք լերանց, զոր շատ անգամ ձկանց ողնայար  
փշոյ կը նմանցընեն. և յիրասի, լերանց շղթայից մէջ կայ կեն-  
դրոնական լեռ մը, և ապա կողմնակի բազուկներ կամ շղթայք՝  
դրեթէ ուղղահայեաց կեդրոնական մասին, այլ և այլ հեռա-  
ւորութեամբ և ընդարձակութեամբ: Շատ անգամ այս բազուկ-




Ձև 46. Համարդիս լեռեան Անդրեա.

Ներն իսկ այլ և այլ ճիւղերու կը բաժնուին, ուղղահայեաց իրենց զիմաւոր մասին, և վերջը կը խոտորին. այս երկրորդաշական ճիւղերն ևս կը բաժնուին յերրորդակական ճիւղս, և այսպէս հետզիետէ: Սովորաբար բարձրագոյն մասն՝ կեղբանական լեռն է, և կողմնակի լեռներն՝ կը ցածնան մինչեւ՝ ի գաշտավայրս: Այսպիսի շղթայք շատ են երկրիս վրայ, ինչպէս Ալպեանք, կոմիսաւեան շղթայք, Հայկական պարք, որուն զիմաւոր լերինք են Մեծ և Փոքր Մասիս, Պինկէօլ, Սուկաս, լերինք Ապերու, լերինք Գեղամայ, լերինք Վանայ, և այլն. Տաւրոս, Պալգան, Ականտինաւեան շղթայք, Անտեպք, և այլն:

83. Գօտիք լերանց. — Այլ և այլ լերանց շղթաներու բազմութիւնք՝ երբ քիչ շատ զուգահեռական կերպով ձգուած և միացած ըլլան կողմնակի լեռներով՝ կը կոչուին գօտիք լերանց. ինչպէս Պիրենեանք, Ապենինեանք, Կարպատեանք, և այլք՝ զանազան լերանց շղթայք են մի և նոյն ուղղութիւնը ունենալով, այսինքն զուգահեռական մեծ շրջանակի մը՝ որ Պիրենեանց շղթաներէն կ'անցնի. ուստի բոլոր այս շղթայք կը կազմեն մէկ գօտի որէ Պիրենեան-Ապենինեան կոչուածը:

84. Զոր. — Լերան մը զանազան մասերն և լերանց շղթայք՝ որոնք իրարմէ զատուած են խոր և ընդարձակ փոսերով, կը կոչուին ձոր, ինչպէս թորթումի և Գառնւոյ, (Ձև 47, 48):


Զորոց ընդարձակութիւնն, խորութիւնն և հսկումն միշտ նոյն չեն, ինչպէս նաև կողից զառ ՚ի վեր բարձրութիւնն: Տափարակ և վսեմ ձորերէն, որոց խորը կ'ընթանան Եփրատ, Տիգրիս, Երասիս, Ճորոխ, Բայ, Ատիճէ, Տիբերիս, Հոռոդանոս, Հոռենոս գետերն, եթէ անցնինք Ամերիկոյ և կեղբանական Ասիոյ բարձր գաւառաց ձորերուն մէջ, կը տեսնենք որ փոխանակ առոյգ ձորոց նմանութիւն ունենալու, աւելի մեծամեծ և զարհուրելի ճեղքերու կը նմանին, որոց կողերն զրեթէ գագաթնահայեաց են, 1500-2600 մէտր խորութեամբ՝ և երբեմն այնպէս նեղ, որ եթէ մեծ կտոր մը ժայռի փրթի և ինկնայ՝ բնական կամուրջ մը կը ձևացընէ, ուսկից կրնայ անցուիլ անվնաս. այսպիսի ձորոց գեղեցիկ օրինակներ կը տեսնուին ՚ի Ականտինաւիս, ՚ի Խոռուագաստան, ՚ի Գառնիուա և ՚ի Հայաստան, թէպէտ և քիչ տարածութեամբ և փոքր խորութեամբ: Զորերն ըստ իրենց դրից մեծութեան,



Խորութեան և լոյնութեան, զանազան անուամբ կը կոչուին,  
այսինքն՝ կիրած, կապան, պահակ, դրուեք, և այլն. զոր օրինակ  
Կապանք Տաւրոսի և Կովկասու, Պահակք Կիլիկիոյ, Դրուեք  
Իրերեան, Դրունք Կասպիական, Դրունք Աղուանից, կիրճ  
Թերմոպիլեայ, և այն, որոնք պատմութեան մէջ անուանի են:

85. Երկրիս մասիրևուրին ժայռից և շերանց ազդեցու-  
րիւնն չերևուրեան բաժանեան վրայ. — Սոսիւրի, Հերշեփ և  
Բուլիկի մասնաւոր ըրած քննութեամբք, վերջրս իմացուե-  
ցաւ թէ որշափ է ներմութեան քանակն՝ զոր երկիրս տարուան  
մը մէջ կ'ընդունի արևելն, և այս քանակս է 231,675 միու-  
թիւն առ ամէն 0.01 հարիւրորդամէզքը քառակուսի, որուն  
կէսը միայն երկրիս վրայ զգալի կ'ըլլայ, միւս կէսին մթնոլոր-  
տին մէջ ցրուելուն պատճառաւ: Արդ ներմութեան այս քա-  
նակն կրնայ հալեցընել 15 խորանարդ մէզքը բարձրութեամբ  
տառոյցի խաւ մը, որով ամբողջ երկրիս մակերևոյթն ծած-  
կուած ըլլայ: Այլուն ներմութիւնն հաւասարապէս բաշխուած  
չէ երկրիս վրայ, իրեն այլ և այլ դրից ու լերանց ելեկջ-  
ներուն պատճառաւ: ուստի կիմայք ոչ միայն լայնութեան  
աստիճաններէն կախումն ունին, այլ և զանազան գաւառաց  
ծովուն երեսէն ունեցած բարձրութեան աստիճանէն, հաւա-  
սար լայնութեան տակ եղած ցամաքաց և ծովուց տարածու-  
թիւնէն և դիրքէն, լերանց շղթայից ուղղութիւնէն, երկրին  
վիմագրական բնութենէն, բուսաբերութիւն ըլլալէն կամ չըլ-  
լալէն, և այն ամէն պարագաներէ՝ որք կրնան կերպարանա-  
փոխել արևուն ճառագայթացման արգասիքը:

86. Սողոսկունն զորգաչերմն, զորգաձևեւն և զորգանաւուն  
գծից. — Զուգաներմն զիծք կ'ըսուին այն գիծերն՝ որովք կը  
միանան տարեկան միջին ներմութիւն ունեցող երկիրներն:  
Զուգամատնն և Զուգաձմեռն գիծերն անոնք են՝ որոնք նոյն  
ձևուն և նոյն ամառն ունեցող երկիրներէն կ'անցնին: Այս  
գիծերն՝ լսու Հումպոլիք քննութեանց՝ ոչ միայն կանոնաւոր չեն  
և ոչ զուգահեռականն երկրիս զուգահեռականաց, այլ մանա-  
ւանդշատ անկանոն են, որոնք ըստ ինքեան պէտք էին այնպէս  
ըլլալ, եթէ երկրիս մակերևոյթն համասեռն ըլլար, և որով ներ-  
մութեան բաշխումն՝ լայնութեան աստիճաններէն, արևուն  
չարժմանէն և արևուն արգասիքներէն կանոնաւորուէր: Եւ յիւ-



Ձև 48. Գառնուց ձոր:

բաւի, զրեթէ երեսներորդ զուգահեռականէն այս զիծերն կը սկսին ծովլդէպ ՚ի բևեռս այլ և այլ կերպով, և ըստ չերմութեան աստիճանին և մասնաւորապէս զուգաձմեռն և

Աղջուկան կամաց աղջուկան կամաց կամաց :



զուգամասն զիծերն՝ կը ձևացընեն զանազան անկիւններ, և իւրենց ծամածուռ ընթացիւք կ'ապացուցանեն՝ թէ երկու մեծ ցամաքաց արևելեան մասերն այսօրուան օրս աւելի ցուրտ

են, քան զարևամտեան երկիրները. ինչպէս է ՚ի Լապրատոր և ՚ի Գանատա մէկ կողմին, և միւս կողմէն ՚ի Սիպերիա:

87. Եւրոպիոյ արևելեան կողմանց ցրտուրիւն. — Եւրո-

պիոյ տարեկան մէջին բարեխառնութիւնն՝ հետզհետէ կը նուազի մի և նոյն զուգահեռականի վրայ, որշափ գէպ ՚ի արևելք յառաջ երթանք, ինչպէս կը տեսնուի յաջորդ ցացակէն:

Քաղաքք Աստիճ. լայն. Աստիճ. երկ. Միջն բարեխառն.

Ամսդերտամ	$52^{\circ}, 22'$	$2^{\circ}, 30'$	$11^{\circ}, 9$
Վարշավիա	$53^{\circ}, 14'$	$18^{\circ}, 43'$	$8^{\circ}, 2$
Փոքէնհակ	$55^{\circ}, 41'$	$10^{\circ}, 15'$	$7^{\circ}, 6$
Մոսկուս	$55^{\circ}, 45'$	$35^{\circ}, 12'$	$4^{\circ}, 6$
Խազան	$55^{\circ}, 48'$	$46^{\circ}, 44'$	$1^{\circ}, 3$
Քրիստիանիա	$59^{\circ}, 56'$	$8^{\circ}, 28'$	$6^{\circ}, 0$
Ուրսալս	$59^{\circ}, 51'$	$15^{\circ}, 18'$	$5^{\circ}, 6$
Բեդերսպուրկ	$59^{\circ}, 58'$	$27^{\circ}, 59'$	$3^{\circ}, 8$
Դոպոլսք	$58^{\circ}, 12'$	$65^{\circ}, 58'$	$0^{\circ}, 6$

Նոյնպէս է նաև յԱմերիկա, որուն կիմային՝ շատ աւելի անոյշ է Սլլէկանի լերանց արևմտեան կողմն քան թէ արևելեան։ Այն այս տարբերութիւնն կը տեսնուի նաև երկու աշխարհաց ծովեղերեայ տեղուանքը՝ զոր օրինակ ՚ի Լապրատոր, ՚ի Գանատա և ՚ի Միացեալ Կահանգս շատ աւելի ցուրտ է՝ քան թէ ՚ի Սկանտինավիա և Եւրոպից ուրիշ ծովեղերեայ քաղաքաց մէջ, ինչպէս կը տեսնուի յաջորդ ցուցակին մէջ։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՄԵՐԻԿԱ

Քաղաքք	Աստիճ. լայն.	Միջն բարեխառն.
Նային	$58^{\circ}, 8'$	$3^{\circ}, 1$
Գեղեցք	$45^{\circ}, 47'$	$5^{\circ}, 6$
Կիւ-Եօռք	$40^{\circ}, 41'$	$12^{\circ}, 4$

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊ

Սդրէուլմ	$59^{\circ}, 20'$	$5^{\circ}, 7$
Կանդ	$47^{\circ}, 13'$	$12^{\circ}, 6$
Կէապօլիս	$40^{\circ}, 50'$	$17^{\circ}, 4$

88. Կերպին ցամաքաց ցրոռորիւնն. — Մեծամեծ ցամաք երկիրներու ներսերն՝ աւելի ցուրտ է քան ծովեղերեայ տեղուանքն ու կղզիները . այս պատճառուաւ ՚ի Բրիտանիա, յիւլանտա, ՚ի Ալգովիտիա, և այլն, հարաւային երկիրներու բայսերն շատ լաւ կը մշակուին, և ձմեռն շատ մեղմ և անոյշ է քան Միջանու և ամբողջ Լոմպարտիոյ ձմեռն, բայց մի ենոյն պատճառուաւ ամառներն ալ այնչափ տաք չեն, և շատ անգամ մասավայատ, անձրեւոտ են և երբեմն ձիւն իսկ կու գայ. ահա քանի մը օրինակ գնենք յաջորդ ցուցակով։

### ՅԱՄԱԲԱՑԻՆ ԿԼԻՄԱՑ

Քաղաքք Լայն. աստիճ. Միջն Զմռնային Ամառնային բարեխառնութիւն.

Պուտա	$47^{\circ}, 29'$	$10^{\circ}, 6$	$- 0^{\circ}, 6$	$21^{\circ}, 4$
Վիէննա	$48^{\circ}, 12'$	$10^{\circ}, 3$	$+ 0^{\circ}, 4$	$20^{\circ}, 7$
Խազան	$55^{\circ}, 48'$	$3^{\circ}, 1$	$+ 16^{\circ}, 6$	$18^{\circ}, 8$

### ՅՈՎԱՑԻՆ ԿԼԻՄԱՑ


Կանդ	$47^{\circ}, 13'$	$12^{\circ}, 6$	$+ 4^{\circ}, 7$	$18^{\circ}, 8$
Ա. Վալց	$48^{\circ}, 39'$	$12^{\circ}, 1$	$+ 5^{\circ}, 7$	$18^{\circ}, 9$
Էտիմալըրկ	$55^{\circ}, 57'$	$8^{\circ}, 8$	$+ 3^{\circ}, 7$	$14^{\circ}, 6$

89. Կլիմայից անխոփոխութրիւն. — Երկրաբանական վերյիեւալ պարագայք, հին ժամանակներէ մինչև ցայսօր շատ մեծ փոփոխութիւն չեն կրած, որով և կիմայք ինչ որ էին ատենօք՝ քիչ շատ նոյն են այսօրուան օրս ալ։ Ուստի Արակոյ կ'անդրադարձնէ թէ Մովսիսի ատենները՝ Երկրով քաղաքին քովերը՝ որ կը կոչուէր նաև Քաղաք Սրմաւենեաց, սրման կը հասուննար, ու չորցընելով միրգ կ'ըլլար. նմանապէս որթն կը մշակուէր, խաղող կու տար ու գինի կը շմնուէր։ Բայց մուգոյի մէջ որուն միջին բարեխառնութիւնն է 17-18 աստիճան, կը մշակեն արմաւենին, բայց պտուղ չի հասցըներ. և յԱլմերի 21 բարեխառնութեամբ աւելի կը հասնի քան թէ

այն երկիրները՝ որոց միջին բարեխառնութիւնն աւելի է՝ քան 22°. ինչպէս Պարսկաստանի քանի մը տեղերն՝ որպէս զի որթն պտղաբերէ՝ պէտք է մասնաւոր խնամք տանիլ ու սպաշտաւնել, և ըստ Լէոփոլ առ Պիւշի՛ Երկաթի կղզւոյն ու Գահիրէի մէջ՝ հազիւ կը մշակուին որթի տունկերն, որոց միջին բարեխառնութիւնն է 21-22 աստիճան: Այդ ասոնցմէ կը հետեւ ցընենք թէ Պաղեստինու կղիմայն Մովսիսի ժամանակ՝ չէր կրնար ըլլալ աւելի կամպակաս քան  $q^{21 \frac{1}{2}}$  աստիճան, այսինքն այժմեան Երուսաղեմի կղիմային հաւասար, որ քիչ մը աւելի է քան 21°, որով կրնանք ըսել թէ Պաղեստինու կղիմայն 3000 տարիէ՝ ՚ի վեր՝ գրեթէ ամենևին փոփոխութիւն չէ կրած: Այս պէս նաև մեր երկիրն կղիմայն ևս գրեթէ փոխուած չէ. վասն զի Ստրարոնի, Քսենոփոնի և մեր հին պատմչաց ժամանակէն ՚ի վեր՝ մի և նոյն պատսպարութիւնք կ'ընեն Հայք՝ սաստիկ ցրտոյն պատճառաւ, մի և նոյն պտղաբերութիւնք կը տեսնուին ցայսօր յամենայն գաւառո՞ւ զորս կը յիշատակեն վերոյիշեալ պատմագիրք: Նմանապէս Տոսպ գաւառին բարեբերութիւնն, այդիք, անդաստանք և մշակութիւնն՝ ինչ որ 4000 տարի առաջ էր՝ նոյնպէս է և հիմայ, որով յայտնի կը տեսնուի թէ կղիմայք անփոփոխ են, (Ձև 50):

Սակայն տեղ տեղ ալ փոփոխութիւնք կը տեսնուին, ինչպէս Դիոգոր Սեկիլիացին կ'ըսէ՛ թէ Գաղղիոյ մէջ գետերն շատ անգամ կը սառին, որոց վրայ ծանր սայլեր կ'անցնէին. իսկ հիմայ չեն սառիր: Վիվարէի մէջ յառաջադրյն ամառն աւելի տսք էր քան թէ հիմայ: Վեշտասաներորդ դարուն մէջ այլ և այլ տեղեր ծովուն երեսէն 600 մէդր բարձրութիւն ունեցող լեռներն խաղող կու տային, մինչգեռ հիմայ նաև արեգգէմ տեղուանքն խաղող չեն հասցըներ: Անդղիոյ մէջալ նմանօրինակ փոփոխութիւնք կը տեսնուին. բայց այս փոփոխութիւնքը մշակութեան պատճառաւ է, և մասնաւորապէս բազմաթիւ անտառաց հատմամբ:

90. Բաժմանունն իյիմայից. — Տարեկան միջին բարեխառնութենէն, օրական, ամսական և եղանակին բարեխառնութեան փոփոխութենէն, ինչպէս նաև ամսառնային և ձմեռնային բարեխառնութենէն, կազմուած են հետեւալ յաջորդեթիւնները կղիմայք՝ այսինքն են.



Ձև 50. Բաբեր:

մ. Զերմագոյն կլիմայ	.	.	.	27°-28°
Շ. Զերմ կլիմայ	.	.	.	25°-20°
Դ. Անոյշ կլիմայ	.	.	.	20°-15°
Դ. Բարեխառն կլիմայ	.	.	.	15°-10°
Ե. Յուրտ կլիմայ	.	.	.	10°- 5°
Դ. Ցրտագոյն կլիմայ	.	.	.	5°- 0°
Է. Սառուցեալ կլիմայ	.	.	.	-1°

Այս կլիմայք կը տեսնուին թէ մէկ և թէ միւս լայնութեան կողմը, որով ընդհանրապէս հարաւային լայնութեան 60 երորդ և 50 երօրդ աստիճանաց մէջ եղած երկիրներու կլիմայն ցրտագոյն է. ընդ մէջ 50 և 40 աստիճան ունեցող գաւառաց կլիմայն բարեխառն է. ընդ մէջ 40 և 20 աստիճանաց՝ անոյշ կլիմայ է, իսկ 20 աստիճանէն ուսեալ դէպ 'ի հասարակածը' չերմ և չերմագոյն կլիմայք են:

91. Հաստատուեն, փոխիսական և տարավայնան կլիմայք. — Վերոյիշեալ եօթն կլիմայք տեղական պարագայեց ազգեցութենէն, այսինքն՝ լեռնոտ ըլլալէն կամ ըլլալէն, ծովու երեսէն ունեցած բարձրութենէն, երկրին կազմութենէն, լայնութեան և երկայնութեան աստիճանաց տարբերութենէն, կը փոխուին մի և նոյն գուգաչերմն գոտեաց մէջ, և կ'ունենակ հաստատուեն, փոխիսական և տարավայնան կլիմայք:

Հաստատուեն կ'ըսուին այն կլիմայք, որոնք ամբողջ տարուան մէջ փոքր տարբերութիւն կը ցուցընեն չերմութեան և ցրտութեան մեծագոյն և փոքրագոյն աստիճանաց մէջ, այսինքն 6 կամ 8 աստիճանէն աւելի չէ այս տարբերութիւնս այսպիսի կլիմայ ունի ֆունչալ, որ ամենատաք ամսուն միջին բարեխառնութիւնն է 24°, 2°, իսկ ցրտագոյն ամսոյն ալ 17°, 2°:

Փոխիսական կ'ըսուին այն կլիմայք, որոնք զգալի կերպով կը փոխուին, այսինքն 16էն մինչև 20 աստիճան տարբերութիւն կ'ըլլայ ընդ մէջ ամարան և ձմերուան չերմութեան, ինչպէս Բարիգու կլիմային ամենատաք ամսոյն միջին բարեխառնութիւնն է 18°, 5°, և ամենացորս ամսոյն 2°, 3°. Նոյնպէս Լոնտրացի կլիմայ, տաք ամսոյն 18° է և ցրտագոյն ամսոյն 3°, 2°:

Տարավայնան կլիմայք կ'ըսուին անոնք՝ որոնք շատ մեծ

փոփոխութիւններ կը կրեն, այսինքն չերմութեան տարբերութիւնն՝ 30 աստիճանէն աւելի կամ քիչ մը պամկաս կ'ըլլայ. ինչպէս Նիւ-Եօռքինն, որուն ամենաչերմ ամսոյն միջին բարեխառնութիւնն է 27°, 1°, և ցրտագոյն ամսոյն 3°, 7. Ամանապէս Բերինի կլիմայն, որուն միջին բարեխառնութիւնն ամենատաք ամսոյն 29°, 1°է, և ցրտագոյն ամսոյնն՝ - 4°. 4°, ինչպէս նաև Երևանու կլիմայն, որուն չերմութիւնն 35° էն կ'իջնէ - 8°:

## ԳԼՈՒԽ Է

ԵՐԿՐԻՄ ՆԵՐԲԻԽ ԶԵՐՄՈՒԹԻՒՆՆ

92. Երկրիս Աերիքին չերմուրիշնն. — Արեգակէն և ուրիշ աղբիւրներէն ընդունած չերմութենէն զաւ՝ երկրիս ունի յինքեան իր չերմութիւնը, որ թէ հին և թէ նոր անթիւ երկրաբանական երևութից պատճառ է: Հազարաւոր փորձերով յայտնի է՝ որ երկրիս ներքին զանգուածոյն չերմութիւնն կ'առաւելու այնչափ՝ որչափ երկրիս շառաւիզին երկայնութեամբ իջներու ըլլանք, և կ'անի միջին կերպով՝ մէկ աստիճան առ 33 մէդր խարութեամբ. ուստի 3 հազար մէդր խորութեամբ՝ ջուրն եռացած վիճակի մէջ պիտի գտնուի, այս ինքն 100°, և եթէ օրէնքն այսպէս շարունակուի, 20 հազար մէդր խորութեամբ՝ չերմութիւնն պիտի ըլլայ 666 աստիճան, այսինքն այնչափ զօրաւոր՝ որ կրնաց հալեցընել կաւերուն և ծծըմբատից մէծագոյն մասը. և դէպ 'ի երկրիս կեղրոնն, այսինքն 6366 հազարամէդր խորութեամբ՝ պէտք է այնպիսի չերմութիւն մ'ըլլայ, որ ոչ միայն հալեցընէ, այլ և գորշիսացընէ որ կիյշ ծանօթ նիւթ, և այս զարմանապի չերմութիւնն է 195,000 աստիճան: Սակայն ոչ ոք կրնաց հաւասառել թէ չերմութեան աճման այս օրէնքն կը առէ մինչև երկրիս կեղրոնն. և հիմայ մանաւանդ երկրաբաններէն ոմանք, աւելի հակամէտ են այն օրէնքը ընդունելու, և թէ 200 կամ 250 հազարամէդր խորութեամբ՝ մեծագոյն չերմութիւնն ըլլայ, այսինքն 7000-8000 աստիճան, չերմութիւնն մը որուն չկայ մարմին մը որ կարենայ գիմանալ, և շատ իսկ բաւական է այժմեան երևութից պատճառը տալու և մեկնելու, որք և սովորաբար երկրիս կեղրոնին հոսանիթին և հրաշէկութեան կ'ընծայուին:

93. Զերմուրեկան անփոփոխ կարգ. — Երկրիս չերմութեան աճումն՝ որ և իցէ յարաբերութիւն ալ որ ունենայ խորութեան հետ, միշտ հաստատուն և անփոփոխ չերմութիւն ունեցող կարգէն կը սկսի, թէ այն տեղուանքը՝ ուր աւելի արագ կը տեսնուի չերմութիւնն, և թէ հոն ուր որ ծանր և դանդաղ կ'երեխ վերոյիշեալ միջին չերմութենէն: Այս անփոփոխ կարգին մակհաւասարութիւնն՝ ամէն տեղ նոյն չէ, այլ կը փոխուի լայնութեան աստիճաններէն և տեղույն պարագաներէն: սակայն իր չերմութիւնն կը համապատասխանէ զրեթէ տեղույն միջնորդտին միջին չերմութեան: Շատ հին ժամանակէ՝ 'ի վեր ծանօթ էր երկրիս չերմութեան անփոփոխ կարգն. 1671ին Գասինի նշանակած էր՝ որ Բարիկու Դիտարանին ստորերկինայ յարկաց չերմութիւնն՝ բնաւ չէր փոխուեր, և նոյնպէս վերջին ժամանակներս Լավուազիէ և Պուվար փորձեցին մասնաւոր գործեաք նոյն դիտարանին մէջ 27 մէզր և 6 ասանորդամէզր խորութեամբ, և գոտան որ 75 տարիէ՝ 'ի վեր, միշտ 11° և 10 մանրամասն էր չերմութիւնն:

94. Երկրիս երդին չերմուրեկան ժագումն. — Երկրաբանք երկու տարրեր կերպով կը բացատրեն երկրիս ներքին չերմութեան ծագումն, զոր երկրիս կը պարունակէ անփոփոխ կարգէն վար: Ոմանք կը համարին նախնական չերմութեան մնացորդ մը, զոր մոլորակաց ճեայսման ժամանակ ունէր, և դրուն ասստկութիւնն այնպիսի էր, կ'ըսեն, որ կրնար զերկիրս ամբողջ հեղուկ զանգուած մ'ընել, որ ապա դարեր անցնելով և միջոցին մէջ ճառագայթերով կը պաղի, և մակերեւոյթն հաստատուն մարմին կը դառնայ. սակայն դէպ 'ի կերպոն հեղուկ վիճակի մէջ մնալով: Բուասոնի հետևողք այս չերմութիւնն կը զանազան նախնական չերմութենէն, և կը համարին թէ երկրիս արևային ամբողջ դրութեան միջոցին մէջ շարժելու ատեն, անցած ըլլայ մէկ մը ամենաստաք գոտիէ, և մէկ մ'ալ ցուրտ գոտիէ մը. ուստի նախ հրաշէկ դարձած ըլլայ մինչև խորութեան մէկ աստիճան, և ետքը կրուսած ըլլայ ընդունած չերմութեան մաս մը: Այս ենթագրութեամբ երկրիս հիմայ՝ միջոցին ցրտագոյն տեղուանքը պիտի գտնուի, քան նախընթաց դարերուն մէջ լնթացած տեղերը, և որով մակերեւութին չերմութեան աճման օրէնքը դէպ 'ի կերպոնն քիչ խո-

րութեան համար կը վերաբերի միայն: Բայց ինչ որ ալ ըլլայ այս չերմութեանս ծագումն, կարողութեան և խորութեան աստիճանն, և թէ մինչև ուր զգակի կ'ըլլայիր հալիչ և գոլորշացուցիչ զօրութիւնն, որոնք թերեւս անլուծանելի խնդիրը ըլլան, սակայն յայտնի է որ չերմութիւնն կայ, և թէ կարեւոր ու բազմաթիւ երկրաբանական երեսոյթք անոր արգասիք և միանգամայն անդխտելի հաւաստիք են: Այսպիսի արգասիք ումանք՝ հիմայ ևս կը կատարուին, այլք հին դարսոց մէջ եղած են, ուստի կրնանք բաժնել յայժմեան և 'ի հին արգասիս:

95. Երկրիս չերմուրեկան այժմեան արգասիք. — Երկրիս չերմութեան գիսաւոր արգասեաց մէջ են չերմութիւնը, կազեղեն աղբերք, երկրաշարժք և հրաբուղչը:


96. Զերմուկը. — Զերմուկը կ'ըսուին այն ջրերն՝ որոնք երկրիս այլ խորութենէն կը բոլիսն տեղույն միջին չերմութենէն աւելի շատ չերմութեամբ: Այսնց ծագումն նոյն է պազ ջրոց աղբերաց ծագման հետ. այսինքն՝ կամ անձրւեալին ջրերէն են, կամ ձիւներէն և կամ սառոցներէն, որոնք թափանցելով և մղուելով ժայռից ճեղքերուն միջն, կիշնեն այլ և այլ խորութեամբ երկրիս ընդերքը, յորս յետ հաւասարակը ընութիւն գտնելու հասած կէտին չերմութեան հետ, դարձեալ երկրիս մակերեւոյթը կը սկսին երեւալ, կամ մակհաւասարութեան պատճառաւ, կամ կազերու ճնշմանէն և կամ նոյն իսկ գործեաց սաստկութենէն: Տարրաբանական բազագրութիւնք որ երկրիս խորերը կը հանդիպին, թերեւս ջուրը սաքցընելու ալ պատճառ են, բայց սույզ կերպով չի գիտցուիք: Զերմուկներ ամէն տեղէ կրնան բղիսիլ, նաև ծովէն և գետերէն ալ, ինչպէս որ աղբերաց համար ըսկինք:

97. Զերմուկներու բարեկաստենորիւն. — Զերմուկաց բարեկաստութիւնն կը փոխուի տեղույն միջին բարեկաստութենէն քանի մը աստիճան վեր՝ գրեթէ մինչև եռացման աստիճանն: Հայաստանի մէջ կը գտնուին այսպիսի չերմուկք զոր օրինակ՝ Արծաթի և Խիճա գեղերուն չերմուկներն՝ որք հինգերորդ գարէն 'ի վեր անուանի են. կան նաև Բամբակայ լերանց վրայ, նմանապէս յԱխալցխա, 'ի Հասանլալա, 'ի Խընուս, յԱխասաղ, 'ի Նիրակ՝ Ախորեան գետոյն մօտ, և այլն, որոց ջրերն ընդհանրապէս ծծըմբային և երկաթային են, և

Յերմութեան բարեխառնութիւնն 10-40 աստիճանի կը հասանի . 'ի թիվիս ևս շատ առատ են ծծմբային ջերմուկք, որոց յերմութիւնն 43 աստիճանէ : Եւրոպիոյ ջերմուկքն՝ որոնք բազմաթիւ են, շատ անուանի են թէ իրենց օգտակարութեամբ և թէ յերմութեամբ, ինչպէս յաջորդ ցուցակին մէջ կը տեսնուին .

Քուրմէօյր , Բիեմնդի մէջ	.	.	.	.	34°
Վիշի	.	.	.	.	40°
Էքս, Սաւոյիոյ մէջ	.	.	.	.	45°
Պարէժ 'ի Գաղլիա	.	.	.	.	49°
Լուէլ 'ի Զուիցերի	.	.	.	.	52°
Տաքս 'ի Գաղլիա	.	.	.	.	60°
Սագուի յիտալիա	.	.	.	.	60°
Էս լա Շաբէլ, Բրուսիոյ մէջ	.	.	.	.	62°
Գառլապատ, Պոհեմիոյ մէջ	.	.	.	.	74°
Շոտէդ 'ի Գաղլիա	.	.	.	.	88°
Թրինքերա յԱմերիկա	.	.	.	.	90°
Բէքում յԻսլանտա .	.	.	.	.	100°
Կէյզէր յԻսլանտա .	.	.	.	.	124°

98. Մեծն կայզէր իսլանտիոյ . — Մեծն կայզէր յերմ ջրայ ընդհատ աղբիւր մ'է, որուն խողովակն 23 մէդր խորութիւն ունի և 3 մէդր լայնք . վրայի բաժակին կամ աւազանին տրամագիծն՝ 16-18 մէդր է . աւազանին և խողովակի կողերն՝ կարծր և միսայր գայլախազի խաւով մը ծածկուած են, զոր եռացեալ ջուրն՝ բղիսելու ժամանակ կը թողու վրանին : Սակայն կայզէրի ջուրն պարզ, մաքուր և ականակիտ է պաշվիճակի մէջ, և եթէ անօթոյ մը մէջ դնելու ըլլանք ու տարիներով ալ պահենք, ամենեկին դիրս մը չի թողուր անօթոյն յատակը, այլ երբ երագ կերպով եռացընենք ջուրը անօթոյ մը մէջ, կը տեսնենք որ գայլախազի մանեակ մը կը ձեւացընէ անօթոյն կողերուն վրայ : Ձևն 81 կը ցուցընէ Կայզէրի ժայթքըման ժամանակը, վասն զի ամէն ատեն չի ժայթքիր, այլ ընդհատ ընդհատ . ամէն անգամ ժայթքելէն առաջ երրեմն երբեմն ուժգին որոտման և լրոյ սաստիկ յուզման ձայներ կը լսուին, ապա խողովակն և աւազանն ջրով լեցուելէն վերջը,



ԶՀ 51. Մեծն կայզէր յԻսլանտա :

խողովակին մէջի ջուրն բրդածե կը բարձրանայ, և յանկարծակի շառաշմամբ ահագին սիւնածե ջրոյ և գոլորշեաց ցայտք մը կը պանայ 'ի վեր, և կը սկսի հոսիլ ինքն իր վրայ աւազանին մէջ. քիչ ժամսնակէն կը փոքրկանայ սիւնածե ցայտքն, և ապա դարձեալ յանկարծակի կը բարձրանայ, և յետոյ բալորովին կը դադրի: Ժայթքելու ատեն երբեմն ուժգին կերպով գուրս կը նետուին քարեր, վայտեր և ուրիշ նիւթեր, զօրս մէջը կը ձգեն ժայթքման երեսոյթը տեմնելու համար. ժայթքման բարձրութիւնն է 60 մէտր, բայց երբեմն կը պակսի և կ'առաւելու, ինչպէս յամին 1770ին՝ 110 մէտրէն աւելի բարձրացեր է:

99. Ջերմուրկներոց մէջ բովանդակուած նիւթեր. — Ջերմուկը բնաւ պարզ և մաքուր չեն, այլ միշտ խառն են այլ և այլ նիւթոց հետ, ինչպէս թթուածին, բորակածին, ջրածին, երկաթ, սղլինձ և մագնան՝ աղային վիճակին մէջ, թթուուտք բը նածխական, ծծլմբային, ծծլմբական, քլոռային, բորակական, ոսկերորական, լուսածնական, նատրոն, ծծլմբատք, ծծլմբուկը, ենթածծլմբուկք, քլոռուկը, և այլն: Երբեմն նաև կենդանական և բուսական մարմնոց մասնիկը ալ կը գտնուին:

Այսպիսի նիւթերով՝ զանազան մեծութեամբ դէզեր և ցամաքներալ կը ձևացընեն ներմուկըն. զոր օրինակ՝ Պամպուքալիսի ներմ աղբիւրն և Վահերպայի ներմուկըն՝ իրենց նիւթերով բոլոր մարմինները կը պատեն, և նոյն իսկ իրենց ջրանցքը կը դոցեն: Գառլուպատի երեսելի ջրերն՝ այնպիսի ցամաք մը ձևացած են, որուն վրայ բոլոր քաղաքն շինուած է:

100. Կապելին բյանենք. — Կապելէն բյամմանց զարմանակի երեսոյթներն՝ զին ժամանակէ 'ի վեր մարդուս հետաքրքրութիւնը շարժած են. ինչպէս Սրբատուտէլ, Ստրաբոն, Պատմանիսա, Պլինիոս և այլ մատենագիրք նկարագրած են աւելի կամ պակաս ճշութեամբ:

Իսկ այսօրուան օրս՝ այս նիւթոյս վրայ խօսողք՝ բաւական չեն համարիր պարզ պատահարաց նկարագրութեամբն, այլ կը չաման երեսոյթին պատճառներ տալ և լաւ բացատրել նախնական ծագութիւնները: Վալիդների, Սպալանցանի, Պալլաս, Պրայզլակ, Վոլթա և այլք բազումք փորձեցին երկայն բարակ հետազօտելով, և ասոնց կարծեաց վրայ վերջի տարիներս Երկրաբանութեան յառաջադիմութեան նորանոր ուսմանական

դիտողութիւններ տւելնալով՝ ըստ բաւականի խնդիրն պարզցաւ: Բայց այսու հանդերձ չենք կրնարըսել՝ թէ բնական կազեղէն բղխմանց զրութիւնն և վարդապետութիւնն բոլորովին ստուգուած է, մանաւանդ որ գանազան երկեղթք՝ զոր յառաջ պիտի բերենք, երկրիս ներքին ներմութենէն կախումն ունին. այլ այս յայտնի է՝ որ կազերն կը բղխմանց վառած կամ կիսով մարած հրաբուղիներէն, իսկ ուրիշ բղխմանց ծագութիւնն երկրիմ խորը հանդիպած սուրբաբանական բաղադրութենէն է:

Հրաբուղիներու մօտ և նոյն իսկ հեռու ալ բացուած փուսերէն ելած կազերն, որ կ'օգնեն նաև կազեղէն աղբերաց անմոն, գլխաւորապէս երեք տեսակ են, այսինքն կազ ջրածինածխատ կամ ծծլմբատ, կազ բնածխական թթուուտ, և կազ ծծլմբային թթուուտ:

101. Կազ ջրածին բնածխատ. — Այս տեսակ կազին բը դիմունքն շատ տեղ կը գտնուին, ինչպէս Ապենինեանց երկայնութեամբը. միայն Մուտենայ գաւառին մէջ 11 բը դիմունք կը գտնուին, յորոց ոմանք երեսելի են Սպալանցանի փորձերով: Եթէ այսպիսի բղխմոնքը վառենք՝ լցու և ներմութիւն կու տան, և կը ձևացընեն բորբաքեալ աղբիւրներ, զօրս տեղ տեղ բանի կը բերեն և կ'օգտուին. 1790ին ժամանակ՝ Ապենինեանց Պարիկացցոյ աղբեր մօտ փուռ մը շիներ էին կրոյ, զօր կը տաքցընէին պարզ այս կազին ներմութեամբ:

Զինաստանի Սիու-Չըհուան գաւառին մէջ անթիւ են այս կազին բյամմունքներէն, յորոց ոմանք երկրիս երեսէն, ոմանք խորէն կը բղխին, և կ'ըսուին ջրահրային ջրնորդ, և այս կազին ներմութեամբ աղստին չուրն կը գոլորշիացընեն աղը հանելու համար:

Երկրիս խորերէն այս ջրածին կազն երբեմն բնածխատ, երբեմն ծծլմբատ բղխելու ժամանակ, շատ անգամ իրմէ առաջ կը մէջ զլուրը և տղմային զանազան նիւթեր՝ մէջը լուծուած աղեր բովանդակելով, և այն ատեն կը ձևանան աղային տղմէ կամ տղմային հրաբուղիք, որոնք փոփոք թերատածե կոնի կը նմանին, քիչ բարձրութեամբ, հրաբուղային բաժակ հիմնալով, ուսկից ընդհատ ընդհատ և շառաջամամբ կ'ելնէ տիղմ կազերէն մղուած:

Սիկիլոյ, Խոխի, Երոսկիոյ, Ասիոյ և նաև Ամերիկոյ

գաւառաց մէջ ամենահին ժամանակէ 'ի վեր կը դանուին այսպիսի աղային տիղմք. բայց զարմանալի են կասպից ծովուն չորս կողմը տղմային բղխմունք, որոնցմով կղզիք և բլուրք կը ձևանան:

102. Կազ բնածխական բրուգուտ. — Զուրհուրելի է այս մահաբեր կազին բղխումն կուէվո-Ռւբաս կամ Թունաւոր Ջորին 'ի ծաւա. այս կազին քանակն այնշափ շատ է հոն, որ ամէն կենդանիք և թռչունք որք անկէ անցնին՝ գետին կ'ինան անշնչացած. այս ձորն լիէ վազրի, ագռաւուց, թռչուց և նոյն խակ մարդու ուղրուեօք, և բաց զերեղմանի ահաւոր տեսք մը կ'ընծայէ տեսողաց: Խտախիոյ մէջ երեւելի է այսպիսի կազի կողմանէ Շան Ա.յրն, բոցցուղիքի մօտ. այս կազն օդէն ծանր ըլլալուն պատճառաւալ հոն գետնի վրայ կարգ մը կը ձեւացընէ 0<sup>o</sup>.20 բարձրութեամբ, յորում շունը չի կրնար ապրիլ ուստի և Շան Ա.յր կոչուեր է: Այս կազն զուտ չէ, այլ բաղադրուած է այլ և այլ կազերէ, յոր՝ ըստ Պիրայլլակի, բորակածին կայ 0.30, թթուածին 0.10, և բնածխական թթուուու' 0.40:

Այս կազին քանակն որ կը բղիքի բոլորովին մարած հրաբուղմներէն ամենաշատ է, ըստ հայուսոյ Պիրով վարժապետի միայն Լաախ երկրին մօտերը՝ տարի 80 միլիոն խուրանարդ մէզր կը բղիքի, և մթնոլորտի մէջ կը տարածուի:

103. Ծծրիբահանեք. — Ծծրմբային կազն շատ անգամ գոլորշեաց հետ մէկտեղ կը բղիքի՝ կիսով մարած հրաբրդիսաց բաժակներէն և ձեղքերէն, այսպիսի տեղուանին կ'ըսուին ժծրիբահանեք. ատոնցմէ շատ հիներ կամ, ինչպէս Բոցցուոլիինն, որ Ստրաբոնի ժամանակէն 'ի վեր մինչեւ հիմայ կայ: Նաև հրաբուղմներ երբ նիւթեր և լաւայ չեն ժայթքեր, աւելի կամ պակաս և երբեմն ուժով գուրս կու տան ծծրմբային կազ. այս պիսի ծծրմբահանք կայ նաև 'ի բաղէց և այլուր:

104. Ցաք գորդշնաց բդիստուն. — Կազեղէն բղխմանց խմբին մէջ կրնանք դնել նաև 100 աստիճան շերմութեամբ գոլորշեաց ցայտքն, որոնք երբեմն 20 մէզր կը բարձրանան գետնին երեսէն վեր, շոգենաւաց սուլիու ձայնին ման շառաշամք. այս տեսակ ցայտք կը տեսնուին թէ վառած հրաբրդիսաց և ծծրմբահանքաց մէջ, և թէ ջրանիստ երկիրներու վրայ: Չերպովի երան և Գասպէլ-Նուովոյի գոլորշեաց ցայտքն՝ կրային

ջրանիստ ցամաքաց վրայ կը դանուին: Այս գոլորշեաց ցայտքն՝ երկրիս երեսը զանազան թթուուտներ կը բերեն, յօրս ոսկերուրական թթուուտ ալ կը դանուի. կան նաև այսպիսի ցայտք 'ի Տանտուրակ լեառն, որք երբեմն երբեմն ուժգին կերպով դուրս կը ժայթքեն:


## Գ Լ Ո Ւ Խ Լ

ԵՐԿՐՄՇԱՐԺ

105. Երկրաշարժ. — Երկրաշարժ կ'ըսուի այն պակաս կամ առաւել բուռն ցնցողական շարժումն, որ շատ անգամ երկրիս մակերևութին վրայ կը պատահի ահաւոր երեւոյթներով: Այս շարժումն երեք կերպով կ'երեւի. նախ ծածանողական այսմբն հորիդոնական կերպով գետինը հետպհետէ բարձրացնելով և ցածցընելով. երկրորդ՝ լեդրաւական շարժմամբ. և երրորդ՝ յորձանապույտ որ ահաւորագոյն է քան զնախին. թացս: Որ և իցէ կերպով ալ ըլլայ երկրաշարժն՝ միշտ քանի մը երկվայրկեան կը առէ. բայց կրնայ շարունակել օրերով, ամիսներով և տարիներով իսկ լընդհատ ընդհատ: Սովորաբար շարժն կը տարածուի ուղիղ գծով և կամ ալէձև՝ երկվայրկենի մէջ Ծ բիւրամէզր, սակայն երբեմն ալ բոլորաձև կը տարածուի կեղրոնէն դէպ 'ի շըլապատն:

106. Երկրաշարժին սահմանն. — Շատ փոփոխական է երկրաշարժին սահմանն. երբեմն ամենափիշ տեղ զգալի կ'ըլլայ շարժն, ինչպէս 1828 վետրուար 2ին Նէապոլսոյ մօտ Խակիս կղզւոյն մէջի հանդիպած շարժն, զոր մերձաւոր կղզիներէն և ցամաքային մօտաւոր քաղաքներէն ոչ որ զգաց. երբեմն սաստիկ կերպով զգալի կ'ըլլայ ընդարձակ լայնութեամբ, ինչպէս 1826 յունիս 17ին 'ի Կոր-Կրանատա հանդիպեցաւ, որ հազարաւոր քառակուսի հազարամէզր տեղ զրաւեց. երբեմն կ'ընդարձակի և զգալի կ'ըլլայ ընդ երկայնութիւն. ինչպէս եղաւ Լիզունայի գետնաշարժն 1785 նոյեմբեր 1ին, որ միանգամյան զգալի եղաւ բարս Սպանիոյ, Անդղիոյ, Սկովտիոյ և 'ի Գանձերի. միով բանիւ մէկ կողմէն ընդգրիեց Լարոնիոյ սահ-

մանը, և միւս կողմէն՝ մինչև Մարդինենկա, կործանելով Վիզ-  
պոնտյոյի հետ Ֆէս, Մարոք, Մեքնէզ և ուրիշ քաղաքներ։




Ձև 52. Լիճ՝ լեռներ Վանայ։

107. Երկրաշարժին արգասիք. — Երբ Երկրաշարժն մեղմ  
է և փոքր տարածութիւն ունի՝ կ'իմացուի տանց կանթեղաց

և զանգակաց ծածանմանէ, ու կահ կարասեաց ցնցմանէ.  
Երբ Երկրաշարժն քիչ մ'աւելի ուժով ըլլայ՝ իսկոյն տանց

Երկրաշարժն բոլոր իր ուժով երևնալու ըլլայ, ոչ միայն կը քսնդէ կը կործանէ չենքեր, իշխնայատակ կ'ընէ ամբողջ քառաքներ, այլ երբեմն այ ինչ տեղեր կը բարձրացընէ, և ուրիշ տեղեր կը ցածցընէ (Ձև 53). Երբեմն ընդարձակ ճեղքեր և անդունդներ կը բանայ (Ձև 54), և երբեմն լեռներ կը կործանէ. Երբեմն նորանոր լիճեր կը ձեւացընէ, և եղածները կը ցամքեցընէ, կ'ընդհատէ և կամ կը փոխէ գետոց ընթացքը. կը դադրեցնէ աղբիւրներ՝ ու նորանոր աղբիւրներ կը բոլիւցընէ, միով բանիւ ամէն տեսակ կերպարանափոխութիւն կ'ընէ երկրիս վլրայ, որոց անթիւ օրինակներ կը մատուցանէ հին և նոր պատմութիւնն : Ահա ըստ այսմ՝ ի քաղաքն Օպբիդոյ 'ի Կալապրիա'



Ձև 53 Հակումն գետնոյ :

1783ին մեծ փոս մը բացուեցաւ բլրան մը մօտ՝ և շարժմանէն վերը ահազին անդունդ մ'եղաւ. այսպէս նաև երբեմն ալ երկրաշարժէն տաք ջուր, ջրային գոլորշիք, տիղմ, սև ծուխ և բոց կը ժայթքին, ինչպէս հանդիպած է Լիզպոնայի երկրաշարժին ժամանակ:

108. Ծագումն և պատճառ երկրաշարժին. — Մինչև հիմայ

գեռ որոշակի չի գիտցուիր երկրաշարժին ծագումն և պատճառն : Ամէն կարծեաց մէջ որք մինչև ցարդ եղած են, ընդունելին այն է՝ որ կ'ըսէ թէ երկրաշարժին պատճառն գոլորշեաց մնշումն է, զոր կը կրեն երկրիս խաւերն : Ուստի ըստ ենթադրութեան՝ թէ երկրիս կերպունն հրաշէկացեալ վիճակի մէջ կը գտնուի, անտարակոյս վերին կարգերն հետզհետէ կը պաղին և հաստատուն մարմին կը գառնան, զանազան կազեր և գուրշիք ձեւացրնելով. ասոնք չգտնելով միշտ ճամբայ կամ որ և իցէ անցք մը գուրս ելնելու համար, կը ժողովուին 'ի խորս երկրի և կը մնշեն զիրար, մինչև որ իրենց առածգութիւնն յաղթէ ամէն արգելի և ընդգիմութեանց . և ահա այն ատեն ահաւոր զօրութեամբ կը ժայթքին ճեղքուած տեղերէն, և եթէ շկան ճեղքեր՝ ամբողջ ժայռերուն՝ վարէն դէպ 'ի վեր և կամ հորիզոնական կերպով ոյժ կու տան, մեծամեծ ցնցմունք և ահազին կորուստներ պատճառելով երկրիս, մինչև որ հաւասարակշռութիւնն հաստատուի լոնդ մէջ ժայթքման գոլորշեաց և ընդդիմութեանց , և ահա անդէն շարժն կը դադրի:

109. Նեապոլոյց երկրաշարժը 1783ին. — Բատ պատմութեան վիշենցիսփ, կրիմալտինի, Համբլլընի, Սոլոմիէօի և այլոց, կալապիտոյ երկրաշարժը 1783ին ընդհատած են և փոխած այլ և այլ գետոց ընթացքը, գետնի վրայ մեծամեծ ճեղքեր բացեր է մինչև 150 մէդր լայնութեամբ, յորոց առատութեամբ ջրեր բլիսելով և յանկարծական լճեր ձեւացընելով սաստիկ ուժով հեղեղատի նման կը հոսին մինչև ցարդ։ Այս շարժմանց սաստկութիւնն մինչև Մեսինայի ծոցին մէջ զգալի եղած է. Մեսինա քաղաքն կիսով չափ կործանուած է, 29 գիւղաքաղաքաց հետ, ծովուն յաստակն ցածցեր է, ծովեղերքի վրայ զանազան ճեղքեր և տեղափոխութիւնք երևցած են, միով բանիւ ահաւոր ամայութիւն մը տիրած է այն տեղուանքը:

110. Երգնելայի երկրաշարժը. — Յամին 1048ին պատճաճ Երգնելայի երկրաշարժով բոլոր քաղաքը կործանեցաւ. 1168ին 12 հազար հոգիք մեռեր են. 1236ին այլ և այլ շենքեր կործաներ են. 1268ին 15 հազար հոգիք վլաստակաց մէջ մեռեր են. 1281ին գրեթէ ամբողջ քաղաքն կործանուեր է, նոյնպէս 1287ին և 1290ին շարժեր եղեր են, այլ շատ շեն վեասած. 1336ին՝ օրը եօթն անդամ՝ քաղաքն և շրջակայ տեղերն

Երկրաշարժին տառաներ են. 1374ին կրկին անգամ շարժելով, պարխապները կործաներ է. 1458ին՝ 32,000 հոգիք թաղուեր են աւերակաց և գետնի տակ, նոյնպէս 1482ին և 1576ին այլ և այլ շարժմունք եղեր են. իսկ 1584ին բոլոր քաղաքն քանդեր է. վերջին շարժն 1784ին համդիպեր է:

Այսպիսի երկրաշարժք շատ անգամ պատահած են նաև 'ի Կարին, 'ի Սիւնիս յամին 728, 1681. 'ի Վան և 'ի Խլաթյամին 1276, 1441, 1649, և այն: 1700ի ժամանակները հասեն գաւառին մէջ եղած սաստիկերկրաշարժին Երասխոյ ընթացքն խափանուեր է և ուրիշ ճամբով սկսեր է վազել: 1648ին շատ մեծ շարժ եղեր է Վան քաղաքին մէջ, յորում պարիսպք, եկեղեցիք, մղկիթք, ապարանք և շատ ուրիշ չէնքեր հիմնայատակ եղեր են անթիւ բազմութեան հետ մէկտեղ, և այս երկրաշարժն ապրիլի 2ին սկսելով տեսեր է մինչև յունիսի վերջերը, յորում նաև Վանայ ջրջակայք մեծար մասսամբ կործանուեր են, աղբիւրներ ցամքեր, առուակներ դադրեր և ոմանք ալ ճամբանին փոխեր են, (Ձև 52). նմանապէս Աբեղներ լեռը շարժին կործանուելով իր գիմացի ձորը լեցուցեր է:

111. Քիլիկի երկրաշարժք, յամին 1822, 1835, 1837. — Ահաւոր են նաև Քիլիկի շարժք, որոց տարածութիւնն 200 վարսափէն աւելի է, սկսեալ Վալտիվիսյէն մինչև Վալբարիզյ. յորում զգալի կերպով զանազան տեղեր՝ թէ ծովու և թէ ցամաքի վրայ գետինն բարձրացեր է. ծովեղերեայ ժայռերն՝ որոնք երբեմն ջրոյն տակ ծածկուած էին, շարժէն վերջը՝ 2, 3 մէջը համդերձ ժժմակներով ջրոյն երեսէն վեր ելեր են, և տեղ տեղ ալ խորացեր է:

112. Հեղիաստանի երկրաշարժք՝ 1819 տարւոյն. — Հընդկաստանի մէջ 1819ին պատահած երկրաշարժն ևս շատ զարմանալի է գետնին բարձրանալուն և ցածնալուն համար: Բլուր մը 50 մղոն երկայնութեամբ և 16 լայնութեամբ՝ բարձրացեր է ընդարձակ գաշտավայրի մը վրայ, ինդոս գետոյն ընթացքը արգելով: Ասոր հակառակ ուրիշ հեռու գաւառի մը մէջ նոր բլուր զուգահեռական դիրքով, գետինն բացուեր է և ընկըլմեր է հետը մէկտեղ քաղաքին կէսը ու Սինտրէ բերդը: Այս ամէն ահաւոր երեսոյթք՝ անշուշտ կը հաւաստեն Պիմնիոսի ըստածն՝ թէ երկրաշարժով մը Սիկիլիա բաժնուած ըլլայ յիտալիայէ, և Կիպրոս կղղին՝ Սոորուոց աշխարհէն:

113. Երկրաշարժին տևականուրիւնն և նշաներն. — Ընդհանրապէս երկրաշարժին նշանն է ստորերկրեայ ուժով ձայն և շառաչին մը, որուն սաստկութիւնն համեմատական է երկրաշարժին սաստկութեան: Երբեմն շղթայից խուլ շատաշման նման ձայներ կը լսուին երկայն ժամանակ, երբեմն յանկարծական կայցակի չոր ձայներ լսելի կ'ըլլան, և երբեմն որոտման ձայներ կը լսուին շարունակ. և այս ձայներն շատ հեռաւոր տեղեր կ'երթան երկրաշարժէն առաջ կամ վերջը. ինչպէս ըստ Հումագոցի՝ 'ի Գարագաս 1300 հազարամէց գրտարածութեան վրայ՝ ահաւոր որոտումն լսուեր է, երբ Սիստեայց Սուրբ Վիշենցիոս հրաբղխէն լաւաներ կը ժայթքէին, գրեթէ 120 հազարամէց գրեռու: Կմանապէս 1744ին Գոթորախի հրաբղխին ժայթքման ատեն՝ ստորերկրեայ շառաշիւններ 81 հազարամէց գրեռու լսուեր են:



Ձև 54. Պատառուածք:

Իսկ երկրաշարժին տևումն շատ փոփոխական է, բայց սովորաբար քիչ կը տեսէ, և կրնանք ըսել անշափ կարձատէ է, որշափ մեծամեծ վասաներ կը պատճառէ. ինչպէս 1812ին երեք երկրաշարժք՝ որոնք Գարագաս քաղաքը մերձաւոր գիւղերով կործանեցին՝ 20 հազար անձանց հետ, երեք երկվայրկեան տեսեց: 1755 նոյեմբերի 1ին Լիզանայի երկրաշարժն՝ 5 վայրկեան տեսեց ամբողջ, առաջին շարժն՝ որ զմայր եկեղեցին քանդեց և զիմանակ չէնքերը հիմնայատակ ըրաւ՝ և ոչ 3 երկվայրկեան տեսեց, և այս քիչ միջոցին մէջ 30,000 հոգիք աւերակաց տակ թաղուեցան: Բայց երբեմն ընդհատ կը հանդիպի, երբեմն օրերով, ամիսներով և տարիներով իսկ կը շարունակալին, ինչպէս շատ անգամ հանդիպած է յերզնկա, և 'ի բերու քանի մը տարի ետևէ ետև պատահեր է:

## ԳԼՈՒԽ Թ

ՀՐԱՄԱՆԱԿԱՔ

**114.** Հրաբուղին. — Հրաբուղին կ'ըստով երկրիս մակերևութին այն ճեղքն կամպատառուածն, ուսկից ընդհատ ընդհատ և երբեմն շարունակաբար կը ժայթքին և գուրս կը թափուխն շարժմասիք և շառաշմասիք հալած ու հրացեալ քարեր, ժայռի կտորներ, գոլորշիք և ուրիշ անթիւ նիւթեր:


Որ և իցէ հրաբուղին՝ ունի վասարան, ծխանեն և բաժակ: Վառանն է ստորերկրեայ ընդունաբանն հրաշէկացեալ նիւթոց. ծխահանն է այն ստորերկրեայ անցքն՝ ուսկից դէպ ՚ի վեր կու գան վառարանին նիւթեր. իսկ բաժակն է այն հակառակ գարձած կոնսած բերանն, ուսկից կը ժայթքին և կը թափուին լերանց կողերուն վրայ լաւաներն և ուրիշ անթիւ նիւթեր (Ձև 55):

**115.** Երևոյք հրաբրդինաց. — Ինչ երևոյթք որ կ'երեկն երկրաշարժին ժամանակ, նոյնն կը կրկնուի հրաբուղին ժայթքման ատեն, բայց աւելի սաստիկ և ահաւոր կերպով: Եւ յիրաւի, հրաբղիսի մը ժայթքումն սկսելէն առաջ, երկլիս կ'երերի, բաժակի բերնէն ծուխ, բոց, գոլորշիք կը սկսին ենել չորս կողմն պատել, ու մոխրոյն հետ խառնուելով ամպեր կը ձևացընեն ու երկինքն կը մթագնեն. և ահա յանկարծ սաստիկ ու որոտնդոստ շառաշմասիք կը սկսի ժայթքումն կազային հեղուկաց և հաստատուն մարմնոց, և հեղեղօրէն վագել հրաբղիսին շրջակայքը, այլելով և կիզելով ամենայն ինչ:

Երբեմն վառարանին ընդարձակութիւնն այնշափ մէծ կ'ըլլայ, և ժայթքումն այնպէս սաստիկ՝ որ չի բաւեր հրաբուղին բաժակն՝ ներքին նիւթեր դուրս թափելու, ուստի կեզրոնական կազերու և գոլորշեաց ճնշման զօրութենէն՝ հրաբուղին չորս կողմն կը ճեղքուին ու կը սկսին այն ճեղքերէն հոսիլ զանազան նիւթեր, որոց վառարանն մէկէ, բայց այլ և այլ


ծխաններով և բաժակներով, և ասոնկ կ'ըստովն երկրորդական հրաբուղին ինչպէս Ետնայի չորս կողմն ընդ մէջ մարած և վառած հրաբըզմաց, գրեթէ 700 բաժակն կան, նմանապէս Եօրուղին չորս կողմն անթիւ են երկրորդական հրաբուղիններ:

**116.** Հրաբրդինաց և երկրաշարժից մէջ եղած յարաբերու-



Ձև 55. Վառարան, Ծխահան և Բաժակ հրաբուղին:

բիւն. — Հրաբուղիք մեծ կապակցութիւնունին երկրաշարժից հետ, և միշտ երբոր երկրաշարժ մը այնշափ ոյժ ունենայ, որ կարենայ պատուել, բանալ և բարձրացընել երկրիս այլ և այլ կէտերը, և հաղորդակցութիւն մը հաստատել երկրիս կեզրոնին և մթնոլորտին մէջ, հոն կը ձևանայ հրաբուղին մը, որ կը բ



Ձև 36. Այրարատ և Պայէղիս:

Նայ տեւական ըլլով և կամժայթքելէն վերջը՝ մարիլ։ Այս կերպով ձևացաւ Նոր Լեռն՝ 1538ին Նէտապօլսոյ ծովափանց վրայ Փայայ ծոյին կողմէն։ Երկու տարիիէ ՚ի վեր կը լսուէր երկրաշարժին ցնցմունքը, և վերջապէս սեպտեմբերի 27-28ին՝ ամբողջ գաշտավսյրն՝ որ կը գտնուէր ընդ մէջ Աւեռնոյի ինին, Փարապարոյ լերան ու ծովուն, բարձրացաւ յանկարծակի, լերան ձև առաւ, և գիշեր ատեն ճեղքուելով մեծ շառաչմամբ՝ դուրս ժայթքեց բոց, ծուխ, չեչաքար, ուրիշ քարեր և մոխիր, ձևացընելով Նոր Լեռը, որ ալ չաներեսութացաւ, և դուրս ելած նիւթերէն մաս մը Լուկրինոյ լիճը լեցուց։

117. Ժայրբումն Ս. Գ. Կորույ կղզոյն։ — 1808ին՝ մայիս ամսոյն մէջ՝ ՚ի սուրբ Գէորգ՝ Ռուլանտեան կղզիներէն մէկուն մէջ, մշակեալ գաշտաց մէջ տեղէն՝ գետինն յետ ցնցուելու և շարժելու զանազան կէտից վրայ՝ ահաւոր շառաչմամբ բացուեցաւ, յորում նախ բաժակ մը ձևացաւ 9-10 հարիւրակալ, յետոյ ուրիշ փոքր մը, և վերջը 42-45 ուրիշ փոքր բաժակներ։ Սաստիկ կերպով սկսան լաւաներն վազել և չեչաքարերն հեռաւոր տեղերին և ամբողջ գետինն 1 $\frac{1}{2}$  մէդր թանձրաթեամբ ծածկուեցաւ, և այս ժայթքումն երեք շաբաթ տևեց։


Բայց ասկէ աւելի ահաւոր է Եօրուլլոյի հրանչութիւնն, որ հանգիպեցաւ յամին 1739 սեպտեմբերի 29ին, յետ երկամսեաց շարունակ տատանմանց։ Դաշտագետնոյ մը վրայ, յորում մշակուած էր շաքարի եղէզ և լեզակի տանկին, և որուն միլէն երկու առուակի կ'անցնէին, գիշերուան մը մէջ 160 մէդր բարձրութեամբ բլուր մը բարձրացներ էր, և վրան հազարաւոր փաքիկ ծխահան կոներ, և ապա ասանց մէջ 6 հատ շատ բարձրացան, որոց ամենէն բարձրն՝ Եօրուլլոն 500 մէդրէն տեղի է և շարունակ լաւաներ կը հոսէ մինչև հիմա։

118. Մեծն Մասիսի վերջին հրաշնչութիւնն. — Յամին 1840 յունիսի 20ին, հինգշաբթի օր մը, արեւն մտնելէն զրեթէ կէս ժամ առաջ, մինչդեռ երկինքն բոլրովինն պայծառ էր, Հայաստանի բնակիչներ պոտաձայն բամբիւններ և ստորերկրեաց առաջներ լսելով կ'ահաբեկէին, յանաւանդ Մեծն Մասիսի շմերձաւոր տեղերը, յորում գետինն յետ գրեթէ երկու մանր երկրորդ կոհակածե շարժելու, կը սկսի Այրարատէն դէպ ՚ի արևելք ու արևելքան հարաւ՝ ժայթքել և հոսել զանազան

Նվաթեր, և զլխաւորապէս Շարուրայ և Նախնեանի կողմերն ահազին աւեր ու կործանումն պատճառելով: Խակ Արկուռիէն 6600 մէդր վեր, Մուայլ ձորին ծայրը՝ մեծ ճեղքուած մը կը բացուէր, ուսկից խիտ օդ ու գոլորշիք կ'ելնէին, որոց սաստիկ ուժով գուրս նետուած քարերն ու հողերը լերան վրայէն դէպ 'ի դաշտ կ'արձակուէին: Հրարդվին բերնէն ելած գոլորշիք շուտով Մասիսու կատարէն ալ վեր բարձրացան, շոզին գուրս ելնելու ժամանակ գոյնզգոյն կ'երսէր, այսինքն կարմիր և կապցու. և վեր մղուած ժայռերուն մէջ անհաւատայի մեծութեամբ կտորներ կացին, որոց շատն 100 կենդինարէն աւելի էին: Այս հրաշնչութիւնն ժամ մը տեսեց, և երբ գոլորշիք փարատեցան ու քարէ ու հողէ անձրեն դադրեցաւ, փոքր նշմարանք մ'ալ չէր երևեր այն մեծ և հարուստ Ակսու գեղին. աներևոյթ եղած էր նաև հռչակաւոր վանքն ալ, նոյնակէս ծածկուած էին այն ամին դաշտերն ու պատճառու ծառերն՝ որոնք հոն այնչափ տարի անմիրով ու խալաղ կ'աճէին: Արկուռի գեղին բնակիչներէն 1500 հոգւց շափ անհետ եղան, խակ վարձուոր Քիւրտերէն 400, և Ա. Յակոբայ վանքին 8 անձինք զոհ եղան, (Զւ. 56):


Այրարասայ այս հրաշնչութեան հետ մէկտեղ՝ կործանիչ երկրաշարժ մ'ալ կար միանդամայն, որ ընդարձակածաւալ գաշտին վրայ մեծամեծ փոփոխութիւններ, վնասներ և աւերմունք պատճառեց: Երասխ ու Աւանու գետոց եղբքին մօտ շատ ճեղքուածներ բացուեցան, որոնցմէ ուժով դուրս ելած գոլորշիքն՝ գետոյն ջուրն ու աւազն ու հողի կտորուանքը քանի մը մէդր վեր նետեցին: Երասխայ յատակը շատ տեղեր պղտիկ փոսեր բացուեցան, որոց գոլորշոյն զօրութեամբ՝ ջուրն կարկանդակ վեր կ'ելնէր. իսկ ուրիշ տեղեր ջուրն գետին եղերքէն վեր ելաւ. և զանազան կողմերը կոփեց, աւերելով և անապատ գարձընելով գեղեցիկ դաշտերը:

119. Վեսուվի հրաբուղին՝ որ Աէտավօլոյ մօտէ, (Զւ. 57), մարած բաժակ մ'էր, և բոլորովին մոոցուեր էր իր հին հրաշնչութիւնն: Քրիստոսի 79 թուականին սաստիկ բորբոքեցաւ և ծածկեց իր նիւթերով Հերքուլանոն, Պոմպէա և Ստալիա քաղաքներ (Զւ. 58), Պլինիոս երէցն այս հրաբուղին զոհ եղաւ: Վերջերս Խտալիոյ տէրութիւնն՝ իր ծախմաք



Զւ. 57. Կէտապօխս և Վե ծ ուվ:


մոխրի և լաւայից տակ պեղմունքներ ընել տալով վերոյիշեալ քաղաքներն գտնուեցան տամբք և ամէն տեսակ կահ կարասեօք, (Զե 58): Շատ առարկայք և գործածական նիւթեր և անօթներն անարատ մնացած են, յորս կը գտնուին նոյն իսկ տանց պատի վրայ քաշուած ջրաներկ պատկերներ, որոնք արդ զարդք են և ճոխութիւնք Նէապոլայ թանգարանաց: Վեսուվ բորբոքեցաւ գարձեալ յամին 204, 472, 512, 685, 993, 1036, 1136, ապա հանդշեցաւ 500 տարի: Եօթն և տասներորդ դարուն սկիզբը՝ Վեսուվի գագաթն 79 թուականէն առաջ ունեցած ձեւը ստացեր էր, լայն բերանով և բուսաբերութեամբ զարդարուած: Բայց 1631ին դեկտեմբեր ամսոյն մէջ գարձեալ բորբոքեցաւ ընդարձակ փոսէ մը, որ կը բաժնէ հի-




Զե 59. Ետնա:

մակուան բաժանվ՝ կին կմնածե գագաթէն, յորմէ հեղեղօրէն լաւայ, խանձորք և ուրիշ նիւթեր մինչև Նէապոլայ Բորդիշի ըսուած տեղը հասան, աւերելով և կիզելով առջև եկածը. 1660էն մինչև 1685' այլ և այլ հրանշութիւնք եղան. գարձեալ բորբոքեցաւ 1707, 1724, 1737, բայց 1797ին այնշափ լաւայ ժայթքեց՝ որ 500 մէդր տարածութեամբ և 14 մէդր բարձրութեամբ՝ 200 մէդր աեղ յսուածեց մինչև 'ի ծով: Նմանապէս յամին 1822, 1850, 1858, 1861, 1872ին ժայթքեց երբեմն ուժով և երբեմն տկար կերպով: Խասլիոյ մէջ բաց 'ի Վեսուվէն, կան Ետնա, (Զե 59), Վոլքանոյ և Սլորմազով, յորոց վերջինս՝ երկու հազար տարիէ 'ի վեր միշտ հրանշութեան մէջ է:

Զե 58. Պոմպէա և Հերքուլանոն:



120. Ետնա լեռն՝ Եւրոպիոյ ամենէն մեծ հրաբուղին է .  
որուն ժայթքմունքն նոր թռւականէն շատ առաջ սկսեր է , և  
մինչև հիմայ կը շարունակէն երբեմն մեղմ և երբեմն սաստիկ  
կերպով : Այս հրաբուղին գլխաւոր հրանչութիւնքն եղած էն 56  
թռւականին նախ քան զբրիստոս , ապա յամին 1183 , 1285 ,  
1381 , 1444 , 1643 , 1646 , 1669 , 1682 , 1744 , 1754 , 1761 ,  
1767 , 1771 , 1780 , 1781 , 1792 , 1809 , 1812 , 1844 , 1852 ,  
1865 , 1868 , 1874 և 1879 :




Զե 60. Հրանչութիւն վեսուվի 1829ին :

Այս ափ բորբոքմանց մէջ ահաւորագոյնն եղած է 1669  
տարւոյն , յորում նախ երկրաշարժով Նիկոլասի քաղաքն կոր-  
ժանեցաւ , և ապա երկու անդունդք բացուելով հեղեղօրէն

հրաբղիսային նիւթերը ժայթքեցին , և այս նիւթերով ձևացան  
Ռոսսի լերինք . լաւաներն գետի պէս ընթանալու միջոց՝ ա-  
մայացուցին 30,000 անձանց կալւածներ՝ որ կը գտնուէին ընդ  
մէջ Մոնթելիէլ և Գաղանիսայի : 1754 տարւոյն ժայթքումն ևս  
նշանաւոր է՝ գանազան և մեծամեծ ճեղքեր և պատառաւած-  
ներ գործելուն համար : Իսկ 1771 ամին հրդեհումն զարմանա-  
լի երևոյթ մը յաւալյբերաւ . այսինքն ժայթքած հրաշէկացեալ  
լաւաներն ժաղովուելով լերանց ձորոց մէջ յանկարծ ընթացից  
ժամանակ պարապ և խոր տեղոյ մը կը հանդիպին և մէջը կը  
հոսին՝ հրոյ ահաւոր քարավազ ձևացընելով : 1809 տարւոյն  
ժայթքումն ևս նշանաւոր է թէ մեծամեծ վլասներ պատճա-  
ռելուն , և թէ նոր 12 բաժաներ ձևացընելուն համար , որոց  
խրաբանշխրն՝ հեղեղօրէն կը հոսէր լաւաները : 1868ին մինչ-  
դեռ Վեսուվ ժայթքելին գաղրեցաւ , ահաւոր կերպով Ետ-  
նան բորբոքեցաւ , բայց քիչ տեսեց և ընդհատ ընդհատ սպի-  
տակ գոլորշիք կ'արձակէր , սակայն շաբաթէ մը դեկտեմբերի  
8ին՝ ծուխին գոյնն փոխաւեցաւ և սկսաւ հրանչութիւնն , և  
քիչ ժամանակի մէջ այնպէս սաստիկացաւ , որ գրեթէ երե-  
կոյեան ժամը ութին՝ բորբոքեալ լաւաներն հասան մինչեւ 'ի  
Գաղանիա , 'ի Դերմինի և բոլոր այն տեղեաց շոգեկառաց  
համբուն մէջ . ժայթքման տաեն մեծամեծ հայթմունք կ'ըւ-  
լային և բաժակէն կը նետուէին մեծամեծ գանգուածներ  
200-400 մէջը հետու : Ետնայի վերջին հրանչութիւնն ևս շատ  
նշանաւոր և ահաւոր եղած է . ժայթքումն սկսելէն առաջ շատ  
նշաններ տուաւ , և նախ տիղմն սկսաւ ենել , և երբ տըզ-  
մային նիւթերն գաղրեցան , 1879 մայիսի 28ին սկսաւ թանձր  
գոլորշիք ենել և չորս կողմի լեռները պատել միխրով և գո-  
լորշեաց ամպերով . և մինչդեռ գաղրեցաւ այս երևոյթու , եր-  
կորորդ օրը լերան հողն սկսաւ ցածնալ , և գլխաւոր բաժակէն  
7 հազարամէջը հեռու՝ ահագին պատառաւածք մ'եղաւ , և ձե-  
ւացան բաղմաթիւ բաժակներ , յորոց շարունակ հեղեղօրէն  
նիւթեր գուրս կը պոռթկային և կը վաղէին 50 մէջը լայնու-  
թեամբ և 6 մէջը թանձրութեամբ՝ ժամուան մէջ 10 մէջը ,  
այրելով և մոխիք գարձնելով բոլոր մակեալ գալատերը : Մայի-  
սի 21ին Դերմինի քաղաքին Դաւորմինա համբան կտրեց , ճամ-  
բուն դառ ՚ի վայրութիւնն նուազեցաւ , բայց լաւաներուն

հեղեղին անկողինն աւելի ընդարձակեցաւ և եղաւ 300 մէջր,  
իսկ թանձրութիւնն 15 մէջր, և արագութիւնն ժամուան մէջ




ԶԿ 61. Կարպով քաղաք և լեռնք :

15-20 մէջր, քիչ մնաց որ Ալգանդար գետն պիտի արդիլուեր,  
եթէ ժայթքումն հետզհետէ չնուազէր: Արդ Ետնայի հրաբուղ-

խըն դադրածէ, բայց բաժակներն շարունակ կը ծխան և եր-  
րեմն երբեմն սպիտակ գոլորշի կ'արձակեն:

121. Ծովաշին հրաբուղիք. — Հրաբուղիք ոչ միայն ցա-  
մափի վրայ կրնան ըլլալ, այլ նաև 'ի ծովու մեծամեծ երկրա-

շարժեց պատճառաւ: Ինչպէս յամին 1831 Ետնա հրաբըլ-խին հրաշնչութենէն՝ Միջերկրականի մէջ Սիկիլիոյ հարաւային արևմտեան կողմէ՝ կղզի մը ձևացեր էր ծովու յատակէն սկսեալ 150-200 մէդր բարձրութեամբ, որ կոչուեցաւ Ֆերտինանտա կամ Յուլիա անուամբ: Քոռայց նստավետն ձիրձենդիէն դառնալու ժամանակ՝ նոյն տարւոյն յուլիսի



Ձև 62. Բաժակ Յուլիայ կղզւոյն 29 սեպտ., 1831:

18ին տեսեր էր այն նոր կղզին՝ գրեթէ 3 մէդր բարձր ծովուն երեսէն, ապա բաժակէն հրաբղսային նիւթեր ժայթքելով և գոլրշեաց ահազին սիւնակներ վեր մղելով սաստիկ կերպով մինչև օգոստոսի սկիզբը՝ գրեթէ 60 մէդր բարձրացեր էր կըդ-


զին, երկու մղոն տարածութեամբ. այս վիճակիս մէջ քիչ տևած է: Եւեպտեմբերի 29ին այցելելով Կոտանդ Բրեվոստ երկելի նաւապետն, կղզւոյն ցղապատն 700 մէդր եղած էր. (Ձև 62). իսկ հիմայ գարձեալ աներեւութեացած է:

Նոյնպէս նաև Սանդորինոյ կղզին՝ ծովային հրաբղսի մը ձևացեր է՝ զոր Քաղլիսագա կոչեր են նախնիք ըստ Պլինիոսի: Սանդորինոյի շրջա կողմէ՝ շրս մանր կղզիք կան, իէրա՝ որ հիմայ կ'ըսուի Բայէա, Քրիստոսէ 196 տարի առաջ ձևացած. Թէա կղզին՝ նոր թուականին երրորդ տարին ձևացած, որ ետքը 726ին ստորածովային շարժմանէն իէրա կղզւոյն հետ միացաւ: 1573ին Փաքր Քայմենի կղզին բարձրացաւ, վերապէս Նոր Քայմենին ալ 1707ին ծովին գուրս ելաւ: որ մինչեւ հիմայ գեռ կը ծխայ ծծըմբային կազ արձակելով: Այսպէս նաև 1811ին փաքրիկ կղզի մ'երեցաւ յԱզորեան կղզիս Սապրինա անուամբ, որ մինչև հիմայ կայ: Այս բոլոր կղզեաց երես մանէն առաջ մեծ երկրաշարժք եղած են, ժայթքելով անքաւ նիւթեր և կաղեր:

122. Հրաբղսային նիւթերը. — Հրաբղսէն ելած նիւթերը կրնանք երեքի բաժնել, այսինքն են կազային, հեղուկ և հաստատութ, և քիչ շատ այս կարգաւ կը բղիմն հրաբղսիներէն: Նախ և առաջ քլոռուտ ջրածնական, որ երկայն ժամանակ կը շարունակէ. ապա ծծըմբային թթվուութ՝ որ երբոր ժայթքումն կը ակարանայ՝ այն ատեն կ'երեկի. երրորդ՝ բնածխական թթուուտ, որ կը տեսէ հրաբղսին մարելէն վերջն ալ: Այս ամէն կազերն գոլրշեաց հետ մէկտեղ կ'երեկին, թանձր ծուխի նման, և իրենց սաստիկ ներմութեամբ և տարրաբանական ազդեցութեամբ՝ կը փաղաղէն մերձաւոր ժայռերը, կը փխրեն և տեսակ մը տիղմ՝ կը ձևացընեն, զոր ժայթքումն երբեմն մեծամեծ հեռաւորութեամբ կը մղէ կը տանի, ծածկելով տղմի հեղեղներով ամբողջ գաւառներ. ինչպէս 1698ին Բերուի Քարկուարայի վզոյ հրաբուղին 290,000,000 մէդր քառակուսի տեղ ժամկեր է:

Ինչպէս ըսինք, այս կազերուն հետ մէկտեղ կ'ենեն նաև հրաբղսային մոխիր, որ 20, 50 և մինչև 200 փարսախէն աւելի հեռու կը մղուի. մոխիրն հետ կ'ենեն զանազան կարծր քարեր, չչափար և ժայռի մէծ կտորներ: Յամին 1533 Գոր-

լրումպիսյի մէջ Քողոքախի հրաբուղին 10 խորանարդ մէզը մեծութեամբ քարերն 2 փարսախիչն աւելի հեռու նետեր է։ Շատ անգամ ժայթքումն հետը մէկտեղ կը բերէ բաժակին խորլ եղած լաւաններն, որոնք կը թափուին լերանց կողերուն վրայ կամ մերձաւոր դաշտաց մէջ կը տարածուին տեղ մը քիչ տեղ մը շատ, ինչպէս 1783ին Խալանտայի մէջ 150 հազարամէզը քառակուսի մէզը տեղ ծածկուեցաւ լաւայով 20-35 մէզը բարձրութեամբ։ Նոյնպէս Ետնայի հրաբղին բղիսած լաւայք 1669ին՝ 210 հազարամէզը տեղ զրաւեցին, 600 միլիոն խորանարդ մէզը։ 1870ին Վեսուվի բաժակին եղերքը՝ կոնաձև ըլուր մը ձևացաւ լաւայով 100 մէզը տարածոյով և 40 մէզը բարձրութեամբ, որ ետքը կործանեցաւ։ Երբեմն այս լաւաններն ձիւնապատ լերանց կողերէն վագելու ժամանակ, մեծամեծ հեղեղներ կը ձևացընեն, որոնցմով ստորերկրեայ դաշտերն և աւաններն կը ծածկուին։ Ինչպէս շտուանգամ հանգիսած է Ետնայի և մասնաւորապէս Գորտիլեսց հրաբուղիններուն։



246 65. Σημειώσεις

123. Հաւայից ջերմուքիւնն. — Դէպի շանաց լաւայից գեղեղներու չերմութիւնն խմանալ, մետաղական թելեր մացը նելով լաւայից մէջ. այսպիսի և ուրիշ զանազան փորձերէն հետեւցոց՝ թէ լաւայից միջին չերմութիւնն կը հանի ընդ մէջ երկաթի և արծաթի հալման կէտին, որ քիչ մը շափառանց կ'երևի: Սակայն դէպք և փորձք կը հաւասառեն զայս ամենայն կերպով, ինչպէս՝ թողլով՝ ի բաց կրային կտրներ, որոնք փոխուած են 'ի շաքարսային կէճս, Յոյն Աշտարակի տ-

ւնրակաց մէջ գտնուած երկաթին՝ մասսամբ ութանիստ ըիւրեղան եր դարձեր է . և այս յայտնի ապացոյց մ'է որ լաւան՝ որով Յոյն Սշտարակն ծածկուեր է՝ յետ վեց հազարամէզդը տեղ ընթանալու՝ դեռ երկաթին հալման աստիճանը պահեր է , որ է 1575<sup>o</sup> : Նմանապէս Սպալանցանի իտալացի անուանի բնագէտն՝ տեսներ է որ երեք տարի վերջը՝ գաւազանին վարի ծայրը դեռ կ'այրէք լաւայից գացընելու ժամանակ : Նոյնապէս Պոմպէա և Հերքուլանոն քաղաքաց պեղմանժամանակ՝ երկաթի կահ կարսակիք , ոսկոյ և արծաթի գրամք՝ կիսահալ վիճակի մէջ գտնուեցան : Գարձեալ ուսումնականք լաւայից չերմանթիւնն իմանալու համար՝ կուանիտի , պազալիքի կուրուանք նոր հրաբուղիներու լաւայից մէջ նետելով կը տեսնեն որ շուտով մը կը հալին , և ահա այս փորձերով կը հաւաստեն թէ ինչ մեծ չերմանթիւն կայ երկրիս կեղրոնք :

124. Լաւայից կամաց կամաց պաղումն. — Լաւաներն շատ կամաց կամաց կը պաղին, և չերմութեան վաս հաղորդիչեն: Հումանոլդ 1579ին Եօրություն հրաբուխն ժայթքած լաւաները քննելով, տեսեր է որ 160 մէջք բարձրութեամբ զիգուած, 45 տարիէն վերջը՝ գեռ կը ծխային, և իրենց մէջն անցած ջուրն 55 աստիճանն չերմութեամբ գտեր է: Լաւաներն պաղելով կը ճեղքին և կտոր կտոր կ'ըլլան. ասոնց զանգուածն շատ թանձր է, և ճեղքերն շատ անգամ գագաթնահայեաց և զուգահեռաւ կան են, որով զանգուածն հատուածակողմեան ձեւեր կ'առ նու. այս կազմութիւնն մասնաւորապէս պազալդաց մէջ կը տեսնուի, ինչպէս երևելի է Ֆինկափի այրն Սպափա կզեզյն մէջ, որ ծովային հրաբուխ յառաջ եկած կ'երեւի:

125. Հրաբոսիային ժայրքմանց կազմակերպութեան վարդապետութիւնն, յետ մանր և անթիւ քննութեանց, կը հաստատէ որ լսաւաներն երկրիս խորերը փակուած ըլլալով գոլորշեօք և զանազան կազերով, (զոր երկիրս իր հեղուկ վիճակի մէջ եղած ժամանակ ծծած է ըստ Պոմոնի, և ըստ Անձեղյի գէթ մասամբ նոր գարուց մէջ ձևացած), և թափանցերլով այս գոլորշին կազերու հետ մէկտեղ հալած զանգուածոց մէջ, կը թեթև ցընեն զանոնք, կը մղեն և վերջապէս սաստիկ զօրութեամբ դուրս կը ժայրքեն: Ծավաց յատակը, կ'ըսէ Պարոն Անձեղյ,


Կը գտնուին յամաք Երկրի վրայի եղածներու նման ձեղքեր, սրոնցմէ չուրն երկրիս խորը կը թափանցի և կը մղուի, և ենթադրելով որ ծովուն խորութիւնն 2000 մէջը ըլլայ, և երկրիս հաստատուն մասին թամնձրութիւնն Յ հաղարամէջը, երկրիս խորը թափանցող ջուրն Յ200 մթնոլորտի ճնշումն պիտի կրէ, և այս ահաւոր ճնշման պատճառաւ ջուրն չկարենալով գոլորշիանալ՝ ճեղուկ վիճակի մէջ կը մնայ հաղած լաւայից հետ: Բայց Եթէ այս ջուրն մտնէ յամաքային հրաբրդիայ ճամբաներու մէջ, ուր քիչ մ'աւելի բարձր կը գտնուին նիւթերն քան ծովուն յատակը եղած ճեղքերէն, քիչ ճնշումն կ'ունենայ, որով կը զոլորշիանոյ, և իրեն սաստիկ ուժամի՛ կը մղէ լաւաները մինչեւ հրաբրդիսին բաժակը՝ ուսկից կը հոսի մերձաւոր կողերուն վրայ. տես Ձև ՅՅ:

126. Հրաշնորքեան ոյժն. — Կաղերու և գոլորշեաց այս սաստիութիւնն պէտք է որ շատ մեծ ըլլայ. և յիրափ, լաւաները գուրս մղելու համար հաջու եղածէ՞ որ, օրինակի համար, Ետնա բաժակին համար՝ որուն բարձրութիւն է 3300 մէջը, պէտք է 600-900 մթնոլորտի ոյժ. Անտիսանայի հրաբրդիսին համար՝ որ 5833 մէջը բարձրութիւն ունի, պէտք է 1000-1500 մթնոլորտի ոյժ: Արդ Եթէ ուզէ մէկն՝ ըմբռնել ոյսպիսի աշաւոր զօրութիւն մը՝ բաղդատէ մեր սովորական չողեշարժ մեքենայից ունեցած զօրութեան հետ, որոց ամենէն սաստիկ ոյժ ունեցողն՝ 7 մթնոլորտի ոյժէն աւելի շռնի:

127. Մարած հրաբուղյար. — Ամէն հրաբուղիք հրաշունչ և ժայթքող չեն. բայց կան ալ այնպիսի հրաբուղիներ՝ որը բուրութին անդործ են և բորբոքման նշան չեն տար, ասոնք կ'ըսուին մարած հրաբուղյար, որոնք լընդհանրապէս կոնսալե Երանց ձեռվ են, լաւաներէն ձեւացած և գագաթը բաժակով վերջացած. այսպիսի հրաբուղիք Գաղղիոյ մէջ Յ0էն աւելի կան, նոյնպէս՝ ՚ Արտենիա, ՚ Գերմանիա, ՚ Կոլիա, Յունաստանի կղղեաց մէջ, յԱմերիկա, յԱսիա և յԱֆրիկէ շատ կը գտնուին, (Ձև ՅՅ):


128. Հայաստանի մարած Հրաբուղյար. — Հայաստանի Երանց մեծագոյն մասն մարած հրաբուղիք են. վասն զի անոնց ներքին կազմութիւնն մեծաւ մասամբ պատպալէ է, որ սովորաբար հրաբրդիսի տեղուանք կը գտնուին. կան նաև պաշաղի հետ մէկտեղ լաւայ, չեշաքար, պորփիւր և այլն:

Կմանապէս խանձող քարինք, չերմաւկը և լերանց գագաթնապիս ջրով լեցուն բաժակքն կը ցուցընեն թէ ատենօք հրաբրդիսաց բաժակք եղած են. զոր օրինակ մարած հրաբուղիք կան՝ ՚ Երինս Խաղաղեաց, ՚ ի բարձրաւանդակին Տայոց, Կարնոյ լերանց վրայ Սարշամ և Սիխչիք, որ հայկական բարձրագաւառին մասին մէջ մենէն մեծ հրաբրդիսի բերանը կը ցուցնէ, Կարնոյ քաղաքէն չորս ժամ ճեռու դէպ ՚ ի հիւսիսային կողմն: Ասոր կատարն է կանոնաւոր բուրգ՝ ճիշդ Վեսուվի նման, որուն խառնարամն նման ՚ Կոր Լերան խառնարանին, բայց շատ աւելի մեծ և ահեղ, և բարձրութեամբ երեք անգամ՝ աւելի է, այսինքն Աւ ծովուն երեսէն 3179 մէջը է, (Ձև 64): Երեսէի հրաբուղիս եղած է նաև Արագած (Ձև 64), չորս բաժնուած գագաթամբ և ջրով լեցուն բաժակովն, որ արդ Գարակէօլ կը կոչուի, որուն խանձող Ետնա լերան նման ճեղեղօրէն վաղած են լերանց կողերու վրայ, և որուն վերջին ժայթքումն Արշակունեաց թագաւորութեան սկիզբն եղած կ'երեկի: Ասոնցմէ աելի մեծագոյն հրաբուղիք Աւանայ ծովան չորս կողմի մեծամեծ լերանց վրայ եղած են, այս պատճառաւ այն տեղը Հրազդան ըսուեր է, որուն զիսաւոր հրաբուղիք են Այսմանկան Գանըլ-Կէօլ բակով, Աքտաղ, Պօզտաղ, Նալ-Թէփէ, Շամիլամայ լեռանն, Գըզըլ-Թէփէ յորում կան նաև Ներմուկը 39 սաստիճան Ներմութեամբ: Վանայ լին արևմտեան կողմն եղող լերանց մէկուն վերջին հրդեհումն 1441ին կը յիշուի և ամենէն բարձր հրաբուղիսն եղած է Գոռող լեռն. իսկ Ափիան՝ որ նոյն լին հիւսիսակողմը վսեմ կոնաձեռով զրեթէ 4000 մէջը կը բարձրանայ՝ գեռ ծծմբախառն թեթև շողի մը կ'արձակէ: Իսկ մեր արդի ամենէն կենդանի հրաբրիսի զօրութիւն և նշան ունեցող լեռն է Թոնտըրէկ 3248 մէջը բարձր, Պայէղիս քաղաքէն երեք կամ չորս փարասի հեռու՝ դէպ ՚ ի Վանայ ծովը, որուն գագաթն ըմբռովին նման է Վեսուվի. բաժակն շատ ընդարձակ և խորէ, յատակը մեծամեծ բարեր և բիբրեղացեալ ծծումբ կան, և շատ տեղէ անդադար ըրային և ծծմբային գոլորշիք կ'ելնեն: Արցախայ կողմեր ևս կան հըրաբուղիք, վասն զի Կայցոյ-Ծառ լերան անունն և Գանձակայ մեծ սասանումն ու կործանումն 1140 տարւոյն, յորում Աւ հարակ լեռն վլաւ ու լիճը կազմեց՝ զսոյն կը հաւաստեն:



Հայոց Արքաների և Խաչառուների կամաց թվունը

129. Հրաբոյիսային գլխաւոր տեղեր. — Հրաշոնչ հրաբըղ-  
խաց և ծծըմբահանքաց թիւն մինչև 500ի կը հասնի, որոնք  
ցանուցիր են երկրիս երեսի վրայ ոչ ըստ դիպուածոյ, այլ  
խումբ խումբ, յորոց ոմանք երկրիս խորը իրարու հաղորդ են :  
Հրաբոյի կողմանէ երկելի են Միջերկրականի վրայ եղած-  
խումբն, ինչպէս Վեսուվ, Ետնա և Սոլոնմպոլի . Յունաստանի  
Արշաբեղագոս կզգեաց հրաբուղիք ևս զարմանալի յատկու-  
թիւններ ունին . կայ երրորդ խումբ մը 'ի Գանարեան և յԱ-  
զրեան կղզիս . շորրորդ խումբն կը ձեւնայ խալսնտայի և  
կրէօլանտիոյ հրաբուղիներէն : Շատ մեծ են նաև Անտեայց  
երկայնութեամբ եղած հրաբուղիք, ինչպէս նաև կեղրոնական  
Ասիոյ մէջ եղած խումբն :



Զե 65. Շիջեալ հրաբուղիք Տօմ Լերանց՝ յօվեռներ:

130. Երկրիս ջերմուքեան հին արգասիքն . — Եթէ վերոյիւ-  
շեալ հրաբղական արգասիք մեծ են և զարմանալի, որոնք  
մինչև հիմայ ևս կը շարունակեն, շատ աւելի մեծով և ահաւոր  
եղած պիտի ըլլան երկրիս նախնական ժամանակը, այսինքն՝  
երբ երկիրա ամերող հալած վիճակի մէջ կը գտնուէր : Այս  
ժամանակիս մէջ երկիրս իր կլորութեան ձևը առած է, որ  
մարմնոց հաւասարակշռութեան հշմարիս ձևն է . և որպէս զի  
մարմին մը իրեն հաւասարակշռութեան ձևն առնու, պէտք  
է որ իր մասնը կամ կամքն կարենան շարժիլ, որով յայտնի կ'երկե-  
թէ երկիրս 'ի սկզբան հալած վիճակէն՝ թոյլ զանգուածոյ  
վիճակի անցեր է :

131. Այբարձմունք և ձեւացումն կերանց . — Լերանց շղթայք  
և գոտիք այն ժամանակ սկսան ձեւանալ՝ երբ կամաց կամաց եր-

Կրիս ջերմութիւնն միջնոցին մէջ ճառագայթելով սկսաւ երկիրս բարակ հաստատուն մաշկ մը պատել, որ հետզետէ ամելով և կծկելով՝ ջերմութեան պակսելուն պատճառաւ, հարկ եղաւ այլ և այլ անդամ գալարիլ, և այնպիսի ուժով ճնշել ստորա երկրեայ հալած նիւթերը, որ ստիպուեցան երկրիս խորերէն դուրս ենել՝ զանազան ճեղքեր բանալով, և վեր վերջընելով հաստատուն մասը. և այս շարժումն և ամբարձումն դարերով շարունակուելով երբեմն ուժգին և յանկարծական, և երբեմն դանդաղ՝ բայց յարատե ըլլալով, ձևացան երկրիս վրայի անթիւ լերանց շղթայք, գօտիք և դրութիւնք:

Այսպիսի ամբարձմունքն և դրութիւնք լերանց Եւրոպայի մէջ 18 են, որոց վրայ մասնաւոր կերպով աշխատեցաւ և 'ի ըստ ընծայեց Գաղղիացի երևելի երկրաբանն Եղիա տը Պոմն, հետևելով Լէորոլոսու տը Պիւշի գալափառաց և կարծեաց: Մենք հոս բաւական կը համարինք յիշել միայն լերանց դրութիւնները, թողով խօսիլ իւրաքանչիւր ամբարձման վրայ դասագրքիս երկրորդ մասին մէջ, և ամբարձման կարգաւ ասոնք են

1. Դրութիւն Վանտէայի.
2. Դրութիւն Ֆինիսդէրայի.
3. Դրութիւն Լոնկմինտեան.
4. Դրութիւն Մորպիհեանի.
5. Դրութիւն Վեսդմորլանտի և Հունդսրիքի.
6. Դրութիւն Վոժ լերանց և Պոքաժ բլրոց.
7. Դրութիւն Ֆորէի 'ի Գաղղիա.
8. Դրութիւն Հիւսիսային Բրիտանիոյ.
9. Դրութիւն Ստորին Նահանդաց և հարաւային Կալեսի երկրին.
10. Դրութիւն Հունոսի.
11. Դրութիւն Դուրինկէրվալտի, Պոհմէրվալտ-Կէպիրս կի և Մորվանի.
12. Դրութիւն Մոն-Պիլայի, Գոդ-տ' օրի և Էրձէկէսպիրի.
13. Դրութիւն Մոն-Վելոյի և Պինտէի.
14. Դրութիւն Պիրենեանց.

15. Դրութիւն Գորսիգա և Սարտենիա կղզեաց.

16. Դրութիւն Վեկիթ կղզւոյն, Դատրայի, Ովլոյ-Տաղի և Հեմոսի.


17. Դրութիւն Եւրիմանտեայ և Սանսերուայի.

18. Դրութիւն Ալպեանց և Սլյարասոյ:

132. Չորոց ձեւացման վարդապետորհեւն. — Իսկ ձորոց ձեւացման համար՝ ոմանք կը կարծէին թէ հեղեղներէ և ջրոց ընթացից զօրութենէն ձեւացած ըլլան. սակայն այս կարծիքս այսօրուան օրս ոչ ոք կ'ընդունի. Վասն զի եթէ ձորոց ձեւացումն ջրոց արգասիկն ըլլար, պէտք էր որ յրերն երկրիս բնական զառ 'ի վայր ճամբաներէն ընթանային, որուն շատ անգամ հակառակն կը տեսնուի. ինչպէս Մէօզ գետն 'փոխանակ Սէն գետին մէջ հոսելու՝ յոր պէտք էր թափուիլ' եթէ երկրին բնական զառ 'ի վայր ճամբէն վաղելու ըլլար, կ'երթայ կը կարէ և 'կ'անցնի Սուտէն լեռներէն. նոյնպէս Հուենոս կը խոտորի 'ի Մայէնցա՝ հաստատուն երկրէն անցնելով, փոխանակ իր ընթացքը շարունակելու և Վեղէր գետոյն մէջ թափուելու. այսպէս կը հանդիպի նաև Հուոգանոսի, և որիւն անթիւ գետոց:


Արդ այս ըստածներնէս կը հետևի 'թէ գետոց անկողինքն' որով և ձորերն՝ ոչ եթէ ջրոց զօրութենէն և հեղեղներէն ձեւացեր են, այլ լերանց ձեւացման և ամբարձմանց ժամանակ իրենք ալ կամաց կամաց կը ձեւանային, շարունակ երկրիս մակերեւութին շարժմամբ, պատառմամբ, հերձմամբ և գալարմամբ. ուստի գետոց և հեղեղատից ջրերն՝ ինչ անկողիններ որ գտեր էին սկզբան, նոյն ուղղութեամբ շարունակած են: Արդ յետ հաստատելոյ ձորոց ծագումն, պէտք է ըսել նաև թէ ջրոց աղդեցութիւնն ձորոց վրայ՝ շատ մեծ եղած է, և մեծապէս այլափոխած են զանճճք իրենց շարունակքանդիչ, կործանիչ ու մաշիչ զօրութեամբն, և տեղ տեղ ալ առաւել կամ պակաս գետոց անկողիններ և ձորեր ձեւացուցած են: Արդ թէ նախանական ձորերն և թէ 'ի ջրոյն այլափոխած ձորերն այլ և այլ դիրքով են, ըստ որում շարժումնն զուգահեռական, գագաթնահայեաց և յորձանապտոյտ եղած է, և կամ ըստ որում երկրիս կեղրոնական զօրութիւնն մակերեւութին մէկ կէտին և կամ զանազան կէտերուն վրայ աղդեր ու բարձրա-

ցուցեր է: Ահա ըստ այսօմ կրնան ըլլալ ջոր պատառման, որ կը ձևանայ երկրիս երկու կամ շատ խաւերու յանկարծական պատառմանէ և զատուելէ, որ սովորաբար երկրաշրժից ատեն կը պատահի (Ձև 66). Ջոր դաշտաման, որ կը ձևանայ՝ երբ գետնոյն երկու կողմէն բարձրանայ և մէջտեղէն ցածնայ (Ձև 67). Ջոր ամրարձման, որ կը ձևանայ՝ երբ երկրիս մակերեռութին մէկ



Ձև 66. Ջոր պատառման:

կէտն կը բարձրանայ հանդերձ ստորակարգ խաւերով (Ձև 68). Ջոր բաժանման, որ կը ձևանայ ջրոյն մաշիչ զօրութենէն, այս ինքն երկրիս խաւերն յետ բարձրանալոյ՝ խաւին մաս մը ջրէն և հեղեղներէն փաղաղուելով անհետ կ'ըլլայ, ինչպէս կը տեսնուի 69 Ձևին մէջ: Ջոր քայլաբան կը ձևանայ՝ երբ երկրիս խաւերովն կազմութիւնն փխրուն և կարծրչըլլայ, որով ջրերէն



Ձև 67. Ջոր գալարման:

կը փորուին միակերպ և իրենց հետ մէկտեղ կ'առնուն կը տանին այլ և այլ հեղեղահող և տեղաներ կը ձևացընեն (Ձև 70):


133. Պլուտոնական ժայռից բիւրեղական կազմնորդիւն. — Պլուտոնական ժայռերէն շատերն, ինչպէս կունիտ, պորֆիր, սիենիտ, պազարդ, և այլն, բիւրեղական կազմութիւնն մ'ունին,

որով կրնանք հետևեցընել՝ թէ իրենց մասնը կունքն կրցեր են քիչ շատ կանոնաւոր զիրքով զետեղուկի երկրիս խորերը, և կամ հրաբուղիներէն դուրս ժայթքելու ատեն՝ զրեթէ հեղուկ վիճակ մէջ եղած ըլլան:



Ձև 68. Ջոր ամրարձման:


134. Այլակերպորիւն և հակումն ջրանիստ ժայռերու. — Բիւրեղական կազմութիւն ունեցող երկրիս ամէն ժայռերն՝ հրաբղխային չեն. Կան ոմանք որ ջրոց մէջ ձևացեր են ջրանիստ խաւերէն, բայց մէջերնէն պլուտոնական ժայռեր անցնելով այնչափ լերմութիւն ընդուներ են, որ բիւրեղական երեսոյթ առեր են: Այս փոփոխութիւնն կ'ըսուի այլակերպու-



Ձև 69. Ջոր բաժանման:


թիւն ժայռից: Այսպիսի կերպարանափոխութեանց օրինակներ ամէն տեղ կը տեսնուին, զոր օրինակ Ալպեանց վրայ հողային կիրն՝ շաբարային կիճ եղերէ, զիւրահերձ կաւն՝ ի յասպիս և ի հերձափար փոխուեր է: Նաև պլուտոնական ժայռից բարձրանալով լրանիստ խաւերու մէջ, զանազան կերպով փխեր են զանոնք. ուստի հորիզոնական դիրքէն՝ դարձեր եղեր են

ծռած, խառնուած և հակած. զոր օրինակ կռանիտի երակք անցած են տաքային կնայսի մէջ (Ձև 71). ինչպէս նաև շատ լաւ կը տեսնուի Հայ-Հաւարուեան լեռանց եղերքը, որոց կազմութիւնն զանազան է, խառնաշփոթ ու դժուարածանաւ չելի, քան թէ ներքին կողմերը։ Նոյնպէս Տրապիզոնի քով



Ձև 70. Զոր քապայման։


կաւային թերթաքարանց հորիզոնական կարգն, ոչմիայն վեր վերցրած է գագաթնահայեաց, տեղ տեղ ճեղքուած և տեղ տեղ ալ խայտակուած անցած, այլ նաև շատ տեղ բոլորովին խառնուած և անձանտաշելի եղած է, մանաւանդ Տրապիզոնէն 'ի կիւմիւշամնէ երթալու ճամբուն վրայ։



Ձև 71. Երակք կռանիտի տալքային կնայսի մէջ։

135. Մետաղական երակք. — Նին հրաբուխային երկութից կը վերաբերին մեծաւ մասսամբ մետաղական երակք, այսինքն՝ այն մետաղային զանգուածք, ինչպէս երկաթ, պղինձ, կապար, և այլն, որոնք ուրիշ պարզ մարմնոց հետ բաղա-

զրուած են և խառն կը գտնուին, և որովք արդ լեցուն են ժայռից մէջև ջրանիտս խաւերու մէջ եղած ճեղքերն և փոսեր։ Այս երակներն երբեմն հորիզոնական կ'ըլլան, երբեմն գագաթնահայեաց, երբեմն ծառոց ոստերու պէս կը բարձրանան, քանի մը տասնորդամէշդրէն մինչև հարիւրաւոր մէդի թանձրութեամբ, և երբեմն կոհակաձև դիրք կ'առնուն։ Այս երակները կազմող նիւթերն երկրիս ծոցէն ելած են, ոմանք կակուղ և ոմանք կազային վիճակի մէջ, և յայտնի կը տեսնուի թէ սաստիկ բռնութենէ մը յառաջ եկած են։ Մինչև հիմայ իսկ հրա-



Ձև 72. Կրային ժայռ։

բուղիներէն ելլած գոլորշիքն կը փաղաղեն զժայռս, և կը դիզեն ժայռից կողերուն վրայ զանազան աղեր և երբեմն նաև մետա, զական նիւթեր։ Վեսուվ և Ետնա հրաբողիսաց վրայ այսպիսի խոր տեղուանք կան, որոնք ծածկուած են՝ երկաթի, կազարի և պղնձի քոռառկներով։

Բայց այս մետաղական խաւերն և երակներն, որոնք կարեւոր են ուսման, չունին մետաղական և արուեստական կարեւորութիւնն մը. և չեն կրնար բաղդատուիլ հին մետաղական երակաց հետ, որոց մշակութիւնն զանձ մի է որ և իցէ կողմանէ։

# ՄԱՍՆԵՐԿՐՈՐԴ


## ԳԼՈՒԽԱ

ԵՐԿՐԻՍ ՄԱԿԵՐԵՒՈՒԹԻՒՆ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

**136. Ժայռք.** — Մինչև հիմայ ըսածներնէս կը տեսնուի: Երկրիս հաստատուն մակերեւոյթն՝ հանգային մեծամեծ և զանազան զանդուածներէ կը բաղկանայ, որոնք երկրիս ներքին զանդուածոց և նիւթոց տարրաբանական մի և նոյն բնութիւնը ունին, միայն այս տարրերութեամբ՝ որ փոխանակ հեղուկ և հրացեալ վիճակի մէջ ըլլալու, տեղ տեղ հաստատուն են և մանրամաղ փոշի, տեղ տեղ պարզ և բաղադրեալ, և երբեմն ալ համասեռ և անհամասեռ, որոնք քիչ շատ օդոյ և ջրոյ պատճառաւ՝ զանազան փոփոխութիւններ կրած են: ահա այսպիսի զանդուածք կ'ըսուին ժայռք, (Ձև 72), որոնք կրնան ըլլալ թէ՛ ծովու և թէ՛ ցամազքի վրայ:

**137. Հոյր.** — Այս այլ և այլ ժայռերն իրարու հետ ոչ եթէ դիպուածով և անկանոն կերպով կը խառնուին, և կամ որ և իցէ դիրքով մէկմէկու վրայ կը դիզուին, այլ իրենց զետեղմոնքն այնպիսի կարգով և օրէնքով կը կատարուի՛ որ երբ ժայռ մը տեսներու ըլլանք՝ իսկոյն կ'իմանանք որ իրմէ՛ առաջ կամ իրմէ՛ ետև և կամ հետը մէկտեղ ինչ ժայռեր եղած են և ձևացած, որոնք բոլորովին տարրեր բնադրոշմք կը ներկայացընեն: այս այլ և այլ ժայռք միանդամայն առած՝ կը կոչուին հոյրը: Ուստի հոյրք կ'ըսուին երկրագնտիս կտոր մը կամ մաս մը մեծ կամ փոքր, քիչ կամ սաստիկ խորութեամբ, որ ինքն յինքեան ամբողջութիւն մը կը ձևացընէ, և ունի զանազան խաւեր, որոնք նստեր են երկայն կամ կարճ ժամանակի մէջ, որ և որոշեալ է և կը կոչուի երկրաբանական դար:

**138. Անխառանիստ ժայռք.** — Այդ երկրագնտիս ամբողջ ժայռերը՝ ըստ իրենց ծագման, կազմութեան և խաւերու տարրերութեան՝ կրնանք բաժնել՝ 'ի խառանիստ և յանիստ ժայռու: Անխառանիստ ժայռք՝ որոնք կ'ըսուին նաև հրային ժայռք, ձեւացեր են երկրիս ներքին չերմութենէն, մթնոլորտին ամենամեծ ճնշմանէն և երկրիս մակերևութին պաղելէն: այս ժայռերն անկանոն են և առանց խաւերու, շատ անգամ բիւրեղային կազմութեամբ և աւելի խիտ հիւսուած ժովք: Այս ժայռուց մէջ չեն երկեր գործարանաւոր մարմնոց հետք, այլ միայն 'ի զանազան գայլախազատից կը բաղկա-




Ձև 73. Այս Պանու 'ի Պէրգրիեն — Պատէն:

նան, զոր օրինակ սեակուճ կամ պազար, օձավար, կռանիստ և շատ ուրիշ տեսակ ժայռք: Այս հրային ժայռերն՝ յերկուս կը բաժնուին 'ի հրարդիական և 'ի սղուունական ժայռու: հրարդիական ժայռք են անոնք՝ որոնք հրարդիաց բաժակներ կը ժայթքին երկրիս վրայ, ինչպէս որձաքար կամ տրաքիտ, ճայնաքար, սևակուճ, լաւաքք, չեւաքքար, մոխիր, և այլն: իսկ պլուտոնական ժայռք կ'ըսուին անոնք՝ որոնք երկրիս ճեղքերու մէջ են, և առանց դուրս ժայթքելու բարձրացուցած են զանազան խաւեր՝ ամենաղանդաղ կերպով, սա-

կայն շարունակ: Այս ժայռերն զբեթէ միշտ բիւրեղային երեւոյթ մ'ունին և են կռանիտք, սիենիտք, պորֆիրք, օձաքարինք, յայտաքարինք, և այլն:

139. Պազալդային ժայռք. — Պազալդային ժայռք սովորաբար գորշագոյն են, արտաքին տեսքով մի և նոյն նիւթէ կազմուած կ'երևին, բայց եթէ մանրացոյց գործեօք դիտելու ըլլանք՝ կը տեսնենք որ բաղադրեալ են կռանիտի, ձիթաքարի և տիտանեան երկաթի մանր հատիկներէ: Այս ժայռք շատ անդամ կը թափանցեն խաւանիստ հողերու մէջ այլ և այլ ձևով ու դիրքով. երբեմն երակներ կը ձևացընեն, երբեմն խաւերուն զուգահեռական են և երբեմն ալ գագաթնահայեց: Պազալդային ժայռք ուրիշ ժայռից և հողոց խաւերուն մէջ թափանցելու ժամանակ՝ կ'այլայլեն և բոլորովին կը փոխեն դայնս իրենց ջերմութեան զօրութեամբը. ինչպէս զկաւը կը




Ձև 74. Թումբք պազալդի կրի մէջ անցած:

դարձընեն 'ի կիր, և բուսական մնացորդները՝ կը փոխեն 'ի բընածուխ, ինչպէս նաև կռանիտք կը հալին, քուարց ու արաստոյ վէմն կը փեռեկին. փփրուն կիրն՝ պազալդին դպշելով կը փոխուի կ'ըլլայ երբեմն կարծր կիր, երբեմն շաքարային կիր, զորօրինակ կը տեսնուի Ռազին կղզւոյն մէջ, (Ձև 74):

Պազալդային ժայռք մեծ բնդարձակութիւն ունին երկրիս վրայ, մանաւանդ հրաբղսային տեղուանք, ինչպէս Հայաստանի լերինք՝ մեծաւ մասամբ պազալդային կազմութիւն ունին, թէպէտ և մէջերնին ուրիշ շատ տեսակ ժայռերն ալ պակաս չեն. ուրիշ տեղեր ևս կան պազալդային ամբողջ լեռներ, բլուրներ, կղզիներ, այրեր և կոթողներ, որոց ներքին կազմութիւնն բիւրեղային է. շատ անդամ պազալդք գեղեցիկ հասուածակողմեան սիւնակներ, աստիճանաւոր զարմանալի

թումբեր և կոթողներ կը ձևացընեն, (Ձև 76). ասոնց գեղեցիկ օրինակներ կը տեսնենք յիւլանտա, 'ի Գաղղիա, Սղա-




Ձև 75. Կիկլոպեան կղզի:

քա կղզւոյն Ֆինկակի այրին մէջ. տես 'ի Ձև 14, յիւլանտա, յԱնտիլիայս, 'ի Ս. Հեղինէ կղզին, 'ի Պոհեմիա, 'ի Սաքա-


նիս, 'ի Գերմանիա, յիտալիա և Հռենոսի եղերքը՝ ընդ մէջ Տրեւ քաղաքին և Գոպլենցի Ամր Պանրոյ ըստուած անուանի այրին մէջ. (Ձև 73): Հրաբուսային պաղալդի շատ գեղեցիկ օրինակ մ'է նաև Սիկիլիոյ մօտ եղած Կիկլոպայց կղզիներէն մէկն, (Ձև 75):

140. Հատաքարային ժայռք. — Հատաքարային ժայռք շատ մէծ լնդարձակութիւն ունին երկրիս վրայ. ասոնք երբեմն մեծամեծ և ամբողջ լեռներ, կլորածև բուրդներ և բրդածև զանգուածներ կը ձեւացընեն, որոնք երկրիս կեդրոնէն դուրս ելած են. կամ հրաբուսային զօրութենէն մղուած և կամ երկրիս ներքին խաւոց ամբարձմանէ բարձրացած: Այս ժայռերն սովորաբար բաղադրուած են ՚ի ֆելտսպաթէ, քուարցէ և միկայէ՛ խառն ուրիշ նիւթոց հետ, զանազան գոյներով: Հա-




Ձև 76. Պաղալդի աստիճանաւոր թումբք:

տաքարինք շատ անգամ ուրիշ հողոց մէջ կը դտնուին զանազան դիրքով և ձեւերով, այսինքն՝ շերտ շերտ, զուգահեռական, գագաթնահայեաց և ծամածուռ, օրինակի համար՝ ՚ի Սկոլտիսաւ ՚ի Սպատոնիա կրային հողոց մէջ լաւ կ'երեւին. երբեմն ածխարեր խաւերու մէջ ալ կը դտնուին, զոր օրինակ՝ ՚ի Բէքոյ. երբեմն ալ հեղուկի պէս տարածուած կը տեսնուին, ինչպէս յԱլպեանս՝ Յուրայեան հողոց մէջ: Հատաքարինք ուրիշ հողերու մէջ անցնելու ժամանակ՝ միշտ իրենց շերմութեամբ կ'այլայլեն ու կը փոխեն խիտ ու փիրուն կիր և ծուաքար՝ ՚ի շաքարային կիր, ՚ի տողոմիտ և ՚ի գաճ, անհետ ընելով գործարանաւոր մարմնոց հետքը, ու ստանալով զանազան գոյներ: Հատաքարային ժայռերու կը վերաբերին կոսեիտ, աիենիտ, դիորիտ և շեղչաղօտ: Այս այսպիսի ժայռք կը դտնուին ՚ի Պիրենեանս, յԱլպեանս Գաղղիոյ, ՚ի Սաւոյիա, ՚ի Զուի-



Ձև 77. Կիւմիշանէ:


շերի, 'ի Նորուեկիա, Անդղիոյ ամէն կողմն, 'ի Հունգարիա, 'ի Գլուխն բարեյուսոյ և յԱմերիկա. իսկ 'ի Հայաստան քիչ տեղ կը տեսնուին հատաքարային ժայռք՝ համեմատութեամբ ուրիշ ժայռից, բայց այսու հանդերձ 'ի ստորոտս Արագածի հրաբուխին արաստոց ապառաժին մէջ շատ առատ հատաքար տեսեր է Բարուող. կը գտնուին նաև 'ի Կիւմիշխանէ՝ որոյ լերանց մէջ մի են հատաքարանց խաւեր քուարցի հետ, և քազաքն իսկ ամբաղջապէս հատաքարանց վրայ շնուած է (Ձև 77). Նմանապէս 'ի գաւառն կարնոյ, յՈրմիա, Արտապատականի մէջ, և ուրիշ լերանց կողերու վրայ ալ կը գտնուին:



Ձև 78. Պորֆիրային ժայռ:

**141. Պորիիշրային ժայռ.** — Պորֆիրային ժայռք կ'ըստին այն բիւրեղներն, որոնք ցան ու ցիր են բարակ հողային զանգուածոց մէջ, ինչպէս 78 Ձևոյն մէջ կը տեսնուի. և այն սպիտակ բիւրեղներն որ կը տեսնուին պատկերիս մէջ արաստոց վէմ կամ ֆելտոսպաթ են: Այսպիսի ժայռք առատ կը գտնուին երկրիս ամէն կողմն, զոր օրինակ 'ի Դիրոլ, 'ի Լոմպարտիա, յԱլպեանս, 'ի Բրովանս՝ Էսդրել լերանց մէջ տեղ, 'ի Գերմանիա, և այլն: Այս ժայռից զնակայքն բոլորովին խառնակեալ են, մէջը այլ և այլ դարուց կրային հողեր բարձրացեր են, և զանազան դիրքեր առած են. բաց 'ի այս տեղափոխութենէն, ամէն տեղ ուր որ պորֆիր անցեր է, հոն կրահողակիսուեր են 'ի տողոմիտ, այնպէս որ մի և նոյն դիրքուց մէջ մէկ կողմն պարզ կրահողն կը տեսնուի, և միւս կող-

մէն ճեղքուած տողոմիտ. բայց զարմանալին այս է որ այլափառ խած կրահողոց մէջ այն քիչ հանդիպած գործարանաւոր ժըժմակաց և խեցեմորթից մէջ լեցուն է մագնէսիա, և այս կը ցուցնին հաւաստեաւ թէ վերջէն եղած պիտի ըլլայ, վասն զի չկայ ամենևին խեցեմորթ մը որ 'ի բնէ լեցուն ըլլայ մագնէսիաիւ: Ի Հայաստան ևս շատ տեղ կը գտնուին պորֆիրային ժայռք, ինչպէս Սպերու լերանց մէջ. Ընդ մէջ Նախիշևանի և Երևանու կարմիր պորֆիրէ բրգաձև ժայռեր և բլուրներ կը բարձրանան, յորս անցած են ձայնաքարինք. կան նաև Պայէզիտի կողմերն Ալլնճայ և գաւառին մէջ. իսկ Մեծն Մասիս գրեթէ ամբողջ միակտուր պորֆիրէ կը կազմուի: Այս պորֆիրային ժայռից կը վերաբերին օձաքար, և զանազան պորֆիրային տրապէր, որոնք թափանցելով կրահողոց մէջ իրենց զուգահեռական դիրքը կ'առնուն (Ձև 79), և երբեմն դուրս կը ցցուին՝ այլ ձևերով (Ձև 80):




Ձև 79. Տրապէր կրահողոց մէջ անցած:

**142. Որձաքարային ժայռ.** — Որձաքարային ժայռք ևս ամենառատ են բնութեան մէջ և գրեթէ ամէն տեղ կը գըտնուին, ինչպէս յՈվեռներ, 'ի Տօրէ լեառն, 'ի Գանգալ, 'ի Մեզէն, 'ի Մէկալ, յաջ կողմն չուննուի, 'ի Հունգարիա, 'ի Դրանսիլվանիա, 'ի Կովկաս, 'ի Յունաստան, 'ի Լիպարեան կղզիս, 'ի Կամպանիա, յԵւկանեան լերինս, յԱլգորեան գօտիս, 'ի Գանգարեան կղզիս, յԱմերիկա, 'ի Կեդրոննական Ասիա, 'ի Բամիեաղքա: Իսկ 'ի Հայաստան կան այսպիտի ժայռք ընդ մէջ Նախիշևանի և Որդուպատու, Երասիայ հովուաց մէջ, Արլենճայի կողմեր և Մասեաց արևելեան կողմէն բարձրացած Թաքալթու լերան վրայ, որ ամբողջ հերձաքարային կազմութիւն ունի:

Որձաքարային ժայռից կազմութիւնն շատ փոփոխական է, և գրեթէ իւրաքանչիւր լեռն տարբեր կազմութիւն ունի.

ոմանք անհարթ են՝ իրենց բարակ ծակոտկէնութեան պատճառաւ, ոմանք բոլորովին խիտ ու պորփիւրային կազմութեամբ են, զանազան գոյներով. կան դարձեալ ուրիշներ որք առաւել կամ պակաս փիրուն են՝ բաց գոյներով և կը կոչուին տօմիսոք, վասն զի Բիւյ ողը-Տոմ լերինք այս տեսակ որձաքարիւ կազմուած են, <sup>տես Ձև ԵՅ:</sup> Որձաքարային ժայռք ևս զանազան հողոց խաւերու մէջ անցած են և այլայլած իւրենց շերմութեամբ մերձաւոր ժայռերը. ուստի երբեմն կը գտնուին զատ զատ, երբեմն խառն ուրիշ ժայռից հետ, և կը ձևացրնեն լեռներ, բլուրներ և ուրիշ մեծ կամ փոքր զանգուածներ իրարու վրայ դիմուած (Ձև 81): Այս ժայռից կը վերաբերին ձայնաբար, տօմիս, չեւարար, ուստինիտ և վանակատ:



## Ձև 80. Տրամադրության մեջ

143. Խաւանիստ ժայռք. — Խաւանիստ ժայռերն, որք նաև կը կոչուին Ջրանիստ, ձևացեր են ջրոց մէջի եղած նիւթոց իրարու վրայ խաւ խաւ դիզուելով. այս նիւթերս յառաջ եղած են հրային ժայռից քայլքայելէն և կամ ամենակին ժայռերէն, որոնք չերմութեան և սաստիկ ճնշման ազդեցութեամբ՝ հաստատուն եղած են: Այս ժայռք մէկմէկու վրայ դիզուած են ըստ ժամանակագրական կարգի, յորոշատ անդամ կը գտնուին գործարանաւոր մարմնոց բրածոյք, և կամ նոյն ժամանակը ապրող բոււոց, խեցեմորթից, ձկանց և ուրիշ կենդանեաց մնացորդքը. այս ջրանիստ ժայռից կը վերաբերին աւագուտք, խմբ, կրաքարինք, և այլն:

144. Այլակերնս ժայռը. — Բաց ՚ի վերոյիշեալ երկու տեսակ ժայռից, երկրիս խորը կան այնպիսի ժայռք, որոնք խաւանիստ ժայռից յատկութիւնը պահելով, ունին ևս կատարեալ բիւրեղակամնութիւնն. որով կը տեսնուի թէ ազդեցութիւն մը կրած են երկրիս ներքին չերմութենէն. այս ժայռերն կ'ըսուին այլակերպ ժայռը. և ամենայն կերպով յայտնի կ'երեկ' որ այս ժայռերն ջրոց մէջ ձևացեր են, բայց յետոյ բնութիւննին փոխած են կամ հրային ժայռից մօտ ըլլալնուն պատճառաւ, կամ գոլորշեաց և ուրիշ կազերու վեր ժայռքենու միջոց հալած ըլլան, և կամ տարրաբանական զօրութեանց ազգեցութեամբ, կամ նաև պլուտոնական ժայռեր մէջերնէն անցնելով իրենց սասատիկ չերմութեամբ բիւրեղայցուցած ըլլան զկաւ, զկրաքարինս և զաւազ: Այս այլակերպ ժայռք շատ




## ՁԼ 81. Որձաբարային ժայռք :

տեղ կը տեսնուին, ինչպէս Այրարատայ, Արագածի, Սաւազանի, Ալաբեան լեռնց վրայ, նմանապէս Պայշտիսի կրալերանց վրայ, 'ի Գաղղիա, յԽոսալիս . այսպէս նաև Մոնշենի դիոյ և Ա. Կոդարտուի գաճք այլակիսուած են ծծրմբային բղիսմանց պատճառու։ Այս այլակերպ ժայռք անկենտաս հոդք կ'ըսուին, վասն զի մէջերնին մինչև հիմայ կենդանեաց հետք մը չէ տեսնուած, և են երեք տեսակ ժայռք՝ կնայս (Ձև 82) Միկարերաքանը և Տալքարերաքանը։ Այս այլակերպ ժայռից ձեւացման ժամանակ հանդիպած են Վանտէի և Ֆինիստէրացի դրայի դրսոթիւնք և մասնաւորապէս Կնայսի և Միկաթերթաքարի խաւերու մէջ։

145. Այլ և այլ ջրակիստ խաչեր. — Երկրաբանք այս  
դանապան ժայռից քննութենէն և մէջը գտնուած անթիւ բը-

բածոյից գիտութենէն՝ երկրագնտիս պատմութիւնը, եթէ ոչ  
ամբողջապէս, դէք մեծաւ մասամբ յօրինեցին և իմացան թէ  
ի՞նչպէս ձեւցեր է իր հաստատուն մակերևոյթն. որով ջրա-  
նիստ խաւերու յաջորդութեան կարգ մը դրին ըստ հնութեան,  
և թէ որ ժամանակ ժայթքմունք եղեր են:

Ջրանիստ ժայռք սովորաբար հորիզոնական դիրքով կը  
նոտին և խաւ խաւ կը ձեւանան. սակայն այս դիրքս կ'այլա-




ԶԿ 82. Ժայռ կնայսի:

փոխի շատ անգամ ջրոց շարժմանէն, երկրիս տատանմանէն,  
գետնոյն յանկարծական բարձրանալէն կամ ցածնալէն, և եր-  
բեմն ալ ՚ի սաստիկ հոսանաց ջրոց՝ ենթածովային խաւերը  
կը մաշն տեղ մը շատ և տեղ մը քիչ, որով գանալզան ձևեր  
կ'աւնուն: Երբեմն կ'ըլլայ որ խաւերու զուգահեռականու-  
թիւնն թէպէտ և բոլորովին չ'անհետանար, բայց մեծապէս  
կը փոխովի վերսիշեալ պատճառներէն. այսպիսի փոփոխու-  
թիւններէն վերջը ուրիշ խաւեր նստելով՝ կը ձևանան ծա-  
մածուռ, ուղիղ, խոտոր և մինչև գագաթնահայեաց կարգեր:

Գետնի մը բարձրանալու կամ ցածնալու ժամանակը՝  
այլ և այլ խաւերու մէջ ըստ բաւականի խորութեամբ՝ յան-  
կարծական ձեղքեր կը բացուին, ասանք կ'ըստին Պատա-  
ռուածք: Եթէ պատառուած մը մեծ խորութիւն և շատ ընդ-  
արձակ ըլլաց՝ կ'ըստի ընդհատութեն. երբ մի և նոյն դիրսի մը  
մէջ ամէն խաւերն ալ իրարու զուգահեռական ըլլան՝ կ'ըստին  
Զուցըներաց խաւը. իսկ երբ մի և նոյն դիրսի մէջ խաւ մը մէկ  
դիրք ունենայ, ուրիշ խաւ մը ուրիշ դիրք, ունանք ուղղահա-  
յեաց ըլլան, և այլք առ ՚ի շեղ, կ'ըստին Անդուդներաց խաւը:

146. Բնեղիանուր դասաւորութիւնն հողոց. — Երկրաբանից  
առաջին ճիզն եղած է՝ յետ զանազանելց գժայռու իմանալ  
այլ և այլ հողոց դարերը, և ըստ ժամանակագրական կարգի  
դասաւորել զանոնք: Նկատմամբ հրային ժայռից (ԶԿ 83), շատ  
զժուարին եղած է դասաւորութիւնն մ'ընել. նախ որովհետեւ  
խաւանիստ չեն և շատ զարուց ու հողոց մէջ կը բովանդա-  
կուին, երկրորդ՝ որ բրածոց չունին: Ընդ հակառակն ջրանիստ  
հողոց համար շատ աւելի դիրին եղած է դասաւորութիւն



ԶԿ 85. Հրային ժայռ:

մ'ընել. վասն զի ստոյգ կարգ մը կը տեսնուի խաւերու մէջ, և  
միանգամայն լի են թէ անոյշ ջրոց, թէ ծովայինն և թէ ցա-  
մագային գործարանաւոր մարմնոց բրածոյինք, որոնք շատ մեծ  
լցու կու տան, մանաւանդ իրենց զանազանաթեամբ:

147. Բաժանութեան խաւանիստ հողոց. — Խաւանիստ հո-  
ղերն չորս մեծ բաժանմունք ունին, և կ'ըստին Երկրաբանա-  
կան դարք, որոնք պահած են իրենց բրածոյիքը, և իւրաքանչիւր  
դարն կը համապատասխանէ երկրիս մեծամեծ յեղափոխու-  
թեանց՝ զոր ունեցած է իւր մակերևութիւն վրայ և զանազան  
խաւերու մէջ. և են

Ա.Ա.Զ.Դ.Ա.Կ կամ ՀԻՆ ԶՐԱՆԻՍՏ ԴԱՐ  
ԵՐԿՐՈՐԴ.Ա.Կ կամ ՄԻԶԻՆ ԶՐԱՆԻՍՏ ԴԱՐ  
ԵՐՐՈՐԴ.Ա.Կ կամ ԲԱ.ՐՁՐԱԳ.ՈՅՑՆ ԶՐԱՆԻՍՏ ԴԱՐ  
ՉՈՐՐՈՐԴ.Ա.Կ կամ ՇՈՐ ԿԵՆԴԱՆ ԵԱՅ ԴԱՐ

Այս առաջին բաժանմանց իւրաքանչիւր դարն, զանազան եր՝ կրորդական գլուխեր կը բովանդակէ, որոնք զանազան ժամանակաց մէջ ձևացեր են, և իւրարմէ տարբեր են կազմութեամբ, մէջի բրածոյիւր և բաղադրութեամբ նիւթոց. ուստի ԱՌԱՋՆԱԿ ԴԱՐՆ կը բաժնուի 'ի հինդ Հողս կամ Շրջանս

1. ԳԱՄՊՈՐԵՍՆ ՀՈՂՔ ԿԱՄ ՇՐՋԱՆ
2. ՄԻԼՈՒՐԵՍՆ ՀՈՂՔ ԿԱՄ ՇՐՋԱՆ
3. ԴԵԽՈՆԵՍՆ ՀՈՂՔ ԿԱՄ ՇՐՋԱՆ
4. ԱԽԽԱԲԵՐ ՀՈՂՔ ԿԱՄ ՇՐՋԱՆ
5. ՓԵՐՄԵՍՆ ՀՈՂՔ ԿԱՄ ՇՐՋԱՆ

ԵՐԿՐՈՐԴԱԿ ԴԱՐՆ կը բաժնուի յերեք Հողս կամ Շրջանս

1. ՏՐԻԱՍԵՆ ՀՈՂՔ ԿԱՄ ՇՐՋԱՆ
2. ՅՈՒՐԱԶԵՆ ՀՈՂՔ ԿԱՄ ՇՐՋԱՆ
3. ԿՐՍՅԻՆ ՀՈՂՔ ԿԱՄ ՇՐՋԱՆ

ԵՐՐՈՐԴԱԿ ԴԱՐՆ կը բաժնուի յերեք Հողս կամ Շրջանս

1. ՆԵԽԱՀՆԱԿ ՀՈՂՔ ԿԱՄ ՇՐՋԱՆ
2. ՄԻՁԱՀՆԱԿ ՀՈՂՔ ԿԱՄ ՇՐՋԱՆ
3. ՆՈՐԱՀՆԱԿ ՀՈՂՔ ԿԱՄ ՇՐՋԱՆ

ՉՈՐՐՈՐԴԱԿ ԴԱՐՆ կը բաժնուի միայն յերկու Շրջանս

ՎԱՐԺԱՊԱՏ ՇՐՋԱՆ, ԶՐՃԵՂԵՂԱՑԻՆ ՇՐՋԱՆ ԵՒ ԱՐԴԻ ՀՈՂՔ


## ԳԼՈՒԽ

ԱՌԱՋՆԱԿ ԴԱՐ

148. Առաջնակ դարուն կարեւորիշեն. — Առաջնակ դարուն ուսումն շատ կարեսոք է կենդանեաց տեսակաց՝ արարչութեան կամ ծագման ամենամեծ խնդիրը լուծելու համար: Վասն զի բնագիտաց շատերն կ'ըսեն՝ թէ արդեօք կենդանիք աստիճանաբար՝ կը կատարելագործուին իւրարմէ յառաջ գալով, թէ Աստուած արդէն կատարեալ և անթերի ստեղծած է իւրաքանչիւր տեսակը: Եթէ կենդանեաց տեսակը կամաց կամաց և կարգ ըստ կարգի զարգացած են և կատարելագործուած, անտարակցս պիտի գտնենք ամենահին խաւերու մէջ կենդանեաց նախնական ամենաթերի կադմակերպութիւնը. բայց եթէ չանդիսինք այսպիսի թերի կենդանեաց, այլ մանաւանդ յիւրում մեռի կատարեալ տեսակաց, կը հարկադրուինք ընդունելու՝ թէ տեսակը կենդանեաց՝ մէկմէկէ յառաջ եկած չեն, այլ կատարեալ ստեղծուած է իւրաքանչիւր տեսակն: Այդ տեսնենք կարգաւ. այս առաջնակ դարու զանազան հողսց կազմութիւնները, ինչ բրածոյք կը բովանդակեն իւրաքանչիւր դարն, և թէ ինչ ամբարձմունք հանդիսիւր են ամէն մէկուն մէջ:

149. Գաւաղրեան հողք. — Գամարփեան հողք՝ որոնք առաջն ջրանիստ խաւերն են, կը գտնուին Լաւրենտեան և Սիւլուրեան հողք մէջ, և զրեթէ վերջնոյս հետ կը միանան: Գամարփեան հողք կոչուեր են՝ նախ Գամարփի կամ կալեսի երկրին մէջ գտնուելուն համար. սակայն կան նաև մեծ ընդարձակութեամբ 'ի զանազան կողմանս Գաղղիոյ, ինչպէս նաև 'ի Սպանիա, 'ի Պուէմիա, 'ի Շուէտ, 'ի Նորուեկիա, 'ի Ռուսիա՝ Բեդերսպուրկի և Լատուկայ և Յնեկայ ճերուն մօտ, Ուրալ լերանց վրայ, 'ի Գանատա, 'ի ձորս Միսիսիլեայ և 'ի Հարաւային Ամերիկա: Գամարփեան հողք մէջ կենդանիք առաջին անգամ կը տեսնուին. այս կենդանիք են


Յարախեցիք և Կրախեցիք, որոնք կը նմանին ուղիղ ծիլի վրայ կեցած կրային ծաղկանց, ասոնցմէ արդ ամենախոր ծովերու մէջ կը գտնուին։ Շատ բազմաթիւ են նաև Բաղկատունք, ու ըսնեք ժայռից և պարեխներու վրայ ամրացած կը կենան իրենց ոտքով կամ բազկոտվ՝ զոր խեցիէն կը հանեն և իրրև խարիսխ կը նետեն ժայռից վրայ հաստատուելու համար։ այս ազգին մէկ տեսակն միայն մինչև հիմայ կ'ապրի, այսինքն Նեղուակախեցի։ Շատ զարմանալի է նաև Պոմիիշեան Կաւախեցի՝ խորշաւոր խեցինորիցից մէջ, որ մինչև հիմայ կ'ապրի։ այս կենդանին Գլխունեաց տոհմին կը վերաբերի, այսինքն այն կեն-



## 24. Упаковка

գանեաց՝ որոց գլխուն վրայ շատ ուրեմն և բաղդուկներ կան, նըման արդի Պոլիառոդից և Ալիքէից (Ձև 84), որք իրենց լողալու գործիք են, միայն փոխանակ սակր կամ ներքին աճառ ունենալու Պոմիկիլեան Կատախեցին արտաքին խեցի մ'ունի, նման միապատեան ԽԵցեմորթից՝ յայլ և յայլ խորչ բաժնուած, ուրոց իւրաքանչիւրն՝ բրածոյից մէջ իրարու հետ ծակով մը կը հաղորդուի . իսկ կենդանաւոյն ողջ ատեն՝ ծակերն միացած են թաղանթային անցքով մը, զոր կենդանին ըստ կամա կը նայ կծկել կամ ընդլայնել. խորչերն օգով լեցուն են, և

կենդանին սեղմելով կամ ուռեցընելով զխողվակը,և թերեւս  
ջրով ալ լցընելով՝ կը թէթէցընէ կամ կը ծանրացընէ, ուս-  
տի և կրնայ ջրոյն տակ երթալ կամ ջրոյն երեսն ենել։ Շատ  
բազմաթիւ են այս միջոցին նաև խեցեմորթք, որոնք կատարե-  
լագոյն կաղմութիւն ունին անողնայար կենդանեաց մէջ. ա-  
սոնց կը վերաբերին Եռախորշաւորք (Ձև 85), որոնք ամենե-  
ւին նմանութիւն չունին մեր արդի Խեցեմորթից հետ, և հի-  
մայ բոլորովին անհետացած են։ Կան նաև կրկնապատեան  
Ռատրէք 'ի տոհմէ Անդլիսից, և միապատեանք 'ի տոհմէ Որո-  
վայնոտից. միուլբանիւ բոլորն ալ ծովային կենդանիք են Գամ



## զԼ 85. Եռախորշաւոր :

## Ձև 86. Ապունգ :

պրեան հողոց մէջ՝ Արդ այսպիսի կատարեալ և յառաջադէմ  
արարացութիւնը տեսներով այնչափ հին դարու մէջ, բոլորո-  
վին անհիմն կ'ըլլայ բնագիտաց այն կարծիքն՝ որով կը պաշտ-  
պանեն թէ ամենայն արդի տեսակք կենդանեաց՝ յառաջ ե-  
կած են անկատար տեսակաց շարունակ այլագիտութենէն:

Գամլիքնեան հողոց մէջ բաւսական բրածոյք ամենափշի են,  
և միայն քանի մը տեսակ Ջրիմուռք կան, ինչպէս հին Օւ-  
տամիա. Կառարուսոց մէջ կան Սպունգք (Ձև 86), բայց յա-  
տուկ տեսակին են Գրչաքարինք (Ձև 87): Հողոց կազմութիւնն  
հերձաքարային, կոպճային և կրային է:

Հայոց ֆուզ և շարժակի հետ մարդ բնաւ

(Պամպրեան հողոց ժամանող լը արդեօք ցամագը երկիրներ  
կային թէ չվային՝ որոշ չեղիսցուիր) բայց այս յայտնի է՝ որ այս  
ժամանակիս բազմաթիւ կենդանիք ծովային աղերը իրենց կը  
սեփականէին, ուստի եթէ ծովերն ալ ուրիշ կողմանէ նորա-  
նոր աղերը շնորհէին, անկարելի կ'ըլլար ոչ միայն այն կեն-  
դանեաց բազմանալն, այլ և բնակին խակ. որոյ հակառակն  
քաջորդ Սիլուրեան հողոց մէջ պիտի տեսնենք, որ ծովային




Զե 87. Գրչաքար :



Զե 88. Ուղեղիներ կոնաձե:

կենդանիք շատ աւելի բազմացած են: Արդ այն աղերն՝ որոց  
պէտք ունին Ճժմակը և Խեցեմորթք, անոյշ ջրերէն կ'ընդու-  
նէին, որոնք կրային, կոպճային և ուրիշ հանքերուլ ծանրա-  
բեռնեալ՝ անշուշտ ցամացներէն ծովերու մէջ կը թա-  
փուէին: Այս շրջանին հաղոց զօրութիւնն կամ թանձու-  
թիւնն սովորաբար 500 մէդր է, բայց տեղ տեղ մինչև 3000  
մէդրի կը համնի: Պամպրեան շրջանին մէջ հանդիպած են  
երրորդ և չորրորդ դրութիւնն լերանց, այսինքն՝ դրութիւն  
Լոնկվինտի բլուց՝ Մնդղիոյ մէջ, և դրութիւն Մորպիհանի  
Գաղղիոյ մէջ, որոնք ամենէն հնագոյն ամբարձմունքն կը հա-  
մարդուն՝ յետ ֆինիսդէրայի դրութեանն:

150. Սիլուրեան հողք. — Սիլուրեան հողերն շատ աւելի  
ճոխ են քան զՊամպրեան հողս, և անմիջապէս կը յաջորդեն  
Պամպրեան հողոց, այնպէս որ երբեմն իրարու հետ կը շփո-  
թին: Այս հողերէն այնշափ առատ է յԱնդղիա որ Լայէլ ե-  
րեք մասն բաժնած է զանոնք. Ա. Ստորին Սիլուրեանք, ո-  
րոնք կը բաղկանան հերձաքարէ և կոպճէ. Բ. Միջին Սիլու-  
րեանք, որոնք կը բաղկանան թերթաքարէ, կրէ, կոպճէ և  
շեղազօդէ. Գ. Բարձրագոյն Սիլուրեանք կամ Խոտող, ո-  
րոնք կը բաղկանան թերթաքարէ, կաւային կրէ, կոպճէ և  
միկախառն սիկէ: Այս հողերէն ոչ միայն յԱնդղիա կը զըս-  
նուին, այլ նաև 'ի Սիկլիխ, 'ի Դիրոյ, 'ի Սպանիա, 'ի Գեր-  
մանիա, 'ի Հոլանտա, 'ի Շուէտ' ամբովլ կողանատ կղզին, 'ի  
Ուռուխա' Տակոյ կղզին և Բեդերսպաւրի մօտերը, յԱմերիկա'  
'ի Միացեալ Նահանգս, և 'ի Հայաստան Ղարապաղ գաւա-  
ռին մէջ կը տեսնուի ինչ ինչ հետք Սիլուրեան հողոց, ինչ-  
Ս. Ստեփիանոսի վանաց մօտ: Սիլուրեան հողոց թանձու-



Զե 89. Թառափ կամ Ստորիոն :

թիւնն 1000 մէդրէն աւելի է, ըստ բազում երկրաբանից:  
Այս հողերն շատ խառնագնդոր են, և ամենափիշ են զու-  
գահեռական խաւերն, այլ կը տեսնենք շատ տեղ ծամա-  
ծուռ, շրջեալ, առ. 'ի շեղ և մինչև գագաթնահայեաց դիր-  
քով խակ. ասկէ յայտնի կ'երևի թէ այս ժամանակս ստէպ-  
եղած են երկրաշրժք, ժայթքմունք, հակումն և բարձրա-  
ցմունք: Սիլուրեան հողոց մէջ դեռ կը շարունակէն Պամ-  
պրեան հողոց ծովային կենդանիք, այլ շատ բազմութեամբ,  
այսինքն մինչեռ Պամպրեան հողոց մէջ 150 տեսակք էին,  
աստ 2500 տեսակի կը համնին. սակայն դեռ ոչ ցամաքսին  
և ոչ անոյշ լրոյ կենդանիք կան: Այս ժամանակս երեցան

Ուղղեղիւրք, որոնք խորշաւոր Խեցեմորթից կը վերաբերին և նման են Պոմփիլեան Նաւախնեցւոյն, բայց փոխանակ պարուրած ըլլալու, ուղիղ կոնի կը նմանին. խորչերնին 'ի ներքուստ են, և մեծութիւննին 15 ոտք է (Ձև 88): Նմանապէս Շուշանաձեք, Թռեալերպք, Նաւախնեցիք, Եռախսորշաւորք, Խոյեղիւրք, Բազկոտունք և Գլխոսնեայք շատ մեծդի են և բազմութեամբ կը գտնուին, յորոց միայն Պոհեմիոյ մէջ 2000 տեսակ կը համրուին: Առաջին անգամ կ'երեկին ծովու Ողնիք և Բուսատք, որովք մեծամեծ և խոր ծովեր կը ծածկուին: Սիլուրեան բարձրագոյն խաւերու մէջ մինչդեռ և ոչ իսկ թրքաւոր կակղամորթ մը տեսնուեցաւ և ոչ միջատ մը, սկըսան երևնալ ընդհակառակն զանազան ձկոնք, և այնչափ բազմութեամբ, որ իրենց ոսկրոտեօք մեծամեծ դէզեր ձևացած են: Այս ձկոնքն զարմանալի կազմութիւն մ'ունին. գըլուկնին պատենաւորեալ է մեծ վահանով մը՝ նման այժմեան թրառափի (Ձև 89), և մարմնոյն վրայ մեծամեծ թէփեր ունին, ասով ըստ իմիք Խեցեմորթից կը մօտենան: Բոյզք այս ժամանակս միայն ծովային ջրիմուռք են, որով յայտնի կը տեսնուի՝ որ մթնոլորտն տարբեր վիճակ ունեցած է յաջորդ դարուց մթնոլորտէն: Սիլուրեան ժամանակն շատ զարմանալի յատկութիւն մ'ալ ունի, այսինքն՝ նախ սակառութիւն կենդանեաց ցեղից և շատ մեծ բազմութիւն անհատից, երկրորդ որ ամէն տեղ յլշրոպա, յԱմերիկա, 'ի Հասարակածն և 'ի Բելեռս, մի և նոյն մնացորդք կը գտնուին կենդանեաց և բուսոց. յորմէ կը հետևեցընենք՝ թէ այն ծովուց բարեխառնութիւնն ամէն տեղ քիչ շատ նոյն եզած պիտի ըլլայ: Այս շրջանին մէջ կը հանդիպի Վեսդմորլանտի և Հունդորիւքի ամբարձման հինգերորդ դրութիւնն, որ կը տարածուի հիւսիսային արևելեան 25 աստիճանէն, մինչեւ հարաւային արևմտեան 25 աստիճանն:

151. Գերոնեան հողք. — Սիլուրեան հողոց անմիջապէս կը յաջորդեն Գեւոնեան հողք, և այս անուամբ կը կոչուին Անդիկոյ Դեւոնսիր նահանդին մէջ ամենառատ գտնուելուն պատճառաւ. ըստ բաւականի ընդարձակութեամբ կան նաև այս հողերէն 'ի գերմանիա, 'ի Գալլիա, 'ի Պոհեմիա, 'ի Ուռուսիա, 'ի Պելիա, 'ի Ապանիա, 'ի Միացեալ Կահանդս, 'ի

Հիւսիսային Ամերիկա և յԱւստրալիա, որոց թանձրութիւնն կրնայ ըլլալ 200 մէտրէն մինչև 1500 մէտր: Այս ժամանակս հետ զիետէ Եռախսորշաւորք կը նուազին. իսկ Բազկոտունք, Որովայնոտունք և Գլխոտնեայք դեռ կը շարունակեն. Գլխոտնեայց տոհմին մէջ նոր տեսակ մը կ'երեւի Կոնիատք, կան նաև Օղակաւորք: Բայց Դեւոնեան հողոց յատուկ նոր տեսակը են ողնաւոր ձկունք, որովք դեռ թէպէտ և անկատար են և արդի ձկանց կազմութենէն շատ տարրեր, բայց այսուհանդերձ 150 տեսակ կը համրուին: Պատենաւոր ձկանց ու մանք զիստն վրայ զօրաւոր վահան մ'ունին, և այլք ուկրէ երկայնաձեւ զէնք մը 20-30 ոտք երկայն, յորոց երևելի է Տարասովան՝ որ Սալամանդր կարծուեցաւ: Սոսնցմէ զատ կը գտնուին նաև Մեծածուկն ըստածն, Երկթևեան վահանածուկն, Ծառակերպ ձուկն, և այլն. դարձեալ առաջին անգամ կ'երեւին մեր արդի Խեցափառաց նման թաթերով և ականջքը



Ձև 90. Պելերոպոփոն:




Ձև 91. Կոնիատ պարուրաձեւ:

Խեցեմորթք, ինչպէս երկարլթակ Լողակաթեւ և Լայնաթեւ, որոնք պահելով Եռախսորշաւորաց ձեւ՝ մեր արդի Խեցեմորթից կը նմանին: Վերջերս գտնուեցան նաև թէ թեփաւոր և թէ ուկրապատ ձկունք՝ աճառեայ ձկանց հետ. որով այսպիսի յանկարծական յառաջադիմութենէ և կենդանեաց կատարելութենէ կը հետևելուց թէ ունայն է բոլորովին տեսակաց աստիճանաւոր այլափոխութեան դրութիւնն: Այս շրջանիս մէջ չեն պակամիր Սպոնդք, Փշամորթք և Բուսատք, թէպէտ և քիչ են կրային ժայռք, համեմատութեամբ կոսկային ժայռից: Այս ժամանակս առաջին անգամ կը տեսնուին Միջատք, յորմէ յայտ է թէ բուսաբերութիւնն շատ աւելի ճոխ եղած:

է քան զնախընթաց շրջանս։ Եւ յիրաւի 50 տեսակէն աւելի ցամաքային գաղտասանու խորշաւոր բոյսք կը գտնուին այս հոդոց մէջ, գլխաւորապէս Հօտիսովք, որոնք արդի բարձր ծառոց պէս մեծ եղած են. կը գտնուին նաև Պտերից մնացորդք՝ Թեփածառոց հետ մէկտեղ. ասոնցմէ զատ առաջին անգամ գտնուեցաւ փայտային նեարդովք ծառ մը, նման Շուռոց և Արաւկարիկի. կան նաև եօթն տեսակ մեծամեծ Ջրիմուոք։ Հոդոց կազմութիւնն ընդհանրապէս կոպճային է, կարմիր գոյնով, երկաթի թթուուկի պատճառաւ, և մէջ ընդ մէջ մարդ խառնուած է։ Այս շրջանին կլիման աւելի տուք եղած է, և ըսեռային կողմերը՝ հասարակածային ջերմութիւնն կը տիրէր։ Այս շրջանին վերջի ատենները ըստ Եղիա տը Պոմոնի կ'ամբառնայ վեցերորդ զրութիւնն լերանց, այսինքն վոժի լե-



ՁԿ 92. Կոնխատ Լիստերի։



ՁԿ 93. Թռչնիկ նրբամաշ։

րանց և Պրքաժի բլրոց, որոնք կը տարածուին հիւսիսային արևմտեան 15 աստիճանէն, մինչև հարաւային արևելեան 15 աստիճանն։


152. Արխարեր հողը. — Դեռննեան հոդոց կը յաջորդեն Արխարեր հողք։ Արխարեր կը կոչուին իրենց զանազան խաւերու մէջ առատ հանքածուին և ածխաքար բովանդակելնուն համար. բայց առով այշաք չէ հասկնալ թէ ուրիշ հոդոց մէջ հանքածուին չկայ, վասն զի կը տեսնենք որ նաև Սիլուրեան խաւերուն մէջ յիսլանտա և 'ի Բորդուգալ կայ ածխաքար, որ ձեւացած է ծովային բուսոց մնացորդովք, 'ի Սպանիա Դեւոնեան խաւերու մէջ և 'ի Սաքսոնիա Փերմեան կարգերուն մէջ կը գտնուի նոյն ածխաքարի հանք. նմանապէս Սկով-

տիոյ, Ամերիկոյ և արևելեան Հնդկաստանի ձուաքարանց մէջ կան ածխահանք. նոյնպիսի ածխահանք գտնուեցան նաև Գերմանիոյ և Աւստրիոյ միջանակակ հողոց մէջ։

153. Բնաժանութեան Արխարեր հողոց. — Արխարեր հողք ձեւացեր են ծովային և անոյշ ջրոց դիրսերէն։ Ծովային դիրսերն շատ մեծ ընդարձակութիւն ունին, և կը բովանդակեն զծովային բրածոյս, յորոց ձեւացեր են Ուստիոյ, Բրիտանիոյ, Պելճիոյ, հիւսիսային Սպանիոյ ածխահանքերն։ Խակ անոյշ ջրոց դիրսք շատ քիչ են և կը բովանդակեն անոյշ ջրոց և ճախճախուատ տեղեաց բրածոյս, որոց կը վերաբերին Գաղլիոյ, Գերմանիոյ, հարաւային Սպանիոյ և Խոտալիոյ ածխահանք։



ՁԿ 94. Կաւախեցի։




ՁԿ 95. Հանրաժեքի մեծ ակուայ։

Ծովային դիրսք կամ ածխարեր հողք, որոնք կը կոչուին նաև Իրաջին լերիներ, ընդհանրապէս կազմուած են խիստ և երբեմն հաստառ կրէ, գորշ կամ սև գոյնով, չօսպիմամբ անախորժ հոտ մը կու տայ և վաճառականութեան մէջ կը ծախուին Պելճիոյ և Ֆլյանտրիոյ հասարակ կորցի անուամբ։ Այս հողոց խաւերուն մէջ զանազան մետաղաց երակներ անցնելով՝ կ'ըսուին նաև կրային մետաղաբեր հողք։

Անոյշ ջրոց դիրսք կամ ածխարեր հողք շատ ճոխ են ցամաքային և ճախճախային բուսոց մնացորդովք. ասոնց յատակը

մեծ կոպճաքարերէ, քուարցի դայլախաղստէ և հերձաքարէ ձևացեր է. իսկ բարձր խաւերն կաւային կովճէ և կաւային թերթաքարտէ. ահա սովորաբար այս կաւային թերթաքարանց խաւերու մէջ կը գտնուին այն անսպառ կիզանուտ բրածոյքն՝ որ կ'ըսուին հանքածուիք:

Հանքածխոյ խաւերն շատ խառնափնդորուած են ստէպ ստէպ տեղափոխութեամբ, զոր ունեցած են երկրիս ներքին զօրութեանց պատճառաւ. և յիրաւի ամենուրեք խաւերն երրեմն զրծեալ կը տեսնուին, երրեմն առ ՚ի շեղ, տեղ տեղ մեծ պատճառուածներ կը ցուցընեն, և տեղ տեղ ալ պլուտոնական ժայռեր անցած են: Շատ անգամ նաև մէջ ընդ մէջ



Ձև 96. Թանձրալեւ:

կը գտնուին բնածխատ երկաթոյ, կաւ, կիր, հրաքար, կուպր, փայլուկ, և այլն:

154. Բրածոյք Ածխարեր Հողոց. — Այս ածխարեր հողոց մէջ լընդհանրապէս կը գտնուին Պոլիպոդք, Կակղամորթներ, որոց տոհմին կը վերաբերին Պելկերոփոն (Ձև 90), որ նման է Նաւախեցւոյ, Կօնխատ պարուրաձե (Ձև 91) և Կոսնիատ լիստերի (Ձև 92), որոց նման չեն գտնուիր արդ, Թլուշնիկ նրբամաշկ (Ձև 93), Ուղղեղջիւր կողմնական, և այլն: Կան նաև Խեցեմորթք, Օղակառոք, և Միջաստք յազգէ Պաւտենաթերց և Ջղաթեկից: Զկանց մէջ Ակսափզ բնագէտն 150 տեսակ կը համրէ, որոց 94 տեսակ յազգէ Շանաձկան և կատուածկան էին, և 58 աճառեաց ձկունք: Ասոնցմէ ոմանք այժմ

մեան ձկներէն շատ կը տարբերին և Առղնոց աւելի կը նմանին, ինչպէս Թանձրաթեւ (Ձև 96), Մեծաձուկն և Հանրաթեք, որոնք ահազին մեծութիւն ունեին. առաջիկայ պատշհերս (Ձև 95) կը ներկայացընէ Հանրաթեք ձկան մեծ ակռայ մը, զոր գտնաւ Պ. Հոռնէր յածխահանս Ջիֆէսէների: Այս անհեթեթ ձկանց հետ մէկանց կը գտնուին նաև վիթխարի Առղուններ, ինչպէս Հնամողէս, որոն երկայնութիւնն մէկ մէզր կրնայ ըլլալ: Այս ժամանակս շատ փառաւոր կերպով




Ձև 97. Ծառատունկ Պտերք:

կ'ամին Բուսաբեկ ծովլային Ողնիք. Խեցեմորթք 1000 տեսակի կը հասնին. շատ բազմաթիւ են Նաւախեցիք (Ձև 94) և Ուղղեղջիւրք. իսկ Նաւախորշաւորք ամենափիշ և գրեթէ անհետանալու մօտ են. կ'երևին դարձեալ այս միջոց թղթաւոր Խեցեմորթք, Հաղարոտեանք, Կարիճք և այլ Սարդատեսակք:

Այս լընդհիս բուսաբերութիւնն շատ գերազանց է քան գնախընթաց հողոց բուսաբերութիւնն թէ տեսակք, թէ մե-

ժութեամբ և թէ ընդարձակութեամբ։ Եւ յիրասի ամէն տեղ՝ 'ի բենեւս, 'ի հասարակածն և 'ի բարեխառն գօտիս, կը գդանուին գաղտասեռ խորշաւոր բուսոց մէջ Զիազիք, Պտերը և Հօտիայք. մերկասերմն երկարթակաց մէջ կոնածեք և Արամաւենապտերք, և նաև Արմաւենիք ևս առաջն անգամ կ'երեւին հոս։ Ծառատունկ Պտերը այս միջոցիս 18 մէջը բարձրութեան կը հասնէին, մինչեւ արդի ծառատունկ Պտերը (Ձկ. 97) առ առաւեն 6 կամ 8 մէջը բարձրութեան կը հաս-



Ձկ. 98. Թանձրատերև Պտեր։


Ձկ. 99. Սեպատերև հերձեղոս։

նին 'ի Հասարակածն. 97 ձևոյն մէջի պատկերաց Ան. Պուրպոն կղղույն արդի ծառատունկ Պտերը կը ներկայացընէ, Բն. արդի հասարակածային ծառատունկ Պտեր է, և Գն. Պրազի ծառատունկ Պտեր կը ցաւցընէ։ Իսկ Ածխարեր հաղոց ծառատունկ Պտերաց բրածոյք են թանձրատերև Պտեր (Ձկ. 98), Սեպատերև հերձեղոսո (Ձկ. 99), Այլածաղիկ Զդատերև Պտեր (Ձկ. 100), Առանատերև, Օղակաւոր երկայնասերև, Ցողունատերև, և այլն։ Թեփածառք ևս շատ բազմաթիւ էին

այս շրջանիս մէջ և շատ մեծ-դի (Ձկ. 101), որոց ցողունն զլանաձն է և գրեթէ 13 մէջը երկայնութեամբ՝ նման մեր արդի հովանոցաձև Արմաւենեաց, և ոմանք կը նմանէին մեր արդի Հօտիայք։ Հօտիսոյք՝ որոնք ընդհանրապէս արդ ՚ի Հասարակածն 200 տերակէն աւելի են և կը սողան գետնի վրայ և կամ հազիւ մէկ մէջը բարձրութիւն ունին (Ձկ. 102, 103), ածխարեր հողոց Հօտիսոյք մինչև 15 մէջը բարձրութիւն ունեցած են։ Բաւոց այս աստիճանի գարգացման մեծապէս օդնած են նոյն ժամանակուան սաստիկ խոնաւութիւնն, ու երկրիս ներքին և արեգական ջերմութիւնն, որով կ'իմացուի



Ձկ. 100. Այլածաղիկ Զդատերև Պտեր։




Ձկ. 101. Թեփածառ։

թէ այս ժամանակիս մթնոլորտն ամէն տեղ հաւասար բարեխառնութիւն ունեցած է և բնածխական թթուուտով ծանրաբեռնեալ։ Պրոնիար ամբողջ Ածխարեր շրջանին մէջ 500 տեսակ բայց կը համբէ, որոց 250 տեսակը Պտերը են մեծատերև և բարձրացողուն, 85 Հօտիսոյք, 13 Զիազիք, 44 Աստեղատերևք, 60 Կնքաւորք, 16 Կոնարեք։ Ահա այսպիսի մնացորդներէ ձևացած են այն անօպառ հանքածխոյ խաւերն, որոնք շատ տեղ կը գտնուին, և որոց մէջ կը տեսնուին ծառոց ցողուններ, կռնղեր և տերեններ (Ձկ. 104)։ Ձկն 105 կը ներցոյացընէ այս շրջանին մէջ գտնուած կոնածև ծառոց մը հիւ-

սուածքը: Ածխարեր հողոց խաւերուն զօրութիւնն է 400 մէջրէն մինչև 3000 մէջր. սակայն տեղ աեղ խորութիւնն 400էն ալ նուազ է, բայց մեծ ընդարձակութիւն ունին: Այս միջոցիս մէջ ամբարձեր է Անգղիոյ հիւսային դրութիւնն, որ է ութերորդ, և կը տարածուի հիւսային Անգղիայէն մինչև՝ ի սահմանագլուխա Ակովտիոյ, Խոշանտիոյ և նաև մինչև՝ ի Նորուեկիա և 'ի Շուէտ:

155. Ծևակը Հանքածխոյ. — Ինչպէս առևենուն ծանօթ է՝ մարդկութիւնն և մանաւանդ մեր գարս՝ շատ մեծ օգուտ ներ կը քաղէ հանքածխոյ անթիւ խաւերէն, զոր շատ տեսակ պիտոյից կը գործածէ: Զորս տեսակ է հանքածխն: առա-




Ձև 102. Խիտ Հօսիոյ:

Ձև 105. Կոյնն մեծցուցած:

ջինն է հանքածոյիս պարարտ և կարծր, որ շատ կը գործածուի մետաղադրժական աշխատութեանց մէջ. երկրորդն է հանքածոյիս պարարտ և քաջրնետիր, որ ընտրելագոյն է դարբնոցաց համար, վասն զի սաստիկ ջերմութիւնն կու տայ, գոյնն աև է, իսկ փոշին թխագոյն, սովորաբար բեկանուտ է և կրակին մէջ դիւրաւ կը միանայ. Երրորդ տեսակն է հանքածոյիս պարարտ և երկայնարց, որ կը գործածուի լուսաւորութեան կազզ հանելու համար. շորբորդ տեսակն է հանքածոյիս ջր և երկայնարց, որ քան զնախընթացս շատ աւելի թթուածին ունի, և կը գործածուի կաթսաներ տաքցընելու համար:

156. Տեղիք Հանքածխոյ. — Այս շորս տեսակ հանքածխոյ խաւերն, ինչպէս ըսինք յառաջ, շատ տեղ կը գտնուին. բայց գիշաւոր և ընդարձակ ածխարեր երկիրներն են Բրիտանիա, Հիւսիսային Ամերիկա, Գաղղիա, Գերմանիա, Պելիա, Ուստիա, Հարաւային Ամերիկա, մասնաւորապէս Բերու. կան նաև յԱւստրալիա, ևս և յԻտալիա. իսկ ի Հայաստան հանքածխոյ նշաններ տեսնուած են ընդ մէջ լեռանց բարձր Հայոց և Այրարատայ, և յայտնի գտնուած են Տայոց Ուկալիք և Ղարապաղու (<sup>(1)</sup>) գաւառին մէջ, Ս. Ստեփանոսի վանաց և Երասխայ կողմերը:



Ձև 104. Ածխահանք:

Ահա յաջորդ ցուցակէն աւելի որոշ կը տեսնուի թէ որ երկիրներն աւելի ճոխ են ածխահանքով:

Տեղիք	Քառ. հազարամետր	Տակառաշափ.
Մեծն Բրիտանիա	10,000	65,000,000
Հիւս. Գերմանիա	4425	6,900,000
Գաղղիա	2500	6,000,000
Պելիա	1275	8,000,000
Սպանիա	500	500,000
Հիւս. Ամերիկա	500,000	10,000,000

(1) Այս գաւառն վըխարման Ակլուրեան հողոց մէջ յիշուեցաւ, եջ 155.

157. Ծագումն Հանքածիսոյ. — Հանքածիսոյ ծագման վրայ երկրաբանք երկու կարծիք ունին. ոմանք կ'ըսեն թէ ածխաշանք ձևացեր են մեծամեծ գետոց, հեղեղատից և ծովու փոխադրած բուսոց մեռյորդներէ և փայտակցուներէ, որոնք ժողովուելով և հետզհետէ դիղուելով իրարու վրայ՝ վերջապէս ծովափնեայ և գետաբերանաց մօտ հողոց և սըկի մէջթաղուեր և ձևացուցեր են այն ահագին հանքածիսոյ խաւերը, զրա արդ մարդկային ընկերութիւնն կը վայելէ: Այս կարծեացս պաշտամանք և ջատագովք բազմաթիւ էին 'ի սկզբան և գրեթէ առ հասարակ ամենուն ընդունելի կ'երևէր. բայց այսօրուան օրու եթէ ոչ բոլորովին, այլ գէթ 'ի բազմաց կը մերժուի և անբաւական կը համարուի հանքածիսոյ ծագումն բայցարելու համար: Վասն զի նախ եթէ մէկն ուղենայ հաշուել թէ հանքածիսոյ մէկ երկու մէջը թանձրութեամբ խաւ մը ձևացընելու համար որշափ նիւթ պէտք է, անշուշտ պիտի զարմանայ երբ լսելու ըլլայ թէ միլիոնաւոր ծառեր պէտք են զայն ձևացընելու համար. արդ թող մտածէ այնպիսին թէ հազարաւոր մէկը թանձրութեամբ հանքածիսոյ խաւերուն համար որշափ նիւթ և ծառեր պէտք են: Երկրորդ՝ եթէ ջրոց փոխադրութենէն ձևացած ըլլային այն անսպառ հանքածիսոյ խաւերն, ինչպէս կրցեր են այնպէս սիրուն, անարատ, առանց քայքայելու մնալ այնշափ կենդանեաց բրածոյն, այնշափ ծառոց ողջ տերեներ, կոճղեր, ցողուններ, ճիւղեր, կանգուն ծառեր, և փափուկ միջատաց թէեր:

Խակ երլորդ կարծեաց պաշտպանք՝ կ'ըսեն լայելին հետ մէկտեղ թէ ածխահանք ձևացեր են բուսոց բազմաթիւ անտառաց մի և նոյն տեղ թաղուելէն. և յիրաւի քննելով շատ տեղեաց հանքածիսոյ խաւերուն կազմութիւնը, տեսեր են որ խաւերէն ոմանք բոլորովին կնքաւոր ծառերէն ձևացեր են, այլք թէփածաւոց անտառներէն, ուրիշ տեղ մը Պտերներէն, տեղ տեղ խառն և զանազան ծառոց անտառներէ: Ընդլիոյ ածխահանքաց մէջ ծառոց արմատներն աւազի մէջ տնկուած կ'երեւին. յածխահանս Պրէօյիլ Լիոնի մօտ (տես Ձև 9), Պրոնիար երեւելի բուսաբանն դիտեր է հօրիզոնական խաւեր միւկախառն կոպճի մէջ, որոց մէջ մնացեր են գագաթնահայեաց կերպով միաբթակ ծառոց ցողուններ: Ահա այս ամէն ըսած-

ներնէս յայտնի կը տեսնուի թէ ածխահանքի խաւերն ջրոյն փոխադրած բուսական մնացորդներէն չեն ձևացած, այլ այն տեղը թաղուեր են, յորում բոյսերն կ'աճէին. որոց վրայ զանազան յեղափոխութիւններ գալով, ոմանք բարձրացեր և այլք ցածցեր են, և ասոնց վրայ ապա ջրանիստ դիրտեր նըստելով՝ հետզհետէ ընդարձակուեր են այն ածխահանքաց ահագին խաւերն:

158. Փերմեան հողը. — Ածխաբեր հողք՝ ինչպէս կամխաւը սինք՝ շատ փոփոխութիւններ կած են ներքին և արտաքին զօրութիւններէն, և երկիրս ալ հետզհետէ պաղելով՝ զանազան ձեղեր, գալարմունք և պատառուածք կը հանդիպէին մակերևութիւն վրայ, յորոց հրացեալ նիւթեր ժայթքելով ածխաբերը խաւերը գեռ աւելի կը խառնափորէին. ահա այս խառնափորեալ ժայռից կամ խաւերու վրայ նստած նոր խաւերն կ'ըսուին Փերմեան հողը, որոնք Ռուսաստանի Փերմ քաղաքին մէջ առած գտնուելնուն համար՝ տեղոյն անուամբ կոչուեցան:

159. Բաժանումն և բրածոյը Փերմեան հողոց. — Փերմեան հողերն երեք որաշ կարգ ունին. առաջինն՝ որ Փերմեան հողոց յատակը կը կազմէ՝ կ'ըսուի Նոր կարմիր կոպապային խաւ. Երկրորդն՝ Մագնեսարեր խաւ կամ քարամանեք, որոց մէջ բազմաթիւ մետաղաբեր երակը կը գտնուին, ինչպէս նաև կարանաւթայիին թէրթաքարինք և մանաւանդ կրային մագնէսիա. Երրորդ կարգն է վոժի կոպապային խաւ, որ սովորաբար կարմիր է:

Այս երեք տեսակ կարգերն ես Ռուսաստանի մէջ զանազան տեղեր կը գտնուին, զոր օրինակ 'ի Փերմ, յՈրէնպուրկ, 'ի Խազան, 'ի Կովկասու և մինչև 'ի Սպիտակ ծով. կան նաև 'ի Գերմանիա, յԱնդղիս, յԱմերիկա. խակ 'ի Գաղղիա, 'ի Սպանիա և յատակա շատ քիչ են. Փերմեան հողոց զօրութիւնն է 100-200 մէտր:

Այս հողոց մէջ ամենապիշ են կենդանեաց բրածոյք, և ընդհանրապէս ծովային խեցեմորթք են, ինչպէս Սլէձև Քեղիկոն (Ձև 106), կոնս բիտախեցի (Ձև 107). կան նաև քանի մը տեսակ ձկունք, զոր օրինակ վերջաթև ծնոտային, բարձրաթեր Աշճովիքեան, և այլն. խակ ընդհակառակն շատ ա-

ւելի են Մողեսի և Սովորոց տեսակք քամ զնախըմթաց շրջանս,  
և մինչև անդամ թռչնոց հետք ևս գտան վերջերս՝ ի Միա-  
ցեալ Նահանգոս: Փերմեան հողոց բուսաբերութիւնն ըստ բու-  
սականի ճոխ է և մնացորդք են նախըմթաց ածխաբեր հողոց.  
միայն Սաբսոնիոյ Փերմեան հողոց մէջ բուսոց 60 տեսակք  
գտնուեցան, որոց 40 տեսակքն ուրիշ տեղ չէին գտնուած: Այս  
շընափս մէջ կ'ամբառնան իններորդ գրութիւնք լերանց, այս-  
ինքն Ստորին Նահանգաց և հարաւային Կալեսի երկրին, ո-



Զւ. 103.

Կանաբերի մը հիւսուածք:



Զւ. 106.

Ալէձն Քեղեկոն:



Զւ. 107.

Կունստ Բիտախեցի:

որց տարածութիւնն է հարաւային արևելեան Յ աստիճանէն  
մինչև հիւսային արևեմուեան Յ աստիճանն: Այս այս Փեր-  
մեան հողերովին կը վերջանայ Առաջնակ գարն, յորում ծովերն  
կը բարձրանային և կ'իջնէին, հողմք կը շնչէին ոյլ և այլ դօ-  
րութեամբ և ուղղութեամբ, անձրեք կու գային, և միուլ բա-  
նիւ՝ բնութեան ամէն երեսյթներն կը կատարուէին, ինչպէս  
այսօրուան օրս:

## ԳԼՈՒԽ Գ.

ԵՐԿՐՈՐԴԱԿ ԴԱՐ

160. Երկրորդակ Դարուան կարեռուրիւնն: — Երկրորդակ  
Դարուն ուսումն ես շատ կարևոր է, մանաւանդ Եւրոպիոյ հա-  
մար, որոյ մեծագոյն մասն այս միջցիս մէջ ձեւացեր է: Կա-  
րևոր է նաև իր ընդարձակ և երկայն ժամանակի մէջ նստած  
գիրտերովին, որոնք ստոյգ կտրգ մը և զանազան նշաններ  
կ'ընծայեն մեր երկրագնտիս պատմութեան: Այս դարուս  
մէջ գրեթէ կը ջնջուին նախըմթաց բարու բայսերն և կենդա-  
նիք, և նորանոր տեսակք յառաջ կու գան, որոց սկզբնաւո-  
րութիւնն Փերմեան հողոց վերջին կարգին մէջ տեսնուեցաւ:  
Այս դարուս ծովերն շատ փոփօխական են և քիչ խորու-  
թեամբ. բազմաթիւ ծովափնեայ ցամաքներ կ'երկին հան-  
գերձ երկակինցաղ կենդաններ և թռչնօր, որոց ոսնատեղիք  
1839 ին ատենները գտնուեցան կարմին կոպճային խաւերուն  
մէջ: Ասոնց ամենուն ալ ընդհանուր ձևերն իրարու նման են,  
հինգ հինգ մատով բայց զանազան մեծութեամբ. ամենէն մե-  
ծին երկայնքն ութ թթաշափ է և լայնքն հինգ: Ասոնք այնպի-  
սի կերպով շարուած են և այնպիսի զիրքեր ունին, որ յայտնի  
կ'երկի թէ կենդանւոյն քալելու ատեն տպաւորուած են:  
Խորոր ոտնատեղեաց և թաթերու մէջտեղը մանրեր ալ կան  
մի և նոյն ուղղութեամբ և զիրքով, յորմէ Քատափ երևելի գեր-  
մանացին գետեցուց թէ Զեռնագազանի մը հետքերը ըլլան,  
բայց յետոյ Օվն հոշակաւոր անդդիացի բնագէտն ստուգեց թէ  
այն ոտնատեղիք Բաւզատամին տեսակին են: Բայց ՚ի ասկից  
կը գտնուին երեք մատով ոտնատեղիք ալ, որոնք ամէնքն ալ  
մէկմէկու նման են, զիրքերնին մէկ գծի վրայ և իրարմէ հա-  
ւասար գեռաւորութեամբ են. ասոնք թռչնոց ոտնատեղիք են,  
բայց չի գիտցուիր թէ ինչ տեսակ թռչնոց: Այս միջոցս բու-  
սաբերութիւնն ալ շատ կը զարգանայ. և յիրաւի կը տեսնուին

նախ՝ գաղտասեռ խորշաւոր բոյսք, ինչպէս լոռք, երկրորդ՝ գաղտասեռ անօթաւորք՝ Զիւգիք, Հօտիսոյք և Պտերք, ապա մերկասերմն երկարլթակ բոյսք, ինչպէս Արմաւենապտերք և Կոնաբերք. վերջապէս երևցան նաև քանի մը տեսակ միաւ բլթակ բոյսք: Այս ընդարձակ դարուս խաւերն թէպէտ և սովորաբար հօրիզոնական են և չեն հանդիպած մեծամեծ յեղափոխութեանց, սակայն տեղ տեղ պակասաւոր են, և ասոր պատճառն է այլ և այլ ցամաքաց երևումն. այս ժամանակս ամբողջ Եւրոպան կղղեաց խումբ մը կը ձեւացընէր, երարմէ մեծամեծ ծովերով անջատուած: Այս դարս կը բաժնուի յերեք Հոլու, այսինքն են Տրիասեան, Յուրայեան և Կրային:

161. Տրիասեան կամ Երակարդ հողեր. — Տրիասեան շրջանին կոչումն իր հօղոց կազմութենէն առնուած է. վասն զի երեք որոշ կարգեր ունի կազմեալ 'ի կուգէ, 'ի կրէ և 'ի մարգէ, զրու արդ 'ի շրու կարգս կը բաժնեն, այսինքն են խայտաբղիւ կոպային կարգ, Գոյզգոյն մարգային կարգ, Խեցուո կրային կարգ և Աղային կարգ:

Խայտաբղէտ կապճային կարգն կը կազմուի քուարցի բարակ և մանր հատիկներէ, որոնք ընդհանրապէս կարմիր են, բայց կրնան ըլլալ նաև սպիտակ, կապոյտ և կանաչ, ուստի և խայտաբղէտ ըսուեր է առաջին կարգն, որուն հողերն խաւ խաւ նստած են և շունին զրեթէ բրածոյք: Մարգային գոյնզգոյն կարգն՝ կը կազմուի կրային և կաւային խաւերէ, որոնք խառն են գոյնզգոյն մարգի հետ, որով խառնափորեալ է այս երկրորդ կարգն:


Կրային խեցուո կարգն սովորաբար կոպային և մարգային խաւերու մէջ կը գտնուի, և է խիտ, գորշագոյն, կանաչագոյն և կամ դեղնագոյն, ուստի և տեղ տեղ խայտաբղէտ եղած է. շատ անդամ վերին մասին մէջ կան նաև մագնէսիայի և գայլախագի երակներ: Այս կրային խեցուո կարգին խաւերն շատ առատ են վոժի արևմտեան մասին մէջ, կան նաև 'ի Գերմանիա, յԱնդղիա, 'ի Պիրենեան լերին, և այլուր:

Աղաբեր կարգերն շատ փոփոխական են. ընդհանրապէս կը կազմուին դեղին, կարմիր, կանաչագոյն, գորշագոյն և

կապտագոյն մարգի փոքր խաւերէ. կը հանդիպին նաև բարակ կոսկճային խաւեր ծովային խեցեմորթից բրածոյիւք, և այս մասին մէջ միայն բրածոյք կը գտնուին, իսկ ուրիշ զիրտերու մէջ ամենեւին չկան: Այս խաւոց մէջ կը գտնուին Բուռուի և Աղուճակի մեծամեծ դէղեր՝ խառն դոլոմիի հետ և ասոնք միշտ բիւրեղացեալ վիճակի մէջ են: Աղուճակի ծագումն իմանալու համար զանազան կարծիք եղած են. ումանք կ'ըսեն թէ 'ի հրաբղխային ժայթքմանց յաւաջ եկած




Ձև 108. Շուշանաձև խեցի:



Ձև 109. Եղջերախեցի հանդիճաձև.

ըլլան, և այլք թէ ծովային ջրոց գոլորշիանալէն: Ծովային ջուրք՝ ցամաքաց բարձրանալու ժամանակ մեծամեծ ծովերէն բաժնաւելով՝ եղեր են զանազան աւազաններ, որոց մէջ ծովային ջուրն գոլորշիանալով, ինչպէս արդ 'ի ծովեղերեայ աւազանս, աղերն նստեր են և բիւրեղացեր. ահա այսպիսի աւազաններ են արդ կասպից ծովն, Արալ լիճն, Մեռեալ ծովն և մեր Վանայ ծովակն, որոնք թէրեւս դաբեր անցնելով՝ ըլլան մեծամեծ աղահանք, նման այն ա-

դահնաբքաց՝ որք կը գտնուին արդ՝ ՚ի Լեհաստան, ՚ի Սիկիլիա, ՚ի Քալապիիա և ՚ի Կողբ։ Հարկ չկայ ենթագրել թէ ամենամեծ խորութիւն ունեցած ըլլան այն աւազանները որոնք տպա աղահանք եղեր են, այլ բաւական է համարել թէ ժամանակ ժամանակ ժամանակ ծովային ջրերն բարձրանալով, ողողած և լեցուցած ըլլան այն աւազանները, որոց ջուրն գորրջիացած է։ Ինչպէս արդ ևս կը պատահի Սփրիկէի աղային լիներուն։ Այս պարբերական ողողմունքս յացտնի կը տեսնուի տղմային և աւազուտ զանազան խաւերէ, որոնք կը գտնուին խառն՝ տղուճակի խաւոց հետ մէկտեղ. սոյն այս երեսոյթս տեմուռած է վերջին դարուա մէջ նաև Եղիսաբետի




#### Ձև 440. Ամսնեղջիւր հանդրիֆաձեւ :

Ա. Կողմակի տեսք . Բ. տեսք ՚ Հանդիպս . Գ. Խորշերը բաժնող  
Ժաշանթին երիւ :

դառն լճերուն մէջ. և որովհետեւ աղերն մի և նոյն աստիւ-  
ձանով շեն բիւրեղանար, անոր համար կը տեսնենք՝ որ նախ  
կրային աղերն բիւրեղացած են, ապա քլոռուկը նատրնի,  
ծծըմբատք մագնէսիոյի, քլոռուտ կալոյ, և այն. այս շատ  
յաւ կը տեսնուի Եհաստանի և Գերմանիոյ աղահանքաց մէջ:


մը յատուկ տեսակներ, ինչպէս Շուշանաձև (Ձև 108) գեղեցիկ շուշանի ձևով. Խեցեմորթից մէջ Քեղիկոն, Լեզուակալսեցի և Փարափոր. Կակղամորթից մէջ Բազկոտունք, Անդիլից մէջ Բիւրածակ: Շատ զարմանալի են Ստամբուլաներնեացը որոնք քարեր և աւազուտ տեղուանքը կը փորեն. կան ևս ՚ի տոհմէ Գլխոտնեացց Եղիշեախեցի Հանգրիձանձև (Ձև 109), Ամնեղիլիւր հանգրիձանձև (Ձև 110), Թռչնիկ ընդասուն, Կոքի ակիսաւոր, և այլն. այս ժամանակս կ'երեխն առաջին անգամ Եռամսկիւնախեցիք, որոնք հետզհետէ յաջորդ շրջաննե-



ԳԵՂԻՆ. ՎՈՂԴՑԻԱ ԱՅԼԱՄԵՐԵԿ:

բու մէջ կը բազմանան : Ձկանց մէջ կային թէ սահառեայ և թէ ոսկրեայ ձկունք, ինչպէս 6 կամ 8 տեսակ Յաղթաթիւնակ ձկունք և 30 տեսակ յաղդէ Եղջերատաման և Թանձրաթիւնան : Այս հողոյ մէջ ցամաքային կենդանիք աւելի եղած են, ինչպէս կը տեսնուին երկրաբանից բազմաթիւ հետազօտութենէն և գտնուած թռչնոց և այլ կենդանեաց կմախքներէն, և ուրիշ ոտից ու թաթից հետքերէն . և միրտափ յԱնդղիս, 'ի կիւրթէնապէրկ մասնաւորապէս, 'ի Սաքսոնիա և 'ի Գաողվահանապան տեղեր՝ գտած են 30 տեսակ ողորկապատեան Խեցեմորթք, Որդունք և Միջատք, 50 տեսակ Սողունք, Կրիսքը

կամ Գորտը, և 30 տեսակ Թուշունք, որոնք կը կարծուին թէ Ջայլամի տեսակը ըլլան, այլ չատ մեծղի: Բուսոց կողմանէ այնշափ ճռիս չեն այս Տրիասեան հողերն, բայց այսու հանդերձ



Ձկ 112. Սանտրակ լուգդոնեան:



Ձկ 113. Կորախեցի գոգաւոր:

կը գտնուին Վոլգիա այլատերև (Ձկ 111), Եղեգնիկ աւազուտ, Պտերք, Զիադիք, Արմաւենապտերք և Կոնաձեք, ուրոնցմով ըստ բաւականի մեծամեծ ածխահանքի խաւեր ձեւ-



Ձկ 114. Ամնեզիլիոր Պուբլանտի: Ամնեզիլիոր Վալքորի: Կետախեցի.




Ձկ 115.




Ձկ 116:

ւացած են: Այս ժամանակս հանդիպած են տասներորդ և մետասաներորդ դրութիւնք և ամբարձմունքն, այսինքն Հունոսին՝ որ կը տարածուի հիւսիսային արևելեան 21 աստիճա-

նէն մինչև հարաւային արևելեան 21 աստիճանն, և Դիւրին կէրվալտի և Մորվանի՛ որ կը տարածուի արևելեան հիւսի-




Ձկ 117. Հնդավար:



Ձկ 118. Կաղամար:

սային 40 աստիճանէն, մինչև արևելեան հարաւային 40 աստիճանն: Ամբողջ Տրիասեան հողոց զօրութիւնն է 2500-3000:



Ձկ 119. Փաղեանելլա և ծովային Արմաւ:



Ձկ 120. Անուախեցի:

163. Յուրայեան հողը. — Յուրայեան կ'ըսուին այն հողերն, որոց կազմութիւնն և բրածոյց Յուրայ լերանց կադմութեան և բրածոյց նման են, և մի և նոյն շրջանի մէջ ձեւ-

ցերեն: Այսակիսի հողերն կը գտնուին 'ի Գաղղիա, 'ի Զուիշերի, յԱնդղիա, 'ի Գերմանիա, 'ի Սպանիա, 'ի Բորգուգալ, յԻտալիա, 'ի Կեղրոնական Ռուսիա և յԱմերիկա: Յուրայեան հողոց նշաններ տեսնուեր են նուև Հայաստանի Պարագաղ գտաւախն մէջ, Մեղրի, Որտուալատու և Երասիայ ձուրոյն կողմերը, յորս գտեր են ճանապարհորդք Աշտարակաքար, Ծակափոր, Հազարածակ, Զիածետ և այլն. ամէն տեղ քիչ շատ այս հողերն երկու որոշ բաժանմունք ունին, որք կ'ըստին վիատ և ջուրաքար:

(Հայու)



Ձև 421. Բրածոյ կորախեցի:

164. Վիատ.— Լիսափ խաւերն կը կազմուին երբեմն պարզ կրէ, երբեմն կոպճային կրէ և երբեմն խառն են մարգով և կոսկով, ուստի և երեք կարգ ունի, ստովին որուն յայտանիշ են ճովլ, ուստի և կրեք կարգ ունին, որոց իւրաքանչիւրն տարբեր բրածոյք կը բովանդակէ, և են ստորին ձուրաքար, որուն յայտանիշ են փոքր կաթնատու կենդանիք 'ի տոհմէ պարկաւորաց, և բուսոց մէջ՝ Շուշանաձև տոհմի բայսք: Միջին ձուրաքար, որուն բնադրուշմք են բազմաթիւ Միջատու և Մարգարտամարց ձևացնմն և մասնաւորապէս ճաճանչաւոր բուսոց: Բարձրագոյն ձուրաքար, որուն յաստոկ են թուշունք, որոնք առաջին անգամ կը տեսնուին: Ջուաքարի խաւերուն զօրոթիւնն այլ և այլ է, տեղ մը 50 մէգր, ուրիշ տեղ մը 100 մէգր, կայ նաև այնպիսի խաւերն, որոց թանձրութիւնն 200 մէգր է:


Վալքողի (Ձև 115), Նետախեցի (Ձև 116) և բաղմաթիւ Եռանկիւնախեցիք:

Լիսափ խաւերու մէջ կը տեսնուին Արմաւենեաց պտուղներ, բայց մասնաւորապէս աւելի Պտերը և Արմաւենապլատերը կը տիրեն գեռ, և ասոնցմով ածխահանքի մեծամեծ գէղեր ձևացներ են. հոս կ'երկեն նաև անսովոր Զիներ և Մողմաներ, զորս վերջը կը յիշենք: Լիսափ խաւոց զօրութիւնն 100-150 մէգր է:

165. Ջուրաքար. — Ջուաքարի ընդարձակ և թանձր խաւերն կը կազմուին կրային գիրտերէ, որոնք սովորաբար հատաւոր և ծուածե են, ուստի և կոչուեր են ջուրաքար: Ասոնք ևս երեք որոշ կարգ ունին, որոց իւրաքանչիւրն տարբեր բրածոյք կը բովանդակէ, և են ստորին ձուրաքար, որուն յայտանիշ են փոքր կաթնատու կենդանիք 'ի տոհմէ պարկաւորաց, և բուսոց մէջ՝ Շուշանաձև տոհմի բայսք: Միջին ձուրաքար, որուն բնադրուշմք են բազմաթիւ Միջատու և Մարգարտամարց ձևացնմն և մասնաւորապէս ճաճանչաւոր բուսոցոց: Բարձրագոյն ձուրաքար, որուն յաստոկ են թուշունք, որոնք առաջին անգամ անգամ կը տեսնուին: Ջուաքարի խաւերուն զօրոթիւնն այլ և այլ է, տեղ մը 50 մէգր, ուրիշ տեղ մը 100 մէգր, կայ նաև այնպիսի խաւերն, որոց թանձրութիւնն 200 մէգր է:

166. Բնելնաեւոր նկարագրութիւն ջուրայեան հողոց. — Այս հողոց խաւերն զուգընթաց են. այս միջոցս շատ բազմաթիւ են կրային սպանդք, նմանապէս բուսորք շատ մեծ ընդարձակութիւն ունին. ծովաց յատուկը լի են Հնագավարս (Ձև 115) կենդաննեաց անտառներով, որոնք բարակ ցողունի մը վրայ բարձրացած են օ կամ աւելի բազուկներով, և ասոնց մէջ են իրենց բերաններն: Կակլամորթից մէջ քիչ են համեմատութեամբ բազկոտունք. կան գեռ նաև Փշամորթք, Որովայնոտունք և Անգլուկիք. խորչաւոր Գլխոտնեայք բազմաթիւ են. հոս առաջին անգամ նոր տոհմ մը կ'երկեսի Նետախեցոյ՝ որ արդ չի գտնուիր, և քիչ մը արդի Սիաէի նմանութիւն ունին, որոց ետևեկ կողմը դուրս ցըցուած՝ կարծր կրային կոնածե զէնք մ'ունին մէջը փորուած խորշ խորշ, Նաւախեցիի նման, և ասով իրենց ընթացից ժամանակ ժայռափուլը կ'արգելուն: Այս այլանդակ կենդանիք՝ որոց նմանութիւն աւ-

նին նաև արդի մեր կաղամարք (Ձև 116) և Պոլիպոդք, ուստի քերնին գլուխներնուն վրայ կը կրեն, և կղկղանաց ծակն՝ բերաննուն մօտ է։ Բաց ՚ի ասոնցմէ կան նաև Փաղիանելլա




Ձև 122.

Ջկնամողէս. Ա. Ոչնայար : Մողեսակերպ . Ա. Ոչնայար ուղեղային :

(Ձև 119), Անուախեցի (Ձև 120), Բրածոյ կորախեցի (Ձև 121), որ ուրիշ ժժմակներով ծածկուած է։

Խեցիներու մէջ Յուրայեան հողոց յատուկ են Եռախորշաւորք, որոնք մեր Բաղաձին Խեցեմորթից կը նմանին . ասոնք շատ գոնակներ և շատ ձև ունին : Կան նաև Միջատք և Թիթեռնիկք, որոնք նշան են՝ թէ մերձաւոր ցամաք տեղուանք կային : Բազմաթիւ են ձկունք, բայց ոչ եթէ մեր դարու մէջ եղածներուն նման . նոյնպէս շատ բազմաթիւ են և մեծդի այս շրջանին Սոզունք, զոր օրինակ Ջկնամողէս (Ձև 122), որ երկաւ կենցաղ է, կիսույին թաթերով, ձկան մարմնով, իսկ գլխավ և պոչով մողեսի նման, 3-7 մէդր երկայնութեամբ, 180 ատամոմբք, և քիչ անգամ կը թողու զդովլ՝ ցամաք ենելու համար : Մողեսակերպ (Ձև 123), որ ծովու մողիսաց մէջ երևելագոյնն է,



Ձև 124. Թևամասն թանձրակտուց :

և նախընթացէն ձեռովը միայն կը տարբերի, այսինքն վիզով շատ երկայն է և օձի կը նմանի և մարմնով մողեսի, Ջկնամողէսէն ակար է, բայց քան զինքն աւելի արագաշարժ . ասոնցմէ զատ կան նաև կիսումողէս, Մեծամողէս, որ կոկորդիլոսի և Ազդարաբին նմանութիւն ունի, 15-20 մէդր երկայնութեամբ, և թևամասն (Ձև 124), որ թաշով վիշափ կը նմանի . ասոր ատամունքն կոկորդիլոսի ատամունք կը նմանի, թևերը Զդնկան,

մարմնով և պոշով՝ կաթնտու կենդանեաց . թէերէն գուրս կը ցըցուին մատունքն բաւական երկայն ճիրաններով , և ասոնցմով ժայռից վրայ կը կախուի : Բաց ՚ի ասոնցմէ Զուաքարի խաւերուն մէջ կը գտնուի Ազելազը (Ձև 125) , յազդէ Պարկաւրաց : Այս միջնոցիս բուսաբերութիւնն թէպէտ և տարբեր է



Ձև 125. Ազելազ.


նախընթաց դարու բուսաբերութենէն , սակայն ունի ինչ ինչ բոյսք՝ որոց տեսակին շատ բազմաթիւ են , ինչպէս Արմաւենապտերք , Ծամիաս , Թեւատերև , Նիլասնիա և այլն . Կոնաբերք ևս շատ առատութեամբ էին , որոց գրեթէ 20 տեսակք ՚ի

մեծն թրիտանիա գտնուեցան . կան նաև Զիազիք , Պտերք , թէփածառք , և առաջին անգամ կ'երևին Շուշանաղզիք : — Այս այսպիսի բուսոց անտառ մը ըկ գտնուի Անգղիոյ ծովեցերքը Բորդլանտ կղզւոյն մէջ (Ձև 126) : Այս անտառին ծառերն ամբողջ են , և իրենց արմատովը մինչև հիմայ կանգուն



Ձև 126. Աջիահանքի խաւք Բորդլանտ կղզւոյն :


են այն հողերու մէջ ուր որ ատենօք տնկուած էին , և իրենց իւրագանցիւր կտորներն այն աստիճան կատարելութեան մէջ պահուած մնացած են՝ որ կրնայ որ և իցէ բուսաբան մը իր քննութիւներ ընել , իրրե թէ արդի ծառերն ըլլային : Բուսա-




Ձև 127. Աջիահանքի հակեալ խաւք Բորդլանտ կղզւոյն :

կան հողն՝ յորում տնկուած է այս անտառն , տասուերկուսնաշագին մինչև տասնեռութ ոտնաշափ բարձրութիւն ունի , գոյնն սկզբակ է , և մէջը կը գտնուին ընդհանրապէս Արսւկարիկի ծառեր և ասոնց քով բուսած են նաև Ծամիաս և Վիկաս : Այս անտառին ծառերն ամբողջ քար դարձած են . քարին

գոյնն ընդհանրապէս միջնագոյն է, բայց իւրաքանչիւր ծառին նեարդներու անօթներն՝ միայն քիչ մը գունոյ տարրերութեամբ՝ լաւ կ'որոշուին. խոկ վայտին ներքին ու արտաքին կազմուածքը և ձեւ ամենաեն փոխուած կամ աւրուած չէ: Տեղ տեղ այս անտառին խաւերն զանազան երկրիս ամբարձմանց և շարժմանց պատճառաւ ծառծ և խառնափնդորուած են, ինչպէս առաջիկայ պատկերս (Ձև 127) կը ցուցընէ: Այս շրջանին մէջ կային նաև ցամաք երկրներ, յորում կ'երեւին կաթնաբեր կենդանիք, այսինքն Պարկաւորք: Այս միջոցս գրեթէ բոլոր Եւրոպա ծովով ծածկուած էր, իտալիա քանի մը փոքր կռանիտային կղզիներէ կը ձեւանար՝ Պալասպիոյ և Ար-



Ձև 128. Կառաբոյք:



Ձև 129. Աստղակառաբոյք:


կիլոյ մօտ. Գերմանիա ամբողջ խորին ծով մ'էր շրջապատեալ քանի մը մանր ծովեղերեայ յափանց Ռուսիոյ և Բրիտանիոյ: Կիման միակերպ էր, այլու եթէ հասարակածային: Այս շրջանիա մէջ ամբարձեր է Պիլա լերան, Գոդ որի և իրձէպիրիկ գրութիւնն, որ կը տարածուի հիւսային արևելեան 49 աստիճանէն մինչև հարաւային արևմտեան 40 աստիճանն:

167. Կրային հողք. — Այն հողերն՝ որոնք ձեւացեր են անմիջապէս Յուրայեան հողոց վրայ՝ կը կոչուին Կրային հողք. ասոնց կազմութիւնն գրեթէ ամբողջ կիր է. սակայն կիրն ամէն խաւերու մէջ կը գտնուի: Գամալեան հողերէն սկսեալ. բայց այս շրջանիս մէջ ամենատատ գտնուելուն համար, կրային ըսուեր է: Այս կրային ժայռերը եթէ մանրացոյց դիտակով դիւ-

տելու ըլլանք, կը տեսնենք որ կազմուած են կառաբուսոց (Ձև 128, 129), փոքրիկ Ամոնեղներաց, զանազան ձաժմակաց, կաղամորթից և մանաւանդ մանր հնեաց անհուն մնացորդներէ և կմախցներէ, որոնք հետ դէտէ մեռնելով և քայքայուելով յրոց մէջ՝ կը նստէին 'ի յատակս, ձևացընելով այն ընդար-




Ձև 150. Գաղտակրուկն



Ձև 151. Ոսորէ շրջանաւոր:

ձակ կաւահողերն, որոց զօրութիւնն տեղ տեղ մինչև 4000 մէջք է, ընդհանրապէս զուգընթաց դիրքով:

168. Բրածոյք կրանոնց. — Կրային հողոց բուսաբերութիւնն նախընթաց գարուց բուսաբերութենէն շատ վեր է. և




Ձև 152. Անտրակ:



Ձև 153. Ամնեղներ պտկաձեւ:

յիրակի կը տեսնուին խորշաւոր գաղտասեռք, քիչ են մերկասերմն երկարթակ բյուք, իսկ պատճասերմն երկարթակը հետ պէտէ կը բազմանան. և ահա կան շատ տեսակ Արմաւենիք, զհետէ կը բազմանան. և աստենիք, Տղկիք, Ընկուզենիք, և այլն: Իսկ կեն Նշտարիք, Լաստենիք, Տղկիք, Ընկուզենիք, և այլն: Իսկ գանեաց կողմանէ թէպէտև շատ ճոխ է և կը բավանդակէ 268

Նոր տեսակ կենդանիք, և 5000էն աւելի զանազան ժամակք,  
հանդերձ այսու մեծյառաջադիմութիւն մը չերեկիր եթէ բաղ-  
դատելու ըլլանք նախընթաց հողոց մէջ եղած կենդանեաց  
բրածոյից հետ:



Զւտարակաքար:



Զւտարակաքար շղթայաձև:

169. Ստորարաժանումն կրանոդ. — Կրահողք կրնան  
բաժնուիլ 'ի Ստորին և 'ի վերին կրային հողս, որոնք կը գըտ-  
նուին յԱնդղիա, 'ի Գաղղիա, 'ի Սպանիա, 'ի Գերմանիա, 'ի



Քարափոր:



Քողաւոր Ոստրէ:




Ոռւսաստան, 'ի Խրիմ, յԱսիա, յԱմերիկա և 'ի Հայաստան,  
որուն կրահողքն և կրալերինք, մանաւանդ. Պայէզիսի կողմե-  
րը, քննութեան արժանաւորք են: Ստորին կրահողք կը բաժ-  
նուին 'ի Վաշտեան կարգ, 'ի Ներքումեան և 'ի Կողտեան կարգ:

Վալտեան կարգն՝ որ յԱնդղիա կը գտնուի գլխաւորա-  
պէս, կը կազմուի փոփոխակի կրէ, կաւէ, փայտաքարէ և ա-  
ւազէ, և որուն զօրութիւնն է 190 մէդր. մէջի բրածոյքն անոյշ  
ջրոյ են, ինչպէս Սևադէմ, Մելանիա, Ճախճախեցի, Սիրէնա,  
յորոց ոմանք արդ ևս հասարակածային ջրոց մէջ կ'ապրին. կան  
նաև հոս ծովային մեծամեծ Մոլէսք, ինչպէս Խգուանատամի,  
որուն մեծութիւնն է 20 մէդր., և մարմարն կազմութեամբն  
իգուան Պրազիլի մեծ մողեսին կը նմանի. այս անհեթեթ մո-  
ղեսին հետ կը գտնուին նաև շատ տեսակ Ջկունք, Կրիայք և  
Թուշունք:




Պարկաձև Ոստրէ:



Քարափոր:

Իսկ 'ի Նէռքումեան կարգն՝ որ առաջին անդամ՝ Նէօշաթէլ  
գտնուեր է, կը կազմուի կապոյտ և ղեղին կաւային կրէ և  
երկաթախառն ձուաքարային կրէ և մարգէ, որոց խաւերուն  
մէջ անթիւ են Պոլիպորք, Քարափորք, Յմննեղիւրք, Գաղ-  
տակրուկքն (Զւ130), Կրկնապատեան Ոստրէք՝ նման արդէ  
Ոստրէից (Զւ131), և այլն: Իսկ կողտեան կարգն՝ որուն կազ-  
մութիւնն է քուարցախառն աւազ, երկաթոյ գալախազատի  
հետ մէկտեղ, կը գտնուի մասնաւորապէս յԱնդղիա, 'ի Գեր-  
մանիա և 'ի Գաղղիա. ասոր բրածոյքն են Սանտրակք (Զւ132),  
Քարափորք, Սրտաձեք, Որովայնոտունք, Հնգավարս կրահո-  
ղային, Յմննեղիւր պտկաձև (Զւ133), և այլն:

Վերին կրահողք ևս ունին ստորաբաժանմունք, այսինքն  
են կրաշնեան կիր, Սպիտակ և Բարձրագոյն կիր, որոց խաւե-  
րուն մէջ բաց 'ի վերոյիշեալ Ժմակներէն' կը գտնուին նաև  
Աշտարակաքար (Ձև 134), Աշտարակաքար շղթայաձև (Ձև  
135), Փարափոր (Ձև 136), Գոգաւոր Ոստրէք (Ձև 137, 138),



Ձև 141. Կրիայք:


Պարկաձև Ոստրէ (Ձև 139), Փարափոր (Ձև 140), և այլն: Այս  
վերին կրահողոց մէջ կային նաև Թռչունք, բազմաթիւ կրի-  
այք (Ձև 141), և ձկանց մէջ Պալենայք. հոս առաջին ան-  
գամ կ'երևին զանազան Դեգաղ ձկունք (Ձև 142): Այս խա-  
ւերուն մէջ կը գտնուին մեծամեծ ծառեր՝ ինչպէս Կաղզիք,  
Ընկուղենիք, Լաստենիք, և այլն, որոց անթիւ փայտաքարերն  
կը տարածուին մինչև բևեռային 71° տակ 'ի Կրէօլանտիա:  
Այս միջոցիս ջերմութիւնն մեղմ եղած է քան դհասարակա-  
ծին: Կրահողոց շրջանին մէջ Վիզոյ Երան ամբարձմունք




Ձև 142. Դեգաղ:

եղած են, որոնք կը տարածուին Վանտէի մէջ՝ Նուարմուղիէ  
կղզիէն մինչև Սպանիո Վալանսի թագաւորութիւնը, Պի-  
րենեանց մէջէն անցնելով, կը տարածուի նաև 'ի Յունաստան  
Պինտէի լերանց մէջ, որուն մէկ մասն Ստորին Ալպանիոյ  
Եանեա քաղաքն և ինչն կը շրջապատէ զբեթէ 1000 մէտր բար-  
ձրութեամբ, և նոյն խոկ ճին յատակն ամբողջ կրահողէ կազ-  
մուած է (Ձև 143):


Ձև 143. Եւրոպական պատմութեամբ:



170. Կարևորութիւն Երրորդակ Դարու. — Այս գարուս  
մէջ բոլորովին կերպարանափոխ կ'ըլլայ մեր երկիրս. Յու-  
րայեան, Տրիասեան և Կրային հողոց մեծամեծ Սողնոց՝ կը յա-  
ջորդեն Կաթնաբեր կենդանիք թէ ծովուց մէջ և թէ՝ ի շամա-  
քի. թուշունք հետզհետէ կը բաղմանան և նորանոր տեսակք  
կ'երևին, որոնք քիչ տարբերութիւն ունին արդի թուշուննե-  
րէն: Սողունք մեր սողնոց աւելի կը նմանին՝ քան թէ նախըն-  
թաց գարուց. ձկանց մէջ Դեգաղք, կատուաձկոնք, թեփա-




## ԶԼ 144. Կաւախեցի:



## Հե 145. Մօրախեցի:

մորթք, և այլն, կը փոխուին և կը կատարելադրծուին, նմանապէս կակլամորթք, Խեցեմորթք, Միջատք, Փշամորթք և Պղկիպատք նորանոր ձեռք կ'առնուն, և մեր ծովերուն մէջ գըտնուածներուն կը նմանին: Բյոյք ևս շատ փոխուեցան և գրեթէ նման են արդի տաք երկրի բուսոց, որով կը տեսնուի թէ այս դարուս մէջ քիչ շատ աւելի տաք եղած է քան թէ հիմայ. կային Արմաւենիք և ծառայեալ միաբլթակ բյոյք: Մինչեռհանգարտ կերպով կինդանեաց և բուսոց մնացորդք կը նըստէին ծովուց յատակը, երկրիս ներքին զօրութիւնքն անդործէին մնար, գետերն 'ի ծովս կը տանէին ընդարձակօրէն մէջին մնար.

գէրարական ազգեցութենէն քանդուած ցամաքաց և լերանց աւերածք և աւերակք . և սոյն այս երկրիս ներքին զօրութիւնքն կը բարձրացընէին զցամաքս և կը հոսէին 'ի ծովս այն հեղուկ նիւթերը զորս ալ չէին կրնար լրենց ներսը պահէլ: Այնամեծ ձեղքեր և պատառուածք կը բացուէին դուրս ելած ցամաքաց վրայ, որոնք կը լեցուէին վարէն դէպ 'ի վեր հալած նիւթոց ժայթքմամբք և կամ վերէն դէպ 'ի վար հեղուկ նիւթեր լեցընելով, յայլակերպ ժայռս փոխելով և կամ հանքեր և երակներ ձևացընելով: Այս ժայթքմունքն նման են մեր արդի հրաբուխաց հրաշնչութեան, և կը հոսէին կռանիտք, լաւայք, պորփիրք, կնայօք, որոնք շատ լաւ կը տեսնուին մեր Հայաստանի մեծագոյն լերանց վրայ, որոնք այս դարուու մէջ ձևացած են. ինչպէս նաև Ալպեանց և Ապենինեան լերանց վրայ:



**ԶԵ 146. Տավածիր:** ԶԵ 147. Արտախեցի: ԶԵ 148. Ճախճախեցի:

Երրորդակ գարն՝ ինչպէս յառաջ ըստինք, կը բաժնուի 'ի նախահնակ, 'ի Միջահնակ և 'ի Նորահնակ հողս, զորս կարգաւ քննենք:

171. Նախահնակ հողոց ընդհանուր նկարագրութիւն. — Այս ժամանակի ցամաք երկիրներն որոնք բազմութեամբ կային, թէ նախընթաց և թէ արդի երկիրներու կազմութենէն շատ տարբեր կը ներկայանան: Այս հողոց գիրտերէն ումանք կը բաղկանան աւազէ, հասարակ կրէ և կոպճէ, և ումանք ալ 'ի մարդէ, կաւէ և շեղջազօդէ. որոնք ին բրածոյիք: Մինչդեռ Խոտայիշ մէջ Մարիսու լեռն ծովու յատակ էր, 'ի Գաղղիա, յԱնգղիա և 'ի Հայաստան կային երկիրներ՝ յորս ոչ միայն Սողոնք և Պարկաւոր կենդանիք կը բնա-

կեխն, այլ և ողնաւոր կենդանիք, մագլցող և գիշատիչ թըռաշունք: Այս ժամանակիս ծովերու մէջ կային Դրինք, Պաւենայք և Կիտաղիք, և ուրիշ անթիւ տեսակ Խեցեմորթք և Ջրաճճիք, որոնցմով ահազին երկիրներ ձևացած են և քարացած, որ կ'ըսուի դրանախացական: այս հողէս կը կազմուի ամբողջ Բարիդ և իր շրջակայքը, զորս հետազօտելով երևելի և հանճարեղն Քիւփիէ, դատա Հնագաղան և Խառնագաղան, մէկն Թափիրի նման և միւսն Վիթի: ասոնք խոտակեր կաթնտու անասունք էին, որոց հասակն միջակ էր, այսինքն ընդ մէջ Ոնդեղջեր, Զիու և Թափիրի: Մոնմարդիր գաճերն ընդարձակ գերեզման կրնան համարուիլ այս և ասոնց նման անհեթեթ կենդանեաց, յորում առանց այլայլութեան և փոփոխութեան կը գտնուին, մինչդեռ Լոնտրացի գաճերուն մէջ այլափոխուած են: Կախահնակ երկիրներու բուսաբերդիւնն բոլորովին տարբեր երեսոյթ մը կ'ընծայէ: Պտերը և ուրիշ անբլթակ բոյսք՝ այժմեան դարու անբլթակ բուսոց կը նմանին: Կոնաբերք՝ որ շատ առատ էին, այս միջոցիս մէջ ամենեին չեն գտնուիր բարձր տեղուանք. ընդ հակառակն խոտի տեսակ և երկարթակ բոյսք, որ շատ քիչ էին նախընթաց դարուց մէջ, արդ շատ զարգացած են և առատ կը գտնուին, ինչպէս գեղեցիկ Արմաւենիք, Կայծփշայինք, Կաղնիք, Արբակաղնիք, Ընդարերք, Արդենիք, Դդմատեսակք, Հայկիք, Թախտենիք, և այլն: Այս ժամանակս է ճիշդ Արմեանց երեւումն, Արկլիոյ գանագան կէտերն և Ապենինեան լերինք՝ ծովոց մէջն իրրև այլ և այլ կղզիք դուրս կը ցըցուէին:

172. Կախահնակ հողոց բաժանումն և բրամոյք. — Կախահնակ հողերն ևս կրնանք բաժնել յերեք կարգս, այսինքն են Վերին, Միջին և Ստորին կարգ: Ստորին կարգին խաւերն անմիջապէս կրահողոց բարձրացոյն խաւերուն վրայ նստած են, բայց շատ տեղ կրային շենջազօտով կը բաժնուին, որ անշուշտ երրորդակ դարու ծովերու ողողմանէ և իրենց բերած մնացորդներէ ու աւերածներէ ձևացած է: Այս կարգն կազմուած է տեղ մը քուարցի ամենամաքուր ու սպիտակ աւազներէ, որուն զօրութիւնն կրնայ ըլլալ Յ մէդրէն մինչև 15 մէդր. տեղ մը ծովային աւազէ՝ խառն կաւի ու փայտաքարի

կետ, 30-35 մէդր թանձրութեամբ. և որիշ տեղ մ'ալ կը կազմուի կաւէ և երկաթային աւազէ, որուն զօրութիւնն ալ փոփոխական է: Այս խաւերուն բրածոյքն են Ճախճախեցիք, Փեղիկն կիսաբոլորակ, Բարրաբերան խեցի, Կաւախեցի կեղրոնական (Ձև 144), Կիւրենախեցի ձագարածե, Տափածիրոկ, Մոմաքար փոփոխական, Մելանիա Քիւփէի, Չուրիկ ելունգաւոր, Անատամն խեցի, և գես ուրիշ անթիւ կակլամորթք և խեցեմորթք, թէ անոյշ ջրոյ և թէ ցամաքային: կան նաև Կրիպք, Զկունք. և ուրիշ ցամաքային կենդանիք այս սոռըին կարգին մէջ գտնուեցան Հնագաղան, Խառնագաղան, և այլ բրածոյք:



Ձև 149.  
Մոմաքար գեղեցիք:



Ձև 150.  
Կայախեցի:




Ձև 151.  
Շանաձկան ակռայ:


Միջին նախահնակ կարգն կը կազմուի 'ի հասարակ կրէ, 'ի մարգէ և 'ի գրամախեցական կրէ, յորս խառն է նաև աւազ և կաւ: Այս կարգին խաւոց զօրութիւնն շատ փոփոխական է և կրնայ ըլլալ Յ մէդրէն սկսեալ մինչև 45 մէդր. որոց բրածոյքն են Գրամախեցիք, Մուախեցիք (Ձև 145), Տափածիրոկ, Մոմաքար (Ձև 146), Արտախեցի (Ձև 147), Ճախճախեցի (Ձև 148), Աշտարակիք, Մոմաքար գեղեցիք (Ձև 149), Կայախեցիք (Ձև 150). ասոնցմէ զատ գեր անթիւ Ժմակք, Խեցեմորթք և կակլամորթք կը գտնուին, և շատ ուրուն կերպով մնացած:

են, ինչպէս Կրինիոնի խաւերուն մէջ, յորոց 400 տեսակք հանուած են: Այս կարգին մէջ կան մեծամեծ Սողոնք, ինչպէս Կրիսկը՝ Զկանց մէջ Շանաձուկն որուն ակուայ մը կը տեսնուի 151 Ձևոյն մէջ. կան նաև թռչունք և մօակեր ու կրծող կենդանիք:

Բարձրագոյն նախահնակ կարգն կը կազմուի 'ի ծովային և աւազուտ մարգէ, 'ի գաճէ, 'ի կրէ և 'ի տրավերգինէ, որոց թանձրութիւնն է 45 մէրգին մինչև 95 մէրգ: Այս կարգին մէջ ալ բայ ՚ի վերոյիշեալ ծովային ժամակաց և Խեցեմորթից,



ԶԼ 152. Խլախցի հակադարձ:




ԶԼ 155. Ողնեքար:

Կերեկին բազմաթիւ Հնագագան, Խառնագագան, Առամնասուր, Կրիսկը, Զկանց տեսակներ և թռչունք: Այս նախահնակ լընանին մէջ բարձրացած են չորեքտասասներորդ և հինգետասաններորդ դրութիւնք, այսինքն Պիկենեանց դրութիւնն և Սարտենիա ու Գորսիդա կղզեաց ամբարձմունքն, որոց առաջինն կը տարածուի 'ի Կարպագեան լերինս, 'ի Յունաստան, 'ի Գերմանիա, 'ի Գալլիա և յԱնդղիա. իսկ երկրորդն կ'ընդգրկէ Դոգբանայի քանի մը լեռներ, Հռովմայի վիճակը, ՊԱլանիա, գՅունաստան և Գիտորիա:

173. Միջահնակ հողեր. — Մինչև այս ժամանակս մեր կիսագունդն Հնդկային ովկիանոսի կը նմանէր, յորում այսր անդր ցանուցիր էին կղզիք դէպ 'ի բեկոս: Այս Մընանին մէջ Եւրոպա բոլորովին կերպարանափոխ կ'ըլլայ. աստիճանա-

բար ջրերէն դուրս կ'ենեն և կը բարձրանան ծովու յատակներ, որով կը ձեւանան բազմաթիւ լիճեր, ծոցեր, նեղուցք. ուստի և կերպարանափոխ կ'ըլլան բոյսք և կենդանիք: Այս ժամանակս նաև բազմաթիւ ծովային հրաբուղիք կային, որոց շարունակ ժայթքմանց պատճառու ձեւացած են զանազան ցամաքներ և լեռներ թէ յԵւրոպա և թէ յԱսիա. անշուշտ մեր Հայաստանի հին հրաբրդիաց սկզբնաւորութիւնն այս միջոցիս պիտի եղած ըլլայ: Միջահնակ հողերն ևս երեք




ԶԼ 154. Սամուակենդան բուսաթին արտաքին տեսքն: Նոյն բուսաթին ներքին տեսքն:



ԶԼ 155.



ԶԼ 156. Նոյն բուսաթին արտաքին տեսքն մեցուցած:



ԶԼ 157. Նոյն բուսաթին ներքին տեսքն մեցուցած:

կարգ ունին Ստորին, Միջին և Բարձրագոյն, որոց թանձրութիւնն այլ և այլ է: Այս կարգերն կազմուած են ծովային աւազէ, մարգէ, կրէ և կաւէ, որոց մէջ կան իլախեցի հակադարձ (ԶԼ 152), կոնքեղ, Ողնեքար (ԶԼ 153) և բազմաթիւ Բուստք յազդէ Սամուակենդանեաց (ԶԼ 154, 155, 156, 157): Միջահնակ լընանին մէջ հանդիպած են երկու դրութիւնք, այսիննք նախ վկիթ կղզւցին, Դատրայի, Ուկր-Տաղի ու Հեմոսի, և ապա դրութիւնն Եւրիմանտեայ և Սանսերուայի:

174. Բրածոյքը Միջահնակ հողոց. — Սիչահնակ հողոց  
բրածոյքն աւելի ցամաքային են քան թէ ծովային. և յիրաւի

Զ. 138. Ճահանկի:



կը տեսնենք 'ի կենդանիս այլ և այլ կապիկք, ջղիկք, Յու-  
վազք, Ջի, Կոլ, Փիշ, Կրիայք, և ուրիշ Սողունք, որոց տե-

սակք արգ 'ի հաստրակածային կողմանս կ'ապրին: Բաց 'ի  
ասոնցմէ՛ այս միջահնակ հողոց յատուկ տեսակք են Հոյա-  
գաղան, Ծծատամն և Ոնգեղիսրք: Հոյագաղանն կաթնտու  
կենդանեաց մէջ ամենէն մեծն է, և Փղի կը նմանի. ըստ  
կարծեաց ոմանց՝ այս կենդանւոյն երկայնութիւնն է 6 մէտր,

Զ. 139. Փող:



կիմոյն մեծութիւնն զրեթէ 1 մէտր և 30 հարիւրորդամէդր  
երկայն և 1 մէտր լայն. սոտրին ծնօտին վրայ երկու ժանիք  
անի դէպ 'ի վար ծռած, որով կը տեսնուի թէ արմատակեր  
է, և զնոյն կը հաւաստեն նաև ատամանց կազմութիւնն:  
իսկ Ծծատամն կենդանին շատ աւելի նմանութիւն ունի

Փղին քամ զնախընթացն . այս կենդանին չորս ժամիք ունի , երկուքն աւելի երկայն՝ վերին ծնօտին վրայ , և երկուքն աւելի կարծ՝ ստորին ծնօտին վրայ : Այս կենդանիք առաջն անգամ յԱմերիկա գտնուեցան , բայց վերջերս պատճիմ կենդանեաց բրածոյից համար շատ հոչակուեցաւ . Փիքերմի երկիրներն ՚ի Յունաստան : Ծովային կենդանեաց մէջ կային




Ձկ 160 . Զայլան :

Համբարուք , Կէտք , Պալենայք , անթիւ տեսակ Ճամակք , ինչպէս նաև Ջկունք ալ , միայն Շանաձուկն մեր արդի Շանաձկան (Ձկ 158) երկուքը կար . հոս կ'երկին նաև Փոկք (Ձկ 159) . այս ծովային կենդանիք ինչպէս նաև Թռչունք մեր հիմակուան թունոց (Ձկ 160) , Զկանց ու Ճամակաց մեծ նմա-

նութիւն ունին , որոց 20 առ 0/0 արդի ծովու մէջ կ'ապրին , մինչդեռ նախահնակ ծովուց կենդաննիերէն հազիւ 3 1/2 առ 0/0 կան հիմայ :

Բուսաբերութիւնն ևս շատ ճոխ է , որով մեծամեծ դիրտեր ձևացած են փայտաքարի , և այս փայտաքարանց մէջ կը գտնուի նաև սաթ , որ որիշ բան չէ բայց եթէ ուետին մը , որ կը ծորէր այն հին ծառերէն և իր թեթեռութեան հա-



Ձկ 161 . Քեղկոնիկք :

մար ծովու խորշերու մէջ ժողովուելով ծածկուեր է հեղեղ զահողէ . այս սետինի կամ սաթի դիրտք շատ կը գտնուին Պալդիկ ծովուն մէջ : Բուսոց տեսակաց մէջ բաց ՚ի Նախահնակ ժամանակի մէջ եղածներէն , կան նաև Ուռենիք , Կաղամակք , Կնձնիք , Տղկիք , և այլն :




Ձկ 162 . Ծկրանախեցի :



Ձկ 163 . Աղաւարտախեցի :

175 . Կորահնակ հողք . — Անմիջապէս միջահնակ հողք կը յաջորդեն Նորահնակ հողքոց դիրտք , որոնք թէ ծովայինն են և թէ ձախնայինն : Ճախնայինն դիրտք կը տեսնուին մասնաւրապէս Գալլիոյ Պրէս գտաւառին մէջ , որոնք մինչեւ ՚ի Վալանս կը տարածուին . այս դիրտք կը կազմուին խիճէ , խճաքարէ , աւազէ և կաւէ . յորս լի են Խեցեմորթից և ուրիշ Ճամակաց բրածոյք , ինչպէս Քեղկոնիկք (Ձկ 161) ,


Ծիրանախեցի (Ջև 162), Աղաղաւարտախեցի (Ջև 163), Ճափա-  
ճախեցի, և այլն։ Խոկ ծովային գիրաք, որովք ձեւացած են  
գիշաւորապէս ստորին Ապենինեան բլուրք, կը կազմուին յա-  
ւազէ և՝ ի կրախառն մարդէ։ այս գիրտք ևս անթիւ Խեցե-  
մորթովք լի են, որոց 60 — 70 առ ٪ արդ Միջերկրականի  
մէջ կ'ապրին։ Այսպիսի գիրտք կը գտնուին նաև Սիկո-



24 164. *PhiLz:*

լիայի, Սարտենիայի, Կիցցայի, Վարսիվայի, Մոնթելիէլի կողմերը, յԱնգղիս, յԱմերիկա, յԱսիս և ընդհանուրապէս ծովեզերեայ տեղուանք, թէպէտ և հրաբղխային կողմեր ևս կը տեսնուին, ինչպէս Մարիսո լեռան մօռ։ Նորահնակ հող ամբարձումն կամաց կամաց եղած է. այս միջոցին մէջ բաղմաթիւ հրաբուղիք կային ժայթքման մէջ, որոց նիւթք խառնուելով ծովու նիւթոյ հետ՝ ձևացուցած են փշրաքար, ու

բոնք շատ առատ են Հռովմայ սահմանին մէջ, իտալիոյ ուրիշ կողմեր, ինչպէս նաև՝ ի Հայաստան, և մասնաւորապէս կիւմը բիթ բլուրն թերթաքարէ կազմուած են: Գարձեալ սյօ միջոցիս զանազան ծոցեր և լիճեր կը ձեւանային ցամաքայ երևնալով, և այլ և այլ տեղեր աղբիւրներ կը բղփէին՝ լի բնածխատ թթուուտավ և կրավ, ուստի և ձեւացան կրոյ դիրտեր: Այս շրջանիս մէջ եղած են Ալպեանց և մեր Այրարատայ լերանց ամբարձմանքն, որոնք ոչ եթէ մի միայն յեղափոխութենէ



24 165. 447:

Ճեւացած էն, այլ բաղմաթիւ շարժմանէ և ամրարձմանէ. առնկ շատ մեծ ընդարձակութիւն ունին, և ըստ սմանց մինչև յսկ Հիմնալյաց գոտեաց հետ հաղորդակցութիւն ունին:

176. **Բ**րածոյք Նորահնակ հողոց. — Այս ժամանակական տեղ մի և նոյն կենդանիք չէին բնակեր, որով յայտնի թէ կլիմայն տարբեր էր 'ի գանձազան աեղիս. և աշա Եւրոպից մէջ աւելի Փերք (Ձև 164), Ոնդեղիքը և Շմատամնային կենդանիք կը տիրէին որիշ փոքր կենդանեաց հնետ մէկտեղ. 'ի Հարաւային Ամբրիկա գլխաւորապէս Մե-

Ճագաղանի տեսակը կայլն, Վազրի, Առիւծի, և այլն, գաղանաց հետ մէկտեղ. իսկ՝ ի Հիւսիսային Ամերիկայ՝ Ոնդեղներ տեսակը, որքահագին մարմաց հետ փոքր ուղեղ ունեին, և դինեալ էին երեք զոյտ եղիւրներով: Ասոնցմէ զատ կային նաև



Ձև 166. Վազերաձի:

Ջիազետի, Զի, Ուղու, Վիթ (Ձև 165), Վազերաձի (Ձև 166), Հնդկաեղն (Ձև 168), և ձկանց նորանոր տեսակը կ'երևէին, ինչպէս Գայլաձուկն (Ձև 167): Իսկ բուսաբերութեան կողմանց ամենելին տարբերութիւն չկար արդի բուսաբերութենէն, և ամենելին տարբերութիւն չկար արդի բուսաբերութենէն,




Ձև 167. Գայլաձուկն:

բայց միայն յաջորդ երեք տոհմք չէին երեցած, այսինքն՝ Վարդաց միայն յաջորդ երեք տոհմք չէին երեցած, այսինքն՝ Վարդաց միայն յաջորդ երեք տոհմք չէին երեցած, այսինքն՝ Վարդաց միայն յաջորդ երեք տոհմք չէին երեցած, և կ'երեկի թէ ասոնք յատուկ տեսակը են չորրորդակ դարուն, յորում հետ զէտէ կ'աճին և կը բազմանան:

## ԳԼՈՒԽ Ե

### ՉՈՐՏՈՐԴԱԿ ԴԱՐ


177. Չորտորդակ դարու կարևորութիւնն. — Չորտորդակ դարու կոչմամբ կը հասկցուին այն հողերն՝ որոց դիրսք ձևացեր կամ նասոած են ընդ մէջ Նորահնակ և Արդի ըսուած հողոց. այս դիրտերն կրնան ըլլալ խաւանիստ կամ անխաւանիստ, ծովային կամ գետային, ճախնային կամ հեղեղաւային, հաստատուն կամ շարժուն և անշարժակից: Այս տե-



Ձև 168. Հնդկաեղն:

ասկ հողերն կը գտնուին յԵւրոպա, ՚ի հիւսիսային Ասիա, յերկուս Ամերիկայս, յԱւստրալիա և այլուր: Չորտորդակ դարու ուսումն ևս շատ կարեւոր է, մասնաւորապէս իր բազմաթիւ յեղափոխութեանց, զանազան երեւութից և կենդանեաց ու բուսոց կարգէ գուրս զարգացման պատճառաւ. և կատարելագոյն էակին արարշութեան համար: Չորտորդակ դարմ՝ երկու շրջան ունի Սասնապատ և Զրնեղեղային:


178. Ասռնապատ շրջան. — Այս շրջանին մէջ գանազան տեղեր բարձրանալով և ցածնալով՝ սաստիկ ցըտութիւն մը տիրած է երկրիս վրայ, որով սառոցյի կոյտերով ծածկուեցաւ Եւրոպից հիւսիսային կողմէն սկսեալ մինչև 'ի կեդրոնական տեղիս, այսինքն 'ի Գաղղիս և 'ի հիւսիսային Խտավիս, այսպէս նաև յԱսիս, յԱմերիկա և յԱւստրալիս. դոր ամենայն կերպով կը հաւաստեն կարկառք, ժայռից ակօս-



Ձ 169. Համարեր:

ներն, լերանց ողորկութիւնն և փայնութիւնն, և ուրիշ փոխադրուած մեծամեծ ժայռից կտորներ, որոնք Նորուեկիայէն 'ի Լեհաստան, 'ի Բրուսիա և յԱնգղիս ևս գնացած են, ինչպէս նաև Ալպեանց բարձրութենէն մինչև Ժիւրա լերանց կողերուն վրայ փոխադրուած են: Արդ այսպիսի յեղափոխութենէն ձեւացած դիրտերն մասնաւորապէս կը գտնուին 'ի Ականտինաւեան լերինս, 'ի Ռուսաստան, Մեծն Բրիտանիոյ եղերն, 'ի Հոլանտա, 'ի Տանիմարքա, 'ի Բրուսիա, 'ի հիւսիգերն կողմն Միացեալ Նահանգաց, 'ի Հայաստան Ամրարասցին կողմն Միացեալ Նահանգաց, 'ի Հայաստան Ամրարա-

տայ կողմերը, յորում սառնարանք մինչև 'ի ստորոտս կ'իջնէին, զոր յայտնի կը ցուցնեն տրափիտի ողորկութիւնն և զանազան ակօններն: Այս դիրտերն երբեմն մարդային են և



Ձ 170. Կոկորդէլս:

երբեմն աւելի կաւային, որոնք կը բոլանդակեն քիչ շատ խիճեր, ողորկեալ և փայլուն խճաքարեր ու կարկառք: Այս ժամանակս ևս շատ հրաբուղիք կը ժայթքէին երկրիս վրայ և ջրոց մէջ, յորոց կազմուեցան Ալպանիսց և Ասպաղինի լերինք. Մարիսս լեռն այս ժամանակս ջրէն դուրս ելաւ, յԱմբիկէ Սահրայի ծովու ցած յատակներն դուրս կը ցըցուէին, և հետ-




Ձ 171. Ցամաքային Սալամանդր:

զէետէ ներքին ծովերն կը նեղնային և վերջապէս կ'անհետանային. հետևաբար տաքութիւն մը կը սկսէր աւելնալ ցամաքաց աւելնալով, ուստի և սառնարանքն կամաց կամաց կը հալէին և յանձրե կը փոխուէին, և ասով Սալամազատ ըրջանն կը վերլանար. դարձեալ այս ցամաք երկիրներու բարձրանալէն Միջերկրականն անջատեցաւ 'ի կասպից ծովէն և Արալ լիճէն:

179. Ջրհեղեղային շրջան • — Ջրհեղեղային շրջանն կը սկսի սառնապատ շրջանէն վերջը, յորում ձորոց և խոր ու ընդարձակ այրերու մէջ նստած են զանազան գիրտեր, որք կ'ըսուին Ջրհեղեղային դիրոք :

Երկրաբանք երկու կարծիք ունին այս գիրտից կազմութեան վրայ. ըստ ոմանց՝ չերմ կիմնայի մը մէջ սառնարանք հալելով, ջրերն շատցեր են ու սկսեր են գեղանիլ այսոր անդր, և իրենց ուժգին ընթացից ժամանակ աւերելով և քանդելով սկսեր են ձևացրնել ձորոց մէջ զանազան խաւեր հետերնին տարած տղմով, կաւով, աւազով, խճաքարամքը և ուրիշ անյարակից նիւթերով: Խակ ըստ այլոց՝ այս ջրհեղե-




Զե 172. Ոնգեղջեր:

Զե 173. Խոնջայ:

Հայոց արքա Առաքայա ծցաւրու իւ : (Վաւաւայ առաջից):  
զային դիրտք ձևացեր են մեծամեծ ալեաց գեղմանէն, որոնք  
մեր երկիրս ծածկեր են, կամ յանկարծական ցամաքաց  
բարձրանալուն և կամ ցածնալուն պատճառու: Ահա այսպի-  
սի ջրհեղեղային դիրտեր կը գտնուին 'ի Հոենուեան ձորս,  
նմանապէս 'ի Լոմպարտիսա, 'ի Բիեմնոնդ, յԱւստրիա, 'ի  
Զուիցերի, յայլ և այլ վայրա Ամերիկոյ և Ասիոյ:

180. Բրածոյք ջրբարդակ դարու. — Սյս ժամանակս  
կային յԵրոպա Փիլեր, Մամնութ, Ոնգեղջերը, Ձիազե-  
տիք, մեծ Եղջերու Խուլանսիոյ, Յովլազք, շատ տեսակ Ա-  
ռիւծք, մեծ Արևի տեսակ մը. ասոնցմէ զատ կային դեռ ուրիշ  
մանր կենդանիք թէ ծովային, թէ ցամաքային և թէ լրային,  
յորոց ոմանք Ամերիկէի և Ասիոյ մէջ ապրած մի և նոյն տե-

սակ կենդանեաց նմանութիւն ունէին, և ոմանք ալ բոլորու-  
վին կը տարբերէին: ՅԱմերիկա կը գտնուէին մասնաւորա-  
պէս մեծամեծ Ճօռատք, զոր օրինակ Մեծագազան, Սեղա-  
նատամն, Մեծեղունդն, Գազանարուն, և մեծդի Խեցերէք.  
մի և նոյն ժամանակ կ'ասրէր նաև մեծ կատուի տեսակ  
մը, ինչպէս նաև զարմանալի և վիթխարի խոտակերք, զոր  
օրինակ Թոյնատամն, Զի, Երոպիոյ ձիերէն տարբեր, Այծա-  
ռուզ, հիւսիսային Եղջերու կամ Հոփնգեր (Զե 169), Կոկոր-  
դիլոս (Զե 170), Ապամանդր (Զե 171): Աւստրալիոյ մէջ




Զե 174. Ուզու:

կային Պարկաւորք, Ագելազք, Յիկնագազան, Կոկնատամն,  
որոց հասակն կը հաւասարէր Ոնգեղջերաց (Զե 172), և մեր  
արդի Ուզուի տեսակներ (Զե 174). կան նաև Խոնջայի անթիւ  
տեսակք (Զե 173), Յունոց ցեղն ալ հետզիւտէ նորանոր  
տեսակներ երևան, ինչպէս Հաւալուսն (Զե 175):

Այս ամենայն կենդանեաց մնացորդք Աւստրալիոյ, Ամերիկայի և Եւրոպիոյ մեծամեծ այրերու մէջ կը գտնուին, յորս կամ ջրերէն տարուած են հոն և կամ նոյն խոկ կենդանիք այն տեղուանք բնակած են, և ջրոց յորդութեան ժամանակ հօն տեղ ապահնած ըլլալով հոն թաղուած են:

181. Արդի հողք. — Արդի հողք ըսելով կը հասկնանք այն դիրտերն և խաւերն, որոնք կը ձեւանան արդ ևս գետոց բերաններուն մօտ, ծովոց, ճերու, գետոց յատակը, ծովեղերեայ և ճախճախուտ տեղուանք, ձորոց և դաշտաց մէջ, և



Հե 175. Հաւալուսն :

այն: Այս դիրտք կը կազմուին ընդհանրապէս գայլախապատէ, աւաղէ, տղմէ, մարդախառն կամէ, կիզահողէ, սնկաքարէ, բաւստէ և ուրիշ կենդանեաց մնացորդներէ: Ահա այս միջոցիս կը վերաբերին ծովային խեցուտ դիրտք, որոց մէջ կը տեսնուին մարդկային ձեռագործք, զոր օրինակ խտալիոյ, Շուետի, Անգլիոյ՝ ծովեղերեաց տեղուանքը, յԱնտիլեան կղզիս, յորում և մարդկային հին մնացորդք ևս կը գտնուին, և ուրիշ զանազան բարձրացած և ցածցած հողք մէջ:

## Ց Ա Ն Կ

Ն Ա Խ Ա Գ Լ Ի Մ Ե Լ Ի Ք

1. Սահման և առարկայ երկրաբանութեան. — 2. Բաժանումն երակրաբանութեան . . . . .

## Մ Ա Ս Ա Ա Ռ Ա Ւ Ի Ն

### Դ Լ Ո Ւ Խ Ա

#### Մ Թ Ի Ն Ո Լ Ր Ո Տ Ա Յ Լ Ի Ն զ օ ր ու թ ի ւ ն ք

3. Օդ. — 4. Բաղադրութիւն օդոյ. — 5. Ասպացուցութիւն վերսիս չեալ կազերու գյութեան յօդս. — 6. Ծանրութիւն օդոյ. — 7. Առաջ ձգութիւն օդոյ. — 8. Օդ լւծեալ ջոց մէջ. — 9. Օդոյ ազդեցութիւն ջոց շոփանալուն վրայ. — 10. Օդոյ ներգրածութիւն ամէն մարմնոց վրայ. — 11. Կիզումն. — 12. Ալյալութիւն ժայռից և մետաղց. — 13. Ներգրածութիւն կայծակի ժայռից վրայ. — 14. Շնչառութիւն. — 15. Ապականութիւն գործարանուր մարմնոց. — 16. Բարձրութիւն մթնոլորտի. — 17. Մթնոլորտին բարձրախառնութեան աստիճան՝ այլ և յյլ բարձրութեան մէջ. — 18. Մշնչենաւոր ձենանց սահման. — 19. Մարգուս բնակութեան բարձրագոյն տեղիք. — 20. Շարժմունք մթնոլորտի և հողմունք. — 21. Այլ և այլ հողմունք. — 22. Թաթառ. — 23. Մեքենական զօրութիւն հողմոց. — 24. Օդաքարինք կամ Ասուաք. — 25. Կարծիք և վարդապետութիւն օդաքարանց. — 26. Երկրաբանական նախնական ժամանակաց մթնոլորտ . . . . .

### Դ Լ Ո Ւ Խ Բ

#### Ջ Ր Ա Յ Լ Ի Ն զ օ ր ու թ ի ւ ն ք

27. Ջուր. — 28. Բաղադրութիւն ջուր. — 29. Ջրոյ բաղադրութեան փորձ. — 30. Բնաբանական զննազան վլճակ ջուր. — 31. Մեծագոյն խտութիւն ջուր. — 32. Բիւրեղացուն. — 33. Երկրիս վրայ տարուան

մը մէջ ինկած ջրոյ քանակն . — 54. Ի՞նչ կերպով կը բաշխուի Երկրիս  
վրայ մէտէորական ջուրն . — 55. Ծագումն աղթերաց , գետոց և լճեց .  
— 56. Ծովային աղջիւրք . — 57. Ներքին լիճք . — 58. Շթաբար և  
Պտկաբար . — 59. Ծադհատ աղջիւրներ . — 40. Արտեսան ջրհորք .  
— 41. Բաժմանումն ջորդ . — 42. Բաժմանումն համրային ջորդ . . . . . 23

ԳԼՈՒԽ գ.

၁၅၂

45. Ծով. — 44. Աղիութիւնն . — 45. Խորութիւնն ծովու . — 46. Ծովու յատակ . — 47. Փափորականութիւն . — 48. Ծովայինն ջրոց գունաւորութիւն . — 49. Մակընթացութիւնն և տեղատութիւն . — 50. Ծովայինն հոսանք . — 51. Ա.Հ.Կ. այլ հոսանք . — 52. Արագութիւնն ծովայինն հոսանաց . — 53. Յորութիւնն ջուրց , յեղափոխութիւնք . — 54. Ծովայինն երեսն անփոփոխութիւնն . . . . . 55.

ԳՐՈՒԹԻՒՆ Դ

## Զրոց մեքենական զօրութիւն

55. Ωρηγ μετεινακαν ροροπιθιέν. — 56. Ήερεινακαν αρισταρηίζ  
φοροπιθιέν. — 57. Βιουσακαν φυγισακηγιαρ. — 58. Τεινογ αλεγω-  
φιμοπιθιέν, εδεροι καινιδαμβινισινεροι ανιερεινοιθιανακαν. — 59.  
Βιουσακαν ζηη. — 60. Ωρηγ φοινισαρηρικαν ηγδν. — 61. Ζιεασοιμα  
φρονδαριανισορ πιριτεροι. — 62. Βιουσαρ . . . . . 52

qJohb b

Առնարանք

63. Սառնարանք . . . . . 64. Ծագումն սառնարանաց . . . . . 65. Բաժանումն սառնարանաց . . . . . 66. Հարժումն սառնարանաց . . . . . 67. Ելք Առաջի կ Սպիտակ լեռան . . . . . 68. Սառնարանաց ազդեցութիւն ժայռից կողերուն և ճորոց յատակին վրայ . . . . . 69. Ջեացումն Կարկառաց . . . . . 70. Հալումն սառնարանաց . . . . . 71. Հին սառնարանք . . . . . 72. Սառնապատ գար . . . . . 73. Հայաստանի սառնարանք . . . . . 65

ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԱՀԻՆ

74. Ընդհանուր կազմութիւն երկրիս. — 75. Երկրիս ձեն և  
կղզիացամբ միջոցի մէջ. — 76. Ծանրութիւն երկրի. — 77. Երկրիս մէ-  
ջին խտութիւնն. — 78. Երկրիս մակերևութիւն վիճակն. — 79. Դաշ-  
տավլսրը. — 80. Բլուգը և լերինք. — 81. Բարձրագոյն լըրինք. — 82.  
Շղթաքը լերանց. — 83. Գօտիք լերանց. — 84. Զոր. — 85. Երկրիս  
մակերևութիւն ժայռից և լերանց ազդեցութիւնն՝ զերտութեան բա-  
ժանման վրայ. — 86. Սողոսկումն զուգաշերն, զուգաձմեռն և զուգ-  
ամառն գծից. — 87. Եւրոպից արևելեան կողմանց ցրտութիւնն. —  
88. Ներքին ցամաքաց ցրտութիւն. — 89. Կլիմայից անփոփոխութիւնն.  
— 90. Բաժանումն կլիմայից. — 91. Հաստատուն, փոփոխական և տա-  
րապայման կլիմայ 75

ԳԼՈՒԽ Ե

## Երկրիս ներքին ջերմութիւն

92. Երկրիս ներքին ջերմութիւնն. — 93. Ջերմութեան անվիտուն  
կարգ. — 94. Երկրիս ներքին ջերմութեան ծագումն. — 95. Երկրիս  
ջերմութեան այժմեան արգասիք. — 96. Ջերմուկը. — 97. Ջերմուկ-  
ներու բարեխառնութիւն. — 98. Մեծն կայզէր Խալանտից. — 99.  
Ջերմուկներու մէջ բովանդակուած նիւթեր. — 100. կաղեղչէն լըդի-  
մունք. — 101. կաղ ջրածին բնածիստ. — 102. կաղ բնածիսկան  
թթուուտ. — 103. Ծճըմսահանք. — 104. Տաք գուրբեաց բդիումն. 95

ԳԼՈՒԽ Ը

ԵՐԿՐՈԱՉԱՐԺԸ

## ԳԼՈՒԽ Թ

### Հրաբուղիս

114. Հրաբուղիս . — 115. Երևոյթք հրաբըսաց . — 116. Հրաբըզ-  
խաց և երկրաշրժին մէջ եղած յարաբերութիւն . — 117. Ժայթքումն  
Ա. Գեղողայ կղզւոյն . — 118. Մեծն Մասկի մերին հրաշնչութիւն . —  
119. Վեսուվ . — 120. Ետնա . — 121. Ծովային հրաբուղիք . — 122.  
Հրաբըսային նիւթք . — 123. Լաւայից ջերմութիւն . — 124. Լաւայից  
կամաց կամաց պաշումն . — 125. Հրաբըսային ժայթքմանց կազմա-  
կերպութիւն . — 126. Հրաշնչութեան ոյժն . — 127. Մարած հրա-  
բուղիք . — 128. Հայաստանի մարած հրաբուղիք . — 129. Հրաբըզ-  
խային գլասառ տեղիք . — 130. Երկրի ջերմութեան հին արգասիք .  
— 131. Լերանց ամբարձմունք և ձեւացումն . — 132. Չորս ձեւացման  
վարդապետութիւն . — 133. Պլուտոնական ժայռից բիւրեղական կաշ-  
մութիւն . — 134. Այլակերպութիւն և հակումն ջրանիստ ժայռից .  
— 135. Մետաղական երակք . . . . .

### ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ԳԼՈՒԽ Ա

### Երկրիս Մակերեւութիւն վիմագրական կազմութիւն

156. Ժայռք . — 157. Հողք . — 158. Անխաւանիստ ժայռք . — 159.  
Պազարդային ժայռք . — 140. Հատաքարային ժայռք . — 141. Պորփի-  
րային ժայռք . — 142. Որձաքարային ժայռք . — 143. Խաւանիստ ժայռք .  
— 144. Այլակերպ ժայռք . — 145. Այլ ջանիստ խաւեր . —  
146. Ընդհանուր դասաւորութիւն հողք . — 147. Բաժանումն խա-  
ւանիստ հողք . . . . .

## ԳԼՈՒԽ Բ

### Առաջնակ դար

148. Առաջնակ Դարու կարեռութիւն . — 149. Գամկըեան հողք .  
— 150. Աիլուրեան հողք . — 151. Դևոնեան հողք . — 152. Ածխաբեր  
հողք . — 153. Բաժանումն Ածխաբեր հողք . — 154. Բրածոք Ածխա-

- բեր հողք . — 155. Տեսակք հանքածխոյ . — 156. Տեղիք հանքած-  
խոյ . — 157. Ծագումն հանքածխոյ . — 158. Փերմեան հողք . — 159.  
Բաժանումն և բրածոք Փերմեան հողք . . . . .

449

## ԳԼՈՒԽ Գ

### Երկրորդակ դար

160. Երկրորդակ Դարուն կարեռութիւն . — 161. Տրիասեան հողք .  
— 162. Բրածոք Տրիասեան հողք . — 163. Յուրայեան հողք . — 164.  
Լասի խաւեր . — 165. Զուրայրի խաւեր . — 166. Ընդհանուր նկա-  
րագութիւն Յուրայեան հողք . — 167. Լրային հողք . — 168. Բրա-  
ծոք կրահողք . — 169. Ստորաբաժանումն կրահողք . . . . .

## ԳԼՈՒԽ Դ

### Երրորդակ դար

170. Երրորդակ Դարու կարեռութիւն . — 171. Նախահնակ հողք  
ընդհանուր նկարագութիւն . — 172. Նախահնակ հողք բաժանումն  
և բրածոք . — 173. Միջահնակ հողք . — 174. Բրածոք Միջահնակ  
հողք . — 175. Նորահնակ հողք . — 176. Բրածոք Նորահնակ  
հողք . . . . .

## ԳԼՈՒԽ Ե

### Չորրորդակ դար

177. Չորրորդակ Դարուն կարեռութիւն . — 178. Սառնապատ Շըր-  
ջան . — 179. Ջրհեղեղային Շըրջան . — 180. Բրածոք չորրորդակ Դա-  
րու . — 181. Արդի հողք . . . . .

499

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱՐԻՑ ԴԱՍՎԳՐՈՅՑ

Աղելազ.	Kangourou.
Աղդարար (սոլուն).	Monitor.
Ալէձև Քեղիկան.	Spirifer undulatus.
Ածխաբեր Հողը :	Terrains carbonifères.
Ածխահանք :	Houillère.
Ածխաքար .	Anthracite.
Ակնաբռնստ .	Oculine.
Աղբեւր .	Fontaine.
Աղբեւր Ընդհատեալ .	Fontaine intermittente.
Աղուճակ .	Sel gemme.
Ամիարձումն .	Soulèvement.
Ամնեղիներ Հանգրիճաձև .	Ammonites nodosus.
» Պուրպարնի .	" Bucklandi.
» պակաձև .	" mammillatus.
» Վալքոդի .	" Walcoti.
Այլակերպ Ժայռք .	Roches métamorphiques.
Այլակերպութիւն .	Métamorphisme.
Այծուղու .	Lama.
Անգլուխ .	Acéphale.
Անդորձարանաւոր .	Inorganique.
Անզուղնթաց խաւ .	Couche discordante.
Անիսանիսու Ժայռ .	Roche non stratifiée.
Աշոարակաքար .	Turrilites.
Աշոարակաքար շղթայաձև .	Turrilites catenatus.
Աշոարակիկ .	Turritella.
Անտուանն (կակլամորթ) .	Anodont.
Անուախնեցի .	Trochus.
Ապականութիւն .	Putréfaction.
Առաճպական .	Élastique.
Առաճդութիւն .	Élasticité.
Առաջնակ դար .	Ère primaire.

Առաւելակին բնեռ.	Pôle positive.
Աստեղաբուս.	Corail astré.
Աստղակառապրյոյս.	Actine.
Ատամասուր.	Xiphodon.
Ատամաստերե.	Odontoptère.
Արաստոյ վէր.	Feldspath.
Արաւակարիկ.	Araucaria.
Արգասիք.	Effet.
Արմաւենապտեր.	Cycadée.
Արմաւենի.	Palmier.
Արքակաղնի.	Noisetier.
Աւազ.	Sable.
Աւազակոյտ.	Dune.
Բարձին.	Anatifère.
Բազկոսն.	Brachiopode.
Բաժակ.	Cratère.
Բաղադրութիւն.	Composition.
Բարդ.	Pile.
Բարեխառնութիւն.	Température.
Բարձրաթեփ Աէճվեռեան.	Acrolepis Sedgwickii.
Բարձրութիւն.	Hauteur.
Բաւզատամ.	Labyrinthodon.
Բիւրածակ.	Millépore.
Բիւրեղ.	Cristal.
Բիւրեղացում.	Cristallisation.
Բլուր.	Colline.
Բնաբանական.	Physique.
Բնագէտ.	Physicien.
Բնածիսական թթուուր.	Acide carbonique.
Բնածիսատ երկաթոյ.	Carbonate de fer.
Բնածախուկ.	Carbure.
Բնածախուկ ջրածնի.	Carbure d'hydrique.
Բնածուխ.	Charbon.
Բոլըրաբերան	Cyclostoma
Բորակածին.	Nitrogène.
Բուռ.	Gypse.
Բուսական հող.	Humus.
Բուստ.	Corail.
Բրածոյ.	Fossile.
Բրածոյ կորախեցի.	Grypheé fossile.
Գագաթն.	Sommet.
Գալարումն.	Affaissement.
Գալէն.	Galène.
Գալտակրուկն.	Patelle.

Գամգրեան շրջան .	Période Cambrien.
Գայլսիալ .	Silice.
Գայլսիկազաս .	Silicate.
Գաճ .	Plâtre.
Գաճաքար .	Gypse.
Գետնակ կամ Հող .	Terrain.
Գետնամամուռ .	Phasque.
Գլխոտնեայք .	Céphalopodes.
Գնտաձև .	Sphérique.
Գոգաւար .	Concave.
Գոլորշիք .	Vapeur.
Գործարանաւառը .	Organique.
Գոշաքար կամ Փետրաէցի .	Pennatule.
Գօսի .	Zone.
» այլբեած .	Zone torride.
» բարեխառն .	» tempérée.
» սառուցեալ .	» glaciale.
Դաշտավայր .	Plaine.
Դասաւորութիւն .	Classification.
Դար .	Ère.
Դդմատեսակ .	Cucurbitacée.
Դեգազ .	Squale.
Դեւոնեան շրջան .	Période Dévonien.
Դիօրիտ կամ Յայտաքար .	Diorite.
Դլին .	Dauphin.
Դոլոմիթ .	Dolomie.
Դրամիկեցական .	Nummulithique.
Դրամիկեցի .	Nummulithe.
Դրունք .	Portes.
Ելեկտրութիւն .	Électricité.
Եղեգնաքար .	Obsidiane.
Եղեցինիկ աւազուս .	Calamite aréneuse.
Եղերաբանեցի հանգրի ձաձև .	Ceratites nodosus.
Եղերաստան .	Cératodus.
Ենթագրութիւն	Hypothèse ou supposition.
Եռախորշաւոր .	Trilobite.
Եռանկիւնախեցի	Trigone.
Երակ .	Flon.
Երակ մետաղաբեր .	Veine métallifère.
Երկարթիթ .	Bilobe.
Երկայնութիւն .	Longitude.
Երկրնածխուկ կրոյ .	Bicarbure de chaux.
Երկդիմակ .	Amphibolite.

Երեւացիթ .	Phénomène.
Երկմեեան վահանաձուկն .	Rhombe diptère.
Երկրաբանական դար .	Époque géologique.
Երկրաբանութիւն .	Géologie.
Երկրագիտութիւն .	Géognosie.
Երկրագունդ .	Mappemonde.
Երկրաշարժ .	Terremote.
Երկրային ձգողութիւն .	Attraction terrestre.
Երկրորդակ դար .	Ère secondaire.
Երրորդակ դար .	Ère tertiaire.
Զանդուած .	Masse.
Զինկ .	Zinc.
Զուգահեռական .	Parallèle.
Զուգաձմռն .	Isochimène.
Զուգամառն .	Iothière.
Զուգաջերմ .	Iothérme.
Զուգնթաց խառ .	Couche concordante.
Զօրութիւն .	Force.
Զօրութիւն կենսական	Force vitale.
Ընդաբեր .	Légumineux.
Ընդուստական .	Verticale.
Թագառ .	Trombe.
Թաղանթ .	Membrane.
Թանձրաթև (Ճուկն) .	Amblypterus.
Թառափ (Ճուկն) .	Esturgeon.
Թանձրատերև (պտեր) .	Pecopterus.
Թառալում .	Rotation.
Թափանցանելի .	Perméable.
Թափիր .	Tapir.
Թերակղզի .	Presqu' île.
Թերպաքար .	Ardoise.
Թեւամատն (թանձրակտուց .	Pterodactylus crassirostris.
Թեւատերև .	Pterophyllum.
Թեփ (ձկանց) .	Écaille.
Թեփանառ .	Lepidodendron.
Թեփանորթ	Crustacé.
Թեփաքար .	Lepidolithe.
Թթուածին .	Oxigène.
Թթուուկ .	Oxide.
Թթուուտ .	Acide.
Թթուուտային ջուր .	Eau acide.

Թիթեղն .	Lame.
Թիկնագազմն .	Nototherium.
Թոյնատամին .	Toxodon.
Թորեալ ջուր .	Eau distillée.
Թումբ .	Dyke.
Թունկի ընդասուն .	Avicula socialis.
» նրբամաշկ .	» papyracea.
Փահանուկ .	Bromure.
Փայթքումն .	Éruption.
Փայռ .	Roche.
Փօռատ .	Édenté.
Իգուան .	Iguane.
Իգուանատամն .	Iguanodon.
Իլախիցի հակադարձ .	Fusus contrarius.
Իսլանտաքար .	Spath d'Islande.
Լայնաթև .	Euripterus.
Լայնութիւն .	Latitude.
Լաստենի .	Aulne.
Լեռն .	Montagne.
Լեղուակախեցի .	Lingula.
Լուզակաթև (լարցի) .	Pterigotus.
Լուսածին .	Phosphore.
Լոնուկի .	Platine.
Լու .	Algues.
Խալիզոն .	Limace.
Խայտաբղյտ մարդ .	Marne irisée.
Խանձող կամ լաւայ .	Lave.
Խառնագազմն .	Anaplothérium.
Խաւ .	Couche.
Խաւանիստ .	Sédiment.
Խեցեմորթ .	Coquillage.
Խեցերէ .	Tatou.
Խեցուտ կարդ .	Étage coquillier.
Խիճ .	Caillou.
Խիս հօտիսոյ .	Lycopode dense.
Խճաքար .	Gravier.
Խճուռամին .	Fermentation.
Խորշ .	Loge.
Խորչակ .	Simoun.
Խորութիւն .	Profondeur.
Խտութիւն .	Densité.

Ծածանողական .	Ondulatoire.
Ծածանումն .	Ondulation.
Ծակափոր կամ քարափոր .	Térébratule.
Ծակոտկէնութիւն .	Porosité.
Ծամիսա .	Zamias.
Ծանրութիւն .	Gravitation.
Ծառակերպ (ձուկն) ,	Dendrodes.
Ծառասունկ պտեր .	Fougère arborescente.
Ծիրանախեցի .	Purpurite.
Ծիր խաւարման .	Écliptique.
Ծխաշան .	Cheminée.
Ծծատամին .	Mastodonte.
Ծծըմբահանք .	Solfatare.
Ծծըմբային .	Sulfureux.
Ծծըմբատ .	Sulfate.
Ծծըմբատ կրոյ .	Sulfate de chaux.
» նատրոնի .	» de soude.
» կալց .	» de potasse.
» մագնչուայի .	» de magnésie.
Ծծըմբուկ .	Sulfure.
Ծծըմբուկ երկաթոյ .	Sulfure de fer.
Ծծըմբուտ ջրածնական .	Sulhydrigue.
Ծծումբ .	Soufre.
Ծովածոց .	Baie.
Ծոց .	Golfe.
Կազեղէն բդիումն .	Émanation gazeuse.
Կազմակերպութիւն .	Mécanisme.
Կազմութիւն .	Structure.
Կազ ջրածնին բնածխատ .	Gaz hidrogène carbonaté.
Կակլամորթ .	Mollusque.
Կակլի .	Tilleul.
Կաղամախի .	Peuplier.
Կաղնի .	Chêne.
Կայծակն .	Foudre.
Կայծփշոյին .	Amentacée.
Կանոնաւոր հողմն .	Vent régulier.
Կապար .	Plombe.
Կառաբոյս .	Zoothite.
Կատուածուկն .	Raie.
Կարիճ .	Scorpion.
Կարծիք .	Opinion.
Կարծրութիւն .	Dureté.
Կարկառ .	Moraine.
Կաւ .	Argile.

Կաւային խաւ .	Couche argileuse.
Կաւաքար .	Ocre.
Կաւիճ .	Craie.
Կաւ օդոյ .	Limon atmosphérique.
Կեղրոնախոյս (զօրութիւն)	Centrifuge.
Կեղրոնախոյն ջերմութիւն .	Chaleur centrale.
Կեղրոնաձիգ (զօրութիւն) .	Centripète.
Կենդինար .	Quintal.
Կիզումն .	Combustion.
Կիկաս .	Cycas.
Կիճ .	Marbre.
Կիսագունդ .	Hémisphère.
Կիտազգի .	Cétacée.
Կիտամողէս .	Cétasaurus.
Կիր .	Chaux.
Կիրճ .	Col.
Կիւրենախեցի ձաղարաձև .	Cyrena cuneiformis.
Կլիմայ .	Climat.
Կղղիացումն .	Isolement.
Կնքաւոր (բայս) .	Sigillaire.
Կնձնի .	Orme.
Կոբալտ .	Cobalt.
Կոկորդիլոս .	Crocodile.
Կոնաբեր .	Conifère.
Կոնիաս լիստերի .	Goniatites Listeri.
Կոնիաս պարուրաձև .	Goniatites evolutus.
Կոռիճ .	Grès.
Կոռեել .	Murex.
Կուլ .	Vache.
Կորախեցի .	Gryphee arquée.
Կորընթարդ .	Convexe.
Կունար բիստախեցի .	Productus calvus.
Կուուր .	Bitume.
Կպրանաւթ .	Pétrole.
Կռանիտ .	Granite.
Կռախեցի .	Cistidée.
Կրային կամ կաւճային հողք .	Terrains crétacés.
Կրաքար .	Calcaire.
Կրիայ .	Tortue.
Կրկնատամն .	Diprotodon.
Հազարագրամ .	Kilogramme.
Հազարամետր .	Kilomètre.
Հազարամետր .	Myriapede.
Հազարամեմ .	Fusion.

Հակումն.	Inclinaison.
Հաղորդել.	Conducteur.
Համբարու.	Siréide.
Հանրաթեք.	Holotypus.
Հանք.	Minéral, mine.
Հանքածուխ.	Houille.
Հասարակած.	Équateur.
Հաստատուն (մարմին).	Solide.
» կլիմայ.	Climat constant.
Հաստաձև.	Granulaire.
Հաստաքարյին ժայռ.	Granitoïde.
Հաստածակողին.	Prisme.
Հայի.	Frêne.
Հարիւրակալ.	Hectare.
Հաւալուսն.	Pélican.
Հեղեղահող.	Alluvion.
Հեղեղատ.	Torrent,
Հիւսուածք.	Texture.
Հեղուկ.	Liquide.
Հեղձաքար.	Schiste.
Հնագազան.	Paléothérium.
Հնամողէս.	Archéosaurus.
Հոգավարս.	Pentacrinus.
Հողկաեզն.	Zébu.
Հոլ.	Terre.
Հոլածութ.	Tourbe.
Հոլաքար.	Tuf.
Հոլմ.	Vent.
Հոլմաչափ.	Anémomètre.
Հոյագազան.	Dinothérium.
Հոսանք.	Courants.
Հոսումն.	Écoulement.
Հոլնդեր.	Renne.
Հորաբուղն.	Volcan.
Հրային.	Igné.
Հրային ժայռ.	Roche plutonique.
Հրանուտ.	Pyroxène.
Հրաքար.	Pyrite.
Հրուանդան.	Cap.
Հօտիսյ.	Lycopode.
Հայնաքար.	Phonolith.
Հգողոթիւն.	Attraction.
Հեան դաշտ.	Névé.
Հեռնագազան.	Cheirothérium.

Ջե.	Cheval.
Ջիագետի.	Hippopotame.
Ջեպի.	Prèle.
Ջիաձես.	Hippurite.
Ջիւն.	Neige.
Ջիւնապատ դաշտ.	Champ de neige.
Ջնամողէս.	Ichtyosaurus.
Ջոր.	Vallée.
Ջոր ամբարձման.	Vallée de soulèvement.
» բաժմանման.	» de séparation.
» գալքրման.	» d'affaissement.
» պատառման.	» de déchirement.
» քայքայման.	» d'érosion.
Ջուաքար.	Oolithe.
Ջուաքարյին կարդ.	Étage oolithique.
Ջուիկ (խեցի).	Ovula.
Ջուկն.	Poisson.
Ճախճախեցի.	Paludina.
Ճաճանչարդ կամ Ճառագայթաձև.	Radiaire.
Ճայթումն.	Explosion.
Ճնումն.	Pression.
Մագնիսիա.	Magnésie.
Մագնեսապեր խաւ.	Couche magnésifère.
Մագնիսական.	Magnétique.
Մակերևոյթ.	Surface.
Մակրնթացութիւն.	Flux.
Մակհաւասարութիւն.	Niveau.
Մամութ.	Mammouth.
Մամուռ.	Mousse.
Մամուակենդան.	Bryozaire.
Մամոլիական.	Moléculaire.
Մամիկ.	Molécule.
Մարդ.	Marne.
Մարդային խաւ.	Couche marneuse.
Մարդարտամայր.	Madréopore.
Մելնիա.	Mélania.
Մելուխիս.	Mégalichthys.
Մենամողէս.	Mégasaure.
Մենեղունզն.	Mégolopyx.
Մետաղագործական.	Métallurgique.
Մէանդրաբուստ.	Méandrine.
Մէդէորայ.	Météor.
Մթնոլորտ.	Atmosphère.

<b>Միկա .</b>	Mica.	<b>Որմաքարային ժայռք .</b>	Roches trachytiques.
<b>Միկաթերթաբար .</b>	Micaschiste.	<b>Որովայնառն .</b>	Gastéropode.
<b>Միջահնակ .</b>	Miocène.	<b>Ուղղեղջիւր .</b>	Orthrocère.
<b>Միջաւ .</b>	Insecte.	<b>Ուղու .</b>	Chameau.
<b>Միջերկրեալը .</b>	Méditerrané.	<b>Ուղենի .</b>	Saule.
<b>Մնացորդ .</b>	Résidue.	<b>Չելաքար .</b>	Ponce.
<b>Մշտնչենաւոր ձիւն .</b>	Neige perpétuelle.		
<b>Մողեգ .</b>	Lézard.		
<b>Մողեսակերպ .</b>	Plesiosaurus.	<b>Պազալդ .</b>	Basalte.
<b>Մոնախար .</b>	Cerithium.	<b>Պալենայ .</b>	Baleine.
<b>Մօնախար գեղեցիկ .</b>	Cerithium elegans.	<b>Պահակ .</b>	Portes.
<b>» փոփոխական</b>	" variabilis.	<b>Պոմիլիլան նաւախեցի .</b>	Nautilus pompilius.
<b>Մօրախեցի .</b>	Limnea.	<b>Պատառուած .</b>	Crevasse.
<b>Մուսկիմ հողմն .</b>	Mousson.	<b>Պատենաթեկ .</b>	Coléoptère.
<b>Ցաղթաթեճակ .</b>	Ischyopterus.	<b>Պարանոց .</b>	Isthme.
<b>Ցասպիս .</b>	Yaspe.	<b>Պարկաւորք .</b>	Marsupiaux.
<b>Ցործանալույս .</b>	Tournoyant.	<b>Պելլովֆոն (խեցի) .</b>	Bellorophon.
<b>Ցովազ .</b>	Pantère.	<b>Պղինձ .</b>	Cuivre.
<b>Ցուրայեան շրջան .</b>	Période jurassique.	<b>Պոլիպորք .</b>	Polypiers.
<b>Կայախեցի .</b>	Nérite.	<b>Պոսիդոնոմիա (խեցի) .</b>	Possidonomyia.
<b>Կաւախեցի .</b>	Nautil.	<b>Պորփիր .</b>	Porphyre.
<b>Կեարդ .</b>	Fibre.	<b>Պատեր .</b>	Fougère.
<b>Կետախեցի կամ Կետարդ .</b>	Bélemnite.	<b>Պակաքար .</b>	Stalagmite.
<b>Կիլսոնիա .</b>	Nilsonia.		
<b>Կէքէլ .</b>	Nickel.	<b>Ջայլամն .</b>	Autruche.
<b>Կշտարի .</b>	Charme.	<b>Ջերմութիւն .</b>	Chaleur.
<b>Կահոգրամաբուստ .</b>	Caryophillea.	<b>Ջերմուկը .</b>	Thermes.
<b>Կալափ .</b>	Foret.	<b>Ջերմուկը .</b>	Névroptière.
<b>Կանածուկն .</b>	Requin.	<b>Ջաղալ .</b>	Faugère névroptière.
<b>Կառաչիւն .</b>	Bruit.	<b>Ջղասերեկ պատեր .</b>	Chauve-Souris.
<b>Կեղազօդ .</b>	Conglomérat.	<b>Ջղչիկ .</b>	Vernis.
<b>Կթաքար .</b>	Stalactite.	<b>Ջնարակ .</b>	Eau.
<b>Կնչառութիւն .</b>	Respiration.	<b>Ջուր .</b>	Eau.
<b>Կոճի .</b>	Pin.	<b>Ջուր աղային .</b>	Eau saline.
<b>Կուշանաձև խեցի .</b>	Enerinite.	<b>Ջուր հանքային .</b>	Eau minérale.
<b>Կուշանազգի .</b>	Liliacée.	<b>Ջրածին .</b>	Hydrogène.
<b>Կըթնաւոր .</b>	Labiée.	<b>Ջրածճիք .</b>	Infusoire.
<b>Կըջանաւոր հողմն .</b>	Vent périodique.	<b>Ջրային ժայռք .</b>	Roches neptuniennes.
<b>Ողնեքար .</b>	Echinide.	<b>Ջրանիստ ժայռք .</b>	Roches stratifiées.
<b>Ոսորէ գողաւոր .</b>	Oxtrea carinata.	<b>Ջրհեղեղային շրջան .</b>	Période diluvien.
<b>Ոսորէ լըջանաւոր .</b>	Huitre exagyre.	<b>Ջրվեժք .</b>	Cascade.
		<b>Ուրսին .</b>	Résine.
		<b>Ունգեղջիւր .</b>	Rhinocéros.
		<b>Սալդ .</b>	Ambre.

<b>Ալամանդր .</b>	Salamandre.	<b>Տրամագիծ .</b>	Diamètre.
<b>Աշման .</b>	Définition.	<b>Տօլուտ .</b>	Domite.
<b>Աղաւարտախեցի .</b>	Casque.	<b>Ճարախեցի .</b>	Crinoïde.
<b>Անտրակ .</b>	Pecten.	<b>Յօղունատերև .</b>	Caulophylle.
<b>Անտրակ Լուդունեան .</b>	Pecten Lugdunensis.	<b>Փաղիանելլա .</b>	Phasianella.
<b>Առն .</b>	Glace.	<b>Փայլուկ .</b>	Blenda.
<b>Առնապատ շրջան .</b>	Période glaciaire .	<b>Փայտաքար .</b>	Lignite.
<b>Առնարան .</b>	Glacier.	<b>Փերմիան հողը .</b>	Terrains Permians.
<b>Արդատեսակ .</b>	Arachnoïde.	<b>Փիղ .</b>	Éléphant.
<b>Եեպատերև հրձեզրոս .</b>	Sphenoptère crénélée.	<b>Փշամորթ .</b>	Échinoderme.
<b>Միենիստ .</b>	Syénite.	<b>Փշամքար .</b>	Tufau.
<b>Միլուրեան շրջան .</b>	Période Silurien..	<b>Փող .</b>	Phoque.
<b>Միուէ .</b>	Sèche.	<b>Փոփովական կլիմայ .</b>	Climat variable.
<b>Միրէնս (Խեցի) .</b>	Cyrena.	<b>» հողմն .</b>	Vent variable.
<b>Միւգ .</b>	Brise.	<b>Քանակ .</b>	Quantité.
<b>Մողուկումն .</b>	Serpentement.	<b>Քառակուսի .</b>	Carré.
<b>Մողուն .</b>	Reptile.	<b>Քարափոր .</b>	Térébratule.
<b>Մողունգ .</b>	Éponge.	<b>Քեղեկոնիկ .</b>	Helix.
<b>Մտամբաձեռնեայք .</b>	Gasterocheni.	<b>Քլոռ .</b>	Chlore.
<b>Մտրածովայլն .</b>	Sous marine.	<b>Քուարց .</b>	Quartz.
<b>Մեարէմ .</b>	Mélanopsis.	<b>Օդ .</b>	Air
<b>Մրտակնեցի .</b>	Cardium.	<b>Օդաքար .</b>	Aérolithe.
<b>Մւաթուրծ .</b>	Méaphyre.	<b>Օլումիա .</b>	Oldhamia.
<b>Վագերաձի .</b>	Zèbre.	<b>Օձաքար .</b>	Serpentine.
<b>Վահանաձուկն .</b>	Rhombe.	<b>Օլականոր (պղո) .</b>	Annélide.
<b>Վանողութիւն .</b>	Répulsion.		
<b>Վիթ .</b>	Gazelle.		
<b>Վերջաթև ճնուտային .</b>	Pygopterus mandibularis.		
<b>Վոլցիա այլատերև .</b>	Voltzia heterophylla.		
<b>Վոլթայաչափ .</b>	Voltamètre.		
<b>Վտառք .</b>	Lacunes.		
<b>Տալ .</b>	Talc.		
<b>Տարազ .</b>	Formule.		
<b>Տարապայման կլիմայ .</b>	Climat excessif.		
<b>Տարասողուն .</b>	Telerpeton.		
<b>Տափածիր ժժմակ .</b>	Planorbis.		
<b>Տափաստան .</b>	Lande.		
<b>Տարբաբանական .</b>	Chimique.		
<b>Տարբալութիւն .</b>	Décomposition.		
<b>Տեղատութիւն .</b>	Reflux.		
<b>Տեսակ .</b>	Espèce.		
<b>Տեսակարար (կշիռ) .</b>	Spécifique.		
<b>Տիղմ .</b>	Fange.		



287

4<sup>o</sup> ի ի մ ա ն ո յ պ պ լ ե ս է ի  
կ ա ր ս ա ս , հ ա ւ ո վ ա ս ո վ ե ց , ո ւ ո ւ  
շ ա զ դ ա մ ի ք ո վ ա ր դ ա ր ա ր չ ի մ ա ր է ի մ  
պ լ ե ս է պ ա ր է , ո ւ ո ւ ո վ ա ս ո վ ե ց , ի մ ը  
կ ա վ ա ս ո վ ե ս է , ո ւ ո ւ ո վ ա ս ո վ ե ց  
պ ա ր է ի մ ա ր է :

Բ ա ր է

5920  
5921  
5922

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0070333

ՀՀ Ազգային գրադարան



NL0070332

ՀՀ Ազգային գրադարան



NL0070331

Q

1